ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ, Տ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

VIII

ԴԱՍԱՐԱՆ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1 ՄԱՐԴԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 1-2 ՄԱՐԴԸ ԵՎ ԻՐ ԾՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

Ա՜խ, երանի՝ ով մարդ կըգա
Ու մարդ կերթա անարատ:

Հովհաննես Թումանյան

Մենք, իհարկե, գիտենք «Թմկաբերդի առումը» հրաշալի ստեղծագործության վերջին տողերը: Հետաքրքիր է, սակայն, ձեր կարծիքը, թե ինչպես կարելի է հասկանալ բանաստեղծի խոսքերը: Մի՞թե նրա հերոսները՝ Թմուկ բերդի դալուկ տիրուհին, քաջ Թաթուլը կամ ահեղ Շահը որպես մարդ չէին աշխարհ եկել:

Ո՞րն է առհասարակ մարդու կոչումը:
Ի՞նչ հատկանիշներ պետք է ունենա մարդը:

Մի զվարճալի փոքրիկ պատմություն կա, որը ցույց է տալիս, թե որքան դժվար է մեկ ընդհանուր սահմանումով բնորոշել ***մարդ*** *հասկացությունը:*

Հին հույն նշանավոր իմաստասեր Պլատոնը մի անգամ իր աշակերտներին հարցնում է, թե ինչ է մարդը: Քանի որ նրա աշակերտները դժվարանում են պատասխանել այդ հարցին, Պլատոնն ինքն է փորձում տալ դրա պատասխանը՝ ասելով՝ մարդը երկոտանի կենդանի է, բայց առանց փետուրների:

Լսելով զրույցը՝ մեկ ուրիշ իմաստասեր փետրահան արած մի ճուտ է նետում դեպի Պլատոնը՝ ասելով. «Ահա, Պլատո՛ն, քո ներկայացրած մարդը»:

Հին ժամանակներից մինչև մեր օրերը գիտնականները, իմաստասերները, մտածողները փորձում են պարզաբանել, թե ով է մարդը, ինչ հատկանիշներ են նրան բնորոշ:

Փորձենք պարզաբանել ***մարդ*** հասկացության մի շարք բնութագրիչներ: Մարդուն բնութագրող ամենակարևոր հատկանիշներից մեկը կարելի է ձևակերպել այսպես.

ՄԱՐԴԸ ԲԱՆԱԿԱՆ ԱՐԱՐԱԾ Է

Բանականությունը (մտածելու, դատողություններ անելու կարողությունը) մարդու կարևոր հատկանիշներից է, կարելի է ասել՝ կարևորագույնը: Ինչո՞ւ ենք այդպես կարծում, ի՞նչն է այդպիսի համոզվածության պատճառը. գուցե այն տեսակետը, որ միայն մարդն է ընդունակ մտածելու, արվեստի գործեր ստեղծելու և այլն:

Այն, որ մարդը բանական էակ է, ոչ ոք կասկածի չի ենթարկում: Եկեք, սակայն, հարցը քննարկենք այլ տեսանկյունից: Իսկ գուցե ուրիշ կենդանի արարածներ նո՞ւյնպես օժտված են մտածելու կարողությամբ: Հաճախ զարմանում ենք, երբ շները, դելֆինները և այլ կենդանիներ հնարամտություն, ճարպկություն, դժվար իրավիճակից դուրս գալու կարողություններ են ցուցաբերում: Դրան ի պատասխան՝ ասվում է, որ այդ կարողությունները կապ չունեն մտածելու ունակության հետ, և որ կենդանիները ժառանգաբար, բնական ճանապարհով են ձեռք բերում դրանք, ինչպես սննդի, ջերմության և այլ պահանջմունքները բավարարելու ունակությունները: Գուցե և դա այդպես է: Դժվար է լիովին համոզված կարծիք հայտնել: Մի բան, սակայն, ակնհայտ է. այն, ինչը կարելի է ձևակերպել որպես մարդ արարածի մեկ այլ բնութագրիչ, այն է, որ...

ՄԱՐԴԸ ՆՈՒՅՆ «ՅԵՂԻՑ» Է, ԻՆՉ ԵՎ ՄՅՈՒՍ ԿԵՆԴԱՆԻ ԱՐԱՐԱԾՆԵՐԸ

Մարդը, ինչպես և մնացած կենդանի արարածները, բնական էակ է, որն ունի բնության օրենքներին համապատասխան, այսինքն՝ բնական ճանապարհով ձևավորված ու զարգացող մարմին և բնական պահանջմունքներ՝ քաղցն ու ծարավը հագեցնելը, ցրտից

ու շոգից պաշտպանվելը, սերունդ ունենալը և այլն: Այդուհանդերձ, մարդը *կենսաբանորեն ավելի զարգացած* է, քան մնացած կենդանիները: Խոսքը, իհարկե, առանձին կարողությունների մասին չէ՝ լսողություն, տեսողություն, հոտառություն, որոնցով կենդանական աշխարհի շատ ներկայացուցիչներ գերազանցում են մարդուն, այլ նրա կարողությունների ամբողջությունը և մանավանդ մտավոր կարողությունը:

Եվ երկրորդը, որ պակաս կարևոր չէ. մարդը կենդանական աշխարհի այլ ներկայացուցիչներից տարբերվում է իր *բնական պահանջմունքները* բավարարելու եղանակով, ձևով. ի տարբերություն կենդանիների, որոնք բնությունից օգտվում և բնության վրա ներգործում են անմիջականորեն, մարդն այդ նպատակով ստեղծում է զանազան գործիքներ ու սարքավորումներ, որոնք շարունակ կատարելագործում է: Դրան նպաստող գործոնները մի քանիսն են: Գլխավորը թերևս այն է, ինչը կարելի է ձևակերպել որպես մարդու կարևոր բնութագրիչներից մեկը:

ՄԱՐԴԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԷԱԿ Է

Իր ծննդյան օրվանից մինչև կյանքի վերջը մարդն ապրում է հասարակության մեջ, այսինքն՝ այլ մարդկանց հետ շփվելով, հաղորդակցվելով: Դա այդպես է, անգամ եթե տվյալ անձնավորությունը մենակյաց է, ամեն կերպ խուսափում է ուրիշների հետ շփումից: Դա այդպես է անգամ այն արտառոց դեպքերում, երբ որևէ մեկը դեպքերի բերումով հայտնվում է հեռավոր, անբնակ վայրում: Միևնույնն է, նա, ինչպես Ռոբինզոն Կրուզոն անմարդաբնակ կղզում, մտածում է, գործում, կազմակերպում իր առօրյա կյանքը այն ձևերով, միջոցներով, այն ամենի շնորհիվ, ինչ ձեռք էր բերել մինչ այդտեղ հայտնվելը՝ հասարակության մեջ ապրելով, սովորելով իր ծնողներից, ուսուցիչներից, ուրիշ մարդկանցից:

Բոլորովին այլ իրավիճակ կարող է ստեղծվել, երբ մարդը շատ փոքր, մանուկ հասակում հայտնվում է մարդկային հասարակությունից դուրս, ինչպես անգլիացի գրող Ռ. Կիպլինգի հանրահայտ հերոսը՝ Մաուգլին:

Մաուգլիի եղբայրները

Հայր Գայլը սպասեց, մինչև իր ձագուկները սկսեցին վազվզել, և Ցեղային Ժողովի գիշերը Մաուգլիի ու Մայր Գայլի հետ տարավ Խորհրդի Ժայռի՝ գլաքարերի խոշոր բեկորներով ծածկված գագաթը, ուր մինչև հարյուր գայլ կարող էր տեղավորվել:

Աքելան՝ խոշոր, ալեհեր Միայնակ Գայլը, որ իր ուժով և խելքով կառավարում էր Ոհմակը, պառկել էր՝ հասակով մեկ փռված իր ապառաժին: Ներքևում նստել էին քառասուն կամ ավելի գայլեր՝ .... սկսած ալեհեր վետերաններից, որոնք միայնակ կարող էին եղջերուին հաղթել, մինչև երիտասարդ, երեքամյա սև գայլերը, որոնք երևակայում էին միայն, թե իրենք էլ կարող են նույնն անել: .... Ժայռի մոտ համարյա չէին խոսում: Ձագուկները գլուխկոնծի էին տալիս ու վազվզում իրենց հայրերի ու մայրերի կազմած շրջանի կենտրոնում: Ժամանակ առ ժամանակ որևէ հասակավոր գայլ դանդաղ մոտենում էր մի ձագուկի, ուշադիր զննում էր նրան և անաղմուկ վերադառնում իր տեղը: Երբեմն մայրը իր ձագուկին դուրս էր բերում լուսնի լույսին, որպեսզի հավատացած լինի, որ նրան աչքաթող չեն անի: Աքելան կոչ էր անում իր Ժայռից.

— Դուք գիտեք Օրենքը, ձեզ հայտնի է Օրենքը: Լա՛վ նայեք, ո՛վ գայլեր...

Վերջապես Հայր Գայլը Մաուգլի–Գորտուկին, ինչպես անվանում էին երեխային, հրեց դեպի կենտրոն, ուր նա ծիծաղելով նստեց ու սկսեց խաղալ լուսնի լույսից փայլփլող քարերով:

Աքելան գլուխը չէր բարձրացնում, բայց շարունակում էր միօրինակ բացականչել.

— Լա՛վ նայեք:

Ժայռի հետևից լսվեց խուլ մռնչյուն. դա Շեր–Խանի ձայնն էր:

— Երեխան իմն է... Ի՞նձ տվեք նրան: Ազատ Ցեղի ինչի՞ն է հարկավոր Մարդու Երեխան: ....

Լսվեց խմբական խուլ մռնչոց, և չորսամյա մի ջահել գայլ Աքելային նետեց Շեր–Խանի հարցը՝ Ազատ Ցեղի ինչի՞ն է հարկավոր Մարդու Երեխան:

Ջունգլիների Օրենքի համաձայն, եթե վեճ է ծագում ձագին Ոհմակի մեջ ընդունելու իրավունքի մասին, նրա օգտին պետք է ձայն տան ամենաքիչը Ոհմակի երկու անդամ՝ չհաշված հայրն ու մայրը:

— Ո՞վ է խոսում երեխայի օգտին, — հարցրեց Աքելան: — Ազատ Ցեղից ո՞վ է խոսում:

Պատասխան չլսվեց, և Մայր Գայլը պատրաստվեց իր վերջին մարտին, եթե գործը կռվի հասներ:

Այդ ժամանակ Ցեղային Խորհրդի մեջ ընդունված միակ օտար գազանը՝ Բալուն՝ քնկոտ, դարչնագույն արջը՝ գայլաձագերին Ջունգլիների Օրենքը սովորեցնող ծեր Բալուն, ... բարձրացավ հետևի թաթերի վրա ու մռնչաց.

— Մարդու Երեխա՛, Մարդու Երեխա՛, — ասաց նա: — Ես պաշտպան դուրս կգամ Մարդու Երեխային: Նա մեզ վնաս չի պատճառի: Ես խոսելու շնորհք չունեմ, բայց ճշմարտություն եմ ասում: Թող նա վազվզի Ոհմակում և մտնի նրա մեջ մյուս

ների հետ միասին: Ես ինքս կզբաղվեմ նրա դաստիարակությամբ:

— Մեզ հարկավոր է ևս մեկ ձայն, — ասաց Աքելան: — Բալուն խոսեց, իսկ նա մեր երիտասարդության դաստիարակն է. ո՞վ կա Բալուից բացի:

Շրջանի մեջտեղ ընկավ մի սև ստվեր: Դա Բաղիրան էր՝ սև հովազը՝ թանաքի պես սև, հովազին հատուկ պսպղուն ցոլքով: Բոլորը ճանաչում էին Բաղիրային, և ոչ ոք չհամարձակվեց արգելք լինելու նրան: ....

— Օ՜, Աքելա՛, և դուք՝ Ազա՛տ Ցեղ, — մռլտաց նա, — ես իրավունք չունեմ ձեր ժողովին մասնակցելու, բայց Ջունգլիների Օրենքն ասում է, որ երբ կասկած է առաջանում նոր երեխայի վերաբերյալ, եթե խոսքը սպանության մասին չէ, ապա այդ երեխայի կյանքը կարելի է գնել որոշ վճարով: Իսկ Օրենքը չի որոշում, թե ով կարող է, և ով չի կարող առաջարկել այդ վճարը: Ճշմարիտ եմ ասում ես:

— Ճիշտ է, իրավացի է, — ձայն տվեցին երիտասարդ գայլերը, որոնք շարունակ տանջվում էին քաղցից: — Լսեք Բաղիրային: Երեխան կարող է գնվել վճարով: Այդպես է Օրենքը:

— Մերկ երեխային սպանելը խայտառակություն է: — Բացի այդ՝ նա կարող է ձեզ օգտակար լինել, երբ մեծանա: Բալուն խոսեց նրա օգտին: Բալուի օգտին ես ավելացնում եմ հենց նոր .... սպանած պարարտ մի ցուլ, եթե միայն դուք, Օրենքի համաձայն, Մարդու Երեխային Ոհմակի մեջ ընդունեք:

Տասնյակ բացականչություններ լսվեցին:

— Ի՞նչ վնաս: Միևնույնն է, նա մեռնելու է ձմեռային անձրևներից ....: Արևը կայրի նրան: Ի՞նչ վնաս կարող է պատճառել մեզ տկլոր Գորտուկը: Թող վազվզի Ոհմակի մեջ: Որտե՞ղ է ցուլը, Բաղիրա՛: Թող ընդունեն նրան:

Աքելայի խորունկ ոռնոցը ծածկեց ամեն ինչ: ....

Մաուգլին այնքան էր տարված իր քարերով, որ չնկատեց, թե ինչպես գայլերը հերթով մոտենում ու զննում էին իրեն: Վերջապես նրանք բլուրից իջան սպանված ցուլի մոտ. մնացին միայն Աքելան, Բաղիրան, Բալուն և Մաուգլիին որդեգրած գայլերը: Շեր–Խանը շարունակում էր մռնչալ խավարի մեջ՝ զայրանալով, որ Մաուգլիին չտվեցին իրեն:

— Մռնչա՛, որքան կուզես,— փնթփնթաց Բաղիրան բեղերի տակ: — Կգա ժամանակ, երբ այս մերկ արարածը կհարկադրի քեզ այլ կերպ ոռնալու, կամ ես լավ չեմ ճանաչում մարդկանց:

Տե՛ս Ռ. Կիպլինգ, «Մաուգլի»

Իրական կյանքում Մաուգլիի «բախտակիցները», եթե պատահաբար վերադառնում էին մարդկանց մոտ, ի վիճակի չէին լինում բնականոն հարաբերությունների մեջ մտնելու մյուսների հետ, իրենց պահում էին գայլուկների կամ այն կենդանիների նման, որոնց հետ ապրել էին: Նրանցից մի քանիսին է միայն մեծ դժվարությամբ հաջողվել յուրացնել մարդկային լեզվի և հաղորդակցության որոշ տարրեր: Դա ցույց է տալիս, որ մարդն իսկապես հասարակությունից դուրս չի կարող ձևավորվել, «մարդկային կերպարանք» ստանալ:

Եվ վերջապես, մարդու ձևավորումը, նրա էությունը բնութագրող, դարեր շարունակ տիրապետող ուսմունք է եղել կրոնական տեսությունը:

Աշխարհի գրեթե բոլոր կրոնական ուղղությունները մարդու ծագումը կապում են աստվածային արարչագործության հետ:

ԼՐԱՅՈՒՅԻՉ ՆՅՈՒԹ

Արարչագործության պատմությունը

Ի սկզբանէ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը: Երկիրն անձեւ ու անկազմ էր, խաւար էր տիրում անհունի վրա, և Աստծու հոգին շրջում էր ջրերի վրա: Եւ Աստուած ասաց. «Թող լոյս լինի»: Եվ լոյս եղաւ: Աստուած տեսաւ, որ լոյսը լաւ է, եւ Աստուած լոյսը բաժանեց խաւարից: Աստուած լոյսը կոչեց ցերեկ, իսկ խաւարը կոչեց գիշեր: Եւ եղաւ երեկոյ, եւ եղաւ առաւօտ՝ օր առաջին:

.... Աստուած ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանութեամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների և երկրի վրայ սողացող բոլոր սողունների վրայ»: .... Եւ Աստուած մարդուն ստեղծեց իր պատկերով. Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց: Աստուած օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցէք, բազմացէք, լցրէք երկիրը, տիրեցէք դրան, իշխեցէք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների ու երկրի վրայ սողացող բոլոր սողունների վրայ»:

Տէր Աստուած մարդուն ստեղծեց երկրի հողից,
նրա դէմքին կենդանութեան շունչ փչեց, և մարդը եղաւ կենդանի էակ:

Հին Կտակարան, Գիրք Ծննդոց

Աստվածաշունչն այդպիսով առանձնացնում է մարդուն և կարծես հորդորում նրան՝ ասելով՝ *մարդ Աստծո, ձկների, թռչունների, սողունների և այլ կենդանի արարածների ոչ միայն «տերն ու տիրակալն» ես դու, այլև Երկրի վրա նրանց հեռագա գոյության պատասխանատուն, քանզի Արարիչը քեզ է պարգևել բանականություն և իմաստություն:*

Մինչդեռ իր երկարատև պատմության, մանավանդ վերջին հարյուրամյակների ընթացքում մարդու գործունեության հետևանքով բնությունը հսկայական չափերի հասնող վնասներ է կրել: Երկրի երեսից վերացել են կենդանիների և բույսերի բազմաթիվ տեսակներ: Հարյուրամյակներ շարունակվող անտառահատումը, շրջակա միջավայրին հասցված վնասներից բացի, վտանգավոր իրավիճակ է ստեղծել մարդկանց առողջության համար:

Գիտակցելով ստեղծված իրավիճակի լրջությունը՝ շատ գիտնականներ, արվեստագետներ, հասարակական գործիչներ «տագնապի ահազանգ» են հնչեցնում՝ պետությունների ղեկավարների և միջազգային հանրության ուշադրությունը հրավիրելով բնության պահպանության խնդիրների կարևորության վրա: Վերջին տասնամյակների ընթացքում հրավիրվել են բնապահպանության խնդիրներին նվիրված միջազգային բազմաթիվ խորհրդաժողովներ, ընդունվել են հռչակագրեր, ստորագրվել են համաձայնագրեր, սակայն իրավիճակը շարունակում է տագնապալի մնալ: Շարունակվում է բնական պաշարների անխնա, անտնտեսվար շահագործումը, Երկրի մակերևույթի՝ ցամաքի ու ջրային ավազանների, անգամ երկրամերձ տիեզերական տարածության աղտոտումը: Դա նշանակում է, որ մարդիկ առաջվա պես իրենց տնտեսական շահը, առօրյա բարեկեցիկ կյանքը, առանձին դեպքերում՝ շռայլությունն ու ճոխությունն ավելի կարևոր են համարում, քան Երկիր մոլորակի՝ մարդկության «ընդհանուր տան» նկատմամբ խնամքն ու հոգատարությունը: Մինչդեռ միայն այդ հոգատար վերաբերմունքի դեպքում հաջորդ սերունդները նույնպես կունենան կյանքի և գործունեության բնականոն պայմաններ:

Գործնական առաջադրանք 1

Կազմակերպե՛ք քննարկում «Ինչպիսի՞ն է մարդու բնույթը» թեմայով։ Բանավեճին պատրաստվելու և սեփական տեսակետը հիմնավորելու համար օգտագործե՛ք դասանյութը (հիմնական գրվածքը և լրացուցիչ նյութերը), ինչպես նաև թեմային առնչվող այլ նյութեր։

Գործնական առաջադրանք 2

Կազմակերպե՛ք բանավեճ-քննարկում «Հնարավո՞ր է արդյոք կանխել կամ նվազեցնել մարդու գործունեության հետևանքով բնությանը հասցվող վնասները» թեմայով։ Փորձե՛ք առաջարկել որոշակի գործնական լուծումներ։

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞վ է մարդը տարբերվում կենդանական աշխարհի այլ ներկայացուցիչներից։ Ի՞նչն է բնորոշ միայն մարդուն։
2. Փորձե՛ք մեկնաբանել ստորև բերվող ասույթները.
   - «Մարդը հասարակությունից դուրս կա՛մ Աստված է, կա՛մ գազան»։ (Արիստոտել)
   - «Մարդն ավելի վատ է կենդանուց, երբ վերածվում է կենդանու»։ (Ռոբինդրանաթ Թագոր)

ԴԱՍ 3 ՍԱՐԴՈՒ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԸ

Առավոտյան արթնանալուց ու նախաճաշելուց հետո շտապում ենք դպրոց: Դուրս գալով փողոց՝ հանդիպում ենք աշխատանքի շտապող մարդկանց: Երեկոյան, միացնելով հեռուստացույցը, դիտում ենք ֆիլմեր, լսում երաժշտություն, ունկնդրում ճանաչողական տարբեր հաղորդումներ: Համակարգչի օգնությամբ անհրաժեշտ տեղեկույթ ենք ստանում, հաղորդակցվում մեր ընկերների ու բարեկամների հետ կամ պարզապես խաղում:

Ինչն է մարդուն ստիպում, դրդում ինչ-որ գործողություն կատարելու, որևէ բանով զբաղվելու: Մասնագետները այդ հարցին պատասխանելու համար շատ վաղուց ձևակերպել են առանձին եզրույթ (տերմին)՝ դրդապատճառ (շարժառիթ): Հասկանալի է, որ դրդապատճառի հիմքում ընկած է ինչ-որ բանի պահանջմունքը՝ սովորելու կամ աշխատելու ձգտումը, դրամ վաստակելու անհրաժեշտությունը, գեղագիտական կամ այլ հաճույք ստանալու ցանկությունը և այլն:

> *Նշվածից բացի ուրիշ ի՞նչ դրդապատճառներ կարող են լինել: Կազմակերպե՛ք ոչ մեծ քննարկում և փորձե՛ք լրացնել թվարկումը այլ դրդապատճառներով:*

Ամփոփելով քննարկումը՝ տեսնում ենք, որ մարդն ունի բազմաթիվ պահանջմունքներ, որոնք կարող են առնվազն երկու մեծ խմբերի բաժանվել՝ նյութական և ոչ նյութական: Ընդունված են նաև պահանջմունքների այլ դասակարգումներ: Առավել տարածվածներից մեկը հետևյալ բաժանումն է՝ *կենսաբանական, հասարակական* և *հոգեկան* պահանջմունքներ:

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐ

Մարդու կենսաբանական պահանջմունքները բազմատեսակ են՝ սննդի, ջրի, քնի, ցրտից ու տապից պաշտ-

պանվելու, ցավը հաղթահարելու, սերունդ ունենալու և այլն: Համանման պահանջմունքներ ունեն նաև մյուս կենդանի արարածները: Մարդն էլ մյուսների նման այդ պահանջմունքների մեծ մասն ունենում է՝ ծննդյան պահից սկսած: Անշուշտ, այդ առումով կան տարբերություններ մարդու և մնացած կենդանի արարածների միջև: Դրանք պայմանավորված են ոչ միայն մեծանալու, հասունանալու տարբեր արագությամբ: Կա մի շատ կարևոր գործոն ևս, որը պայմանավորված է մարդու՝ հասարակական էակ լինելու, նրա մշակութային կյանքի առանձնահատկությամբ:

Ինչո՞ւմ է դա արտահայտվում: Այսպես, օրինակ՝ երբ քաղցած ենք կամ ծարավ, ապա, ի տարբերություն այլ կենդանիների, չենք կծոտում հում միսը կամ խմում կեղտոտ ջրափոսերից: Բացի այդ՝ սերունդ ունենալու պահանջի բավարարումը, անձնական կյանքի շատ այլ կողմեր, ինչպես և իրենց մերկությունը մարդիկ ձգտում են թաքցնել, հեռու պահել «օտար աչքից»: Մարդուն մնացած կենդանական աշխարհից առանձնացնող կարևոր հատկանիշ է ամոթի զգացումը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Կինը տեսավ, որ ծառի պտուղը լավ է ուտելու համար, ակնահաճո է և գրավիչ՝ ըմբռնելու համար: Նա առավ նրա պտղից, կերավ և տվեց իր մոտ կանգնած ամուսնուն, և նրանք կերան: Երկուսի աչքերն էլ բացվեցին, և նրանք հասկացան, որ մերկ են: Նրանք թզենու տերևներն իրար կարեցին և իրենց համար գոգնոց շինեցին: Երեկոյան նրանք լսեցին Տեր Աստծու՝ դրախտում շրջագայելու ոտնաձայնը, և Ադամն ու իր կինը Տեր Աստծուց թաքնվեցին դրախտի ծառերի մեջ: Տեր Աստված կանչեց Ադամին ու ասաց նրան. «Ո՞ւր ես»: Ադամը պատասխանեց. «Լսեցի քո ձայնն այստեղ՝ դրախտում, ամաչեցի, որովհետև մերկ էի, և թաքնվեցի»: Աստված ասաց նրան. «Ո՞վ հայտնեց քեզ, թե մերկ ես»:

Աստվածաշունչ, Գիրք Ծննդոց

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ) ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐ

Մարդու այսպիսի պահանջմունքները կապված են նրա՝ հասարակության անդամ լինելու, հասարակության մեջ ապրելու հանգամանքի հետ: Յուրաքանչյուր մարդ ցանկանում է հարգանքի արժանանալ, ընդունված լինել մյուսների կողմից:

Ի՞նչ զգացում ենք ունենում, երբ հայտնվում ենք նոր միջավայրում՝ ուրիշ դասարանում, մարզական նոր թիմում կամ պարզապես անծանոթ մարդկանց խմբում: Ինչո՞ւ ենք անպայման փորձում ծանոթանալ, իսկ եթե շփումը երկարատև է լինում, նաև մտերմանալ խմբի մարդկանց հետ:

Ծանոթանալով կամ մտերմություն հաստատելով մյուսների հետ՝ կարծես մի իրավիճակից անցնում ենք մյուսին: Եթե ձևակերպենք դա, կարող ենք ասել, որ *կողմնակի մարդուց, օտարից* վերածվում ենք *յուրայինի՝ ծանոթի, մտերիմի, ընկերոջ:*

Մարդիկ, ելնելով իրենց հակումներից, ընդունակություններից, բնավորությունից, տարբեր եղանակներով են ձգտում հարգանքի արժանանալու, այլ կերպ ասած՝ արժանի տեղ զբաղեցնելու շրջապատում՝ ընկերական միջավայրում, դպրոցում, աշխատավայրում, բուհում և այլուր: Ոմանք դրան փորձում են հասնել իրենց աշխատանքով, մյուսների նկատմամբ հարգալից վերաբերմունքով, բարեկիրթ պահվածքով: Մյուսները, ընդհակառակը, կարծում են, թե այդ ամենը թույլ մարդկանց կամ փոքր երեխաներին է բնորոշ, իսկ իրենք պետք է զոռան, վախեցնեն, կոպիտ, գռեհիկ խոսքերով դիմեն մյուսներին, և արդյունքում մեծ հարգանքի ու պատվի կարժանանան: Երբեմն առանձին մարդիկ պատրաստ են անթույլատրելի, անգամ հանցագործ քայլերի դիմելու, միայն թե իրենց անունը հայտնի, «հռչակավոր» լինի: Հին աշխարհից մեզ է հասել Հերոստրատի անունը, ով հռչակավոր դառնալու համար այրել է Արտեմիս աստվածուհու տաճարը Եփեսոսում:

Կազմակերպեք փոքրիկ քննարկում հետևյալ հարցի շուրջ.

Ուրիշների հետ հաղորդակցվելու, նրանց հետ հարաբերություններ կառուցելու ո՞ր տարբերակն եք ավելի արդյունավետ, ավելի ճիշտ համարում: Նկատի ունենանք, որ «ճիշտն» ու «սխալը» այստեղ բավականին դժվար որոշելի են: Ուստի չգնանք պարզունակ, հեշտ լուծումներ գտնելու ճանապարհով:

ՀՈԳԵՎՈՐ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐ

Մարդու հոգևոր պահանջմունքները շատ բազմազան կարող են լինել: Առաջին հերթին դա իմացության, մեզ *շրջապատող աշխարհը ճանաչելու պահանջն* է: Այդպիսի պահանջ ունեին դեռևս պարզունակ կյանքով ապրող մեր հեռավոր նախնիները՝ նախնադարյան մարդիկ: Հակառակ դեպքում նրանք չէին կարող ստեղծել առաջին գործիքները, կացարանները, չէին իմանա բուսական ու կենդանական աշխարհի և ընդհանրապես շրջակա բնության շատ գաղտնիքներ, առանց որի՝ անհնարին կլիներ քաղաքակրթության, հետևաբար նաև ժամանակակից աշխարհի ծնունդը:

Մարդ արարածը ձգտում է *ճանաչելու ոչ միայն իր շրջակա աշխարհը, այլև ինքն իրեն:*

Մարդու հոգևոր պահանջմունքներից է նաև ստեղծագործելու, կյանքը փոխելու ձգտումը: Նա ձգտում է ոչ միայն պատկերելու, ներկայացնելու աշխարհը՝ նկարելու, երգեր ու գրքեր գրելու, այլև դրանով իսկ կարծես փորձում է վերափոխել իր միջավայրը, ստեղծել նոր աշխարհ:

Գործնական առաջադրանք

Ընթերցեք «Ռոբինզոն Կրուզո» վեպից ստորև բերվող հատվածը և պատասխանեք հարցերին:

1. Ինչո՞ւ էր Ռոբինզոնը օրեր շարունակ նավից կղզի տեղափոխում այնտեղ եղածը, ո՞ր կարիքներն ու պահանջմունքները հոգալու համար: Ի՞նչն էր նա ընտրում առաջին հերթին: Էլ ի՞նչ կտեղափոխեր նա, ձեր կարծիքով, եթե փոթորիկը չխանգարեր, և նավն ամբողջությամբ ջրասույզ չլիներ:

2. Ինչի՞ն ձեռնամուխ եղավ Ռոբինզոնը դրանից հետո: Ինչո՞ւ:

Առավոտյան շատ ուշ արթնացա: Պարզ եղանակ էր, քամին հանդարտվել էր, և ծովը դադարել էր մոլեգնելուց:

... Որոշեցի անհապաղ գնալ, բարձրանալ նավը, որպեսզի ուտելիքի և զանազան այլ իրերի պաշար վերցնեմ:

Ամենից առաջ ինձ մակույկ էր հարկավոր, որպեսզի ափ փոխադրեի այն իրերը, որոնք կարող էին պետք գալ ինձ: ...

Ընտրեցի մի քանի թեթև գերան, նախապես ամեն մեկը պարանով կապեցի, որպեսզի ջուրը չտանի, և նավից ցած գցեցի: Հետո իջա ցած, գերանները քաշեցի իրար մոտ, երկու կողմերից ծայրերն ամուր կապեցի իրար, վրայից էլ երկու–երեք տախտակ ամրացրի, որոնք դրել էի խաչաձև, և ստացվեց լաստի նման մի բան:

....Երկար մտածելու ժամանակ չկար, հարկավոր էր շտապել: Ամենից առաջ լաստի վրա դարսեցի նավում գտնված բոլոր տախտակները, հետո վերցրի երեք սնդուկ, որոնք պատկանում էին մեր նավաստիներին, փակերը կոտրեցի և պարունակությունը դուրս թափեցի: Ընտրեցի այն իրերը, որոնք ինձ ամենից շատ կարող էին պետք գալ, և արագ լցրի սնդուկները: Դրանցից մեկում դարսեցի ուտելիքը՝ բրինձ, պաքսիմատ, երեք գլուխ հոլանդական պանիր, երեք խոշոր կտոր այծի ապխտած միս, որ նավի վրա մեր հիմնական սնունդն էր, և գարու մնացորդը, որ Եվրոպայից տանում էինք նավում եղած հավերի համար. հավերը վաղուց էինք կերել, իսկ գարուց մի քիչ մնացել էր: Այդ գարին խառնված էր ցորենի հետ. դա շատ պետք կգար ինձ, բայց, դժբախտաբար, ինչպես հետո պարզվեց, մկները փչացրել էին:

Երկար որոնումներից հետո գտա մեր ատաղձագործի արկղը, և դա իսկապես մի թանկարժեք գյուտ էր, որը ես այն ժամանակ չէի տա ոսկով լի մի ամբողջ նավի: Այդ արկղը լաստի վրա տեղավորեցի նույնիսկ առանց մեջը նայելու, որովհետև ինձ շատ լավ հայտնի էր, թե ինչ գործիքներ կան այնտեղ:

Այժմ մնում էր, որ զենքի ու զինամթերքի պաշար վերցնեմ: Նավախցում գտա երկու հիանալի որսորդական հրացան և երկու ատրճանակ, որոնք տեղավորեցի լաստի վրա վառոդամանի, մի պարկ կոտորակի և երկու հին, ժանգոտ սրերի հետ միասին: Գիտեի, որ մեր նավի վրա երեք տակառ վառոդ կար, բայց չէի իմանում, թե որտեղ են պահված դրանք: Այնուամենայնիվ, երկար որոնումներից հետո երեք տակառն էլ գտնվեցին: Մեկը

թրջվել էր, բայց երկուսը բոլորովին չոր էին, և ես դրանք հրացանների ու թրերի հետ միասին իջեցրի լաստի վրա: Այժմ արդեն իմ լաստը բավականին բարձված էր, և հարկավոր էր ճանապարհ ընկնել: Լաստով առանց առագաստի, առանց ղեկի մինչև ափ հասնելը հեշտ բան չէր. բավական էր ամենաթույլ հանդիպակաց քամի, որ իմ ամբողջ գույքը շուռ գար, ջուրը թափվեր:

....Այժմ ինձ մնում էր շրջակայքը դիտել և բնակության հարմար տեղ գտնել, այնպիսի տեղ, ուր կարողանայի դասավորել իմ ունեցվածքը՝ չվախենալով, թե կփչանա: Դեռևս չգիտեի, թե որտեղ եմ ընկել, մայր ցամաք է, թե՞ կղզի: Արդյոք մարդիկ կա՞ն այստեղ: Գիշատիչ գազաններ կա՞ն, թե՞ ոչ: Ինձանից մի կես մղոն կամ քիչ ավելի հեռու երևում էր մի բարձր բլուր: Որոշեցի բարձրանալ այդ բլրի գագաթը, որպեսզի շուրջս դիտեմ: Վերցնելով մի հրացան, ատրճանակ և վառոդաման՝ ճանապարհ ընկա հետախուզության:

Բլրի գագաթը բարձրանալը դժվար էր:

Երբ բարձրացա, տեսա, թե ինչ դառը բախտ էր բաժին ընկել ինձ. ես կղզու վրա էի:

Սկսեցի ինձ համար վրան պատրաստել: Վրանը պատրաստեցի առագաստից և անտառում կտրած ձողերից: Ամեն ինչ, որ կարող էր արևից ու անձրևից փչանալ, փոխադրեցի վրանը, իսկ շուրջը դասավորեցի դատարկ արկղերն ու սնդուկները, որպեսզի մարդկանց և գազանների անակնկալ հարձակումից պաշտպանված լինեմ:

Վրանի մուտքը դրսից փակեցի մի մեծ սնդուկով, որ դրի կողքի վրա, իսկ ներսից փակեցի տախտակներով: Այնուհետև գետնին անկողին փռեցի, գլխատակիս երկու ատրճանակ դրի, կողքիս՝ մի հրացան և պառկեցի:

....Արդեն տասներեք օր էր, որ ես ապրում էի կղզում, և այդ ժամանակամիջոցում տասնմեկ անգամ եղել էի նավի վրա՝ ափ փոխադրելով .... ամեն բան, ինչ որ կարող էին բարձրացնել մարդու մեկ զույգ ձեռքերը: Չեմ տարակուսում, որ եթե խաղաղ եղանակը երկար տևեր, ես մաս–մաս կփոխադրեի ամբողջ նավը:

Տասներկուերորդ անգամ նավ բարձրանալու պատրաստություն տեսնելիս նկատեցի, որ քամի է բարձրանում: Չնայած դրան՝ սպասեցի, մինչև տեղատվությունն սկսվեց, և նորից նավ գնացի: Իմ նախորդ այցելությունների ժամանակ այնպես հիմնովին էի տնտղել մեր նավախուցը, որ կարծում էի, թե այնտեղ այլևս ոչինչ չի կարելի գտնել: Բայց հանկարծ աչքովս ընկավ երկդռնանի մի պահարան: Դարակներից մեկի մեջ գտա երեք ածելի, մի մեծ մկրատ և մի դյուժին դանակ–պատառաքաղ: Մյուս դարակում փող գտա՝ եվրոպական ու բրազիլական ոսկե և արծաթե դրամներ....:

— Անպե՛տք աղբ, — ասացի ես, — ինչի՞ս ես հարկավոր հիմա: Ոսկու մի ամբողջ կույտ սիրով կտայի այս գրոշանոց դանակներից յուրաքանչյուրի համար: Ի՞նչ պիտի անեմ քեզ: Ավելի լավ է՝ ծովի հատակը գնա: Եթե գետնին ընկած լինեիր, կռանալ վերցնել էլ չարժեր:

Բայց հետո մի քիչ մտածեցի, այդ փողը փաթաթեցի մի կտոր քաթանի մեջ և դրի գրպանս:

....Այժմ կարող էի ամբողջովին զբաղվել այն հարցով, որն ինձ անհանգստացնում էր առաջին իսկ օրվանից. ի՞նչ անեմ, որ ինձ վրա չհարձակվեն ո՛չ գիշատիչ կենդանիներ, ո՛չ վայրենի մարդիկ: Ինչպիսի՞ բնակարան շինեմ ինձ համար: Քարանձա՞վ փնտրեմ, թե՞ վրան խփեմ:

Վերջիվերջո որոշեցի շինել թե՛ մեկը և թե՛ մյուսը:

Ամենից առաջ ինձ հարկավոր էր, որ իմ բնակարանը պաշտպանված լինի թեժ արևից և գիշատիչներից, որ լինի այնպիսի տեղ, որտեղ խոնավություն չկա, որ մոտերքում խմելու ջուր լինի: Բացի դրանից՝ անպայման ուզում էի, որ իմ տանից ծովը երևա:

«Գուցե թե բախտը իմ փրկության համար մի նավ կուղարկի, — ասում էի ինքս ինձ, — բայց եթե ծովն աչքիս առաջ չլինի, կարող եմ փրկության առիթը փախցնել»:

Ինչպես տեսնում եք, հույսս կտրել դեռ չէի ուզում:

Տե՛ս Դանիել Դեֆո, «Ռոբինզոն Կրուզո»

Լրացուցիչ առաջադրանք

Ուսումնասիրեք Մասլոուի պահանջմունքների բուրգը և դրա օրինակով կատարե՛ք կարիքների, պահանջմունքների խմբավորում և վերլուծություն:



Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ է մարդ արարածը, անհիշելի ժամանակներից սկսած, ձգտում ճանաչելու ինչպես իր շրջակա աշխարհը, այնպես էլ իրեն: Մարդու ինչի՞ն է պետք իր մասին իմանալը:

2. Ինչպե՞ս է արտահայտվում նոր միջավայր, նոր աշխարհ ստեղծելու մարդու ձգտումը: Մի՞շտ է արդյոք, որ այդ ձգտումը դրական հետևանքների է հանգեցնում: Ձեր կարծիքով՝ ի՞նչն է դրա պատճառը:

Մեկնաբանե՛ք ստորև բերված ասույթը.

«Մարդը միակ կենդանին է, որը շիկնում է կամ որոշակի իրավիճակում պետք է դա անի»: Մարկ Տվեն

ԴԱՍ 4 ԽՄԲԵՐ, ՇԵՐՏԵՐ, ՀԱՍԱՅՆՔՆԵՐ

Թռչունին՝ բույն, սարդին՝ ոստայն,
մարդուն՝ ընկերակցություն:

Ու. Բլեյք

Մարդը, ինչպես հայտնի է, հասարակական էակ է: Հասարակության մեջ են ձևավորվում նրա պահանջմունքները և դրանք բավարարելուն ուղղված հմտություններն ու կարողությունները: Հասարակություն ասվածը վերացական հասկացություն չէ: Մեզանից յուրաքանչյուրը, լինելով ընդհանրապես մարդկային հասարակության անդամ, միաժամանակ որևէ ընտանիքի, համայնքի, ազգի ներկայացուցիչ է: Այսպիսով, ծննդյան օրվանից սկսած, մեծ ու փոքր այս կամ այն խմբի անդամ ենք: Այդ խմբերը շատ են և տարբեր:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ) ԽՄԲԵՐ

Փորձենք առանձնացնել այն խմբերը, որոնք մենք ենք ընտրել, և այն, որոնցում կանք մեր կամքից անկախ:

Գործնական աշխատանք

Տետրում լրացրեք աղյուսակը

Խմբեր, որոնցում կանք մեր կամքից անկախ	Խմբեր, որ մենք ենք ընտրել

Այժմ անդրադառնանք սյունակներում թվարկված խմբերին:

Առաջին սյունակում կարող են լինել հետևյալ օրինակները.

• աղջիկներ կամ տղաներ,

•գյուղացիներ կամ քաղաքացիներ,

•զինակոչիկներ կամ քաղաքացիական անձինք,

•հայեր, հույներ կամ հնդիկներ,

• Հայաստանի, Վրաստանի կամ Լեհաստանի բնակիչներ և այլն:

Երկրորդ սյունակում կարող են լինել այլ օրինակներ.

• ուրախների և հնարամիտների ակումբ,

• երաժիշտներ, նկարիչներ, մարզիկներ,

• ուսանողներ, բանվորներ, հոգևորականներ,

•վարորդներ, շինարարներ, դարբիններ,

• զբոսաշրջիկներ, ճամբարականներ և այլն:

Կարող են լինել նաև խմբերի այլ բաժանումներ:

Քննարկման ընթացքում ասվածին ընդհանուր անդրադարձ կատարելու դեպքում կարելի է արձանագրել, որ մարդկանց խմբերը կարող են առանձնացվել՝

ա. ըստ սեռի և տարիքի,

բ. ըստ բնակության վայրի,

գ. ըստ զբաղմունքի, մասնագիտության,
դ. ըստ ազգային պատկանելության,
ե. ըստ կրոնական պատկանելության,
զ. ըստ նախասիրության և այլն:

Բերված թվարկումները ցույց են տալիս, որ մենք ողջ կյանքի, գործունեության ընթացքում այս կամ այն *հասարակական (սոցիալական) խմբի* անդամ ենք:

Իսկ ինչո՞վ է պայմանավորված հասարակական խմբերի գոյությունը, ինչպե՞ս են մարդիկ հայտնվում այս կամ այն խմբում:

Հասարակությունը, հասարակական հարաբերություններն ուսումնասիրող գիտություններից մեկի ներկայացուցիչները՝ *սոցիոլոգները*, կարծում են, որ հասարակական խմբերի բազմազանությունը նախ և առաջ հետևանք է մարդկային գործունեության հիմնական տեսակների բազմազանության (տնտեսական, քաղաքական և այլն): Օրինակ՝ տնտեսական գործունեությունը հանգեցրել է հարուստների, միջին խավի և աղքատների գոյությանը, իսկ քաղաքական գործունեությունը՝ առաջնորդների և հետևորդների, ղեկավարների և ղեկավարվողների առաջացմանը: Մտավոր գործունեության առանձնանալու արդյունքում ի հայտ են եկել մտավոր (մանկավարժ, բժիշկ, նկարիչ, փաստաբան և այլն) և ֆիզիկական (շինարար, հողագործ, արհեստավոր և այլն) աշխատանքով զբաղված մարդկանց խմբերը:

Հասարակական տարբեր խմբերի գոյությունը պայմանավորված է նաև մարդկանց ապրելակերպի, մշակույթի, հասարակական նորմերի և արժեքների բազմազանությամբ:

Յուրաքանչյուր մարդ ցանկության դեպքում կարող է լինել այն խմբում, որտեղ իրեն զգում է անկաշկանդ, որտեղ գնահատված է և պաշտպանված, որտեղ կա ընդհանուր նպատակ և այլն:

Գործնական աշխատանք

Ենթադրենք՝ Երկիր մոլորակից ոչ հեռու նոր մոլորակ է հայտնաբերվել: Այդ մոլորակը շատ նման է Երկրին՝ մի տարբերությամբ միայն. բնակեցված չէ: Պատկերացնենք, թե մենք ենք լինելու մոլորակի առաջին բնակիչները: Սակայն նոր բնակավայր ստեղծելը հեշտ բան չէ, և վերաբնակիչներին օգնելու նպատակով արշավախմբի կազմում ընդգրկվելու են ***խորհրդատու մասնագետներ:*** Խորհրդատուների ընտրություն կատարվելու է հետևյալ ցուցակից.

- 45 տարեկան, տարրական դասարանների ուսուցչուհի
- 41 տարեկան, գյուղատնտես
- 56 տարեկան, ատաղձագործ
- 27 տարեկան, կենսաբան
- 34 տարեկան, խոհարար
- 37 տարեկան, բժիշկ
- 32 տարեկան, ճարտարագետ
- 51 տարեկան, հոգևորական
- 26 տարեկան, մարզիկ, աշխարհի չեմպիոն
- 24 տարեկան, երաժիշտ
- 49 տարեկան, շինարար
- 32 տարեկան, երկրաբան
- 42 տարեկան, փաստաբան
- 29 տարեկան, բնապահպան
- 38 տարեկան, զինվորական:

Ներկայացված ցանկից պետք է ընտրվի մոտ կեսը: Կատարեք ընտրություն և կազմեք ***խորհրդատուների*** խումբը: Պարզաբանեք ընտրություն կատարելու ձեր սկզբունքը:

Ասույթ

Որ խմբին էլ որ պատկանելիս լինենք, պետք է ունենանք սեփական արարքների հանդեպ պատասխանատվության զգացում:

ՀԱՄԱՅՆՔ

Համայնք հասկացությունը տարբեր իմաստներ կարող է ունենալ:

Ստորև բերվող օրինակներում ինչ է նկատի առնվում միևնույն *համայնք* բառը գործածելով:

- Առաջիկայում այստեղ համայնքի ղեկավարի ընտրություն կլինի:
- Դպրոցի ծնողական համայնքը համաձայն չէ այդ առաջարկին:

Եվրոպական համայնքն իր աջակցությունն է հայտնում մեր երկրում ժողովրդավարական ընտրական համակարգի հաստատման ուղղությամբ արվող քայլերին:

Հասկանալի է, որ առաջին դեպքում, *համայնք* ասելով, նկատի է առնվում տեղական ինքնակառավարման մարմին, երկրորդ դեպքում՝ տվյալ դպրոցում սովորողների ծնողների խումբը, երրորդ դեպքում՝ Եվրոպական միության մեջ մտնող երկրների խումբը:

Տվյալ դեպքում, սակայն, *համայնք* ասելով, հասկանում ենք տարածքային հիմունքով միավորված, այսինքն՝ միևնույն գյուղում, քաղաքում, թաղամասում ապրող մարդկանց խումբը: Դա, որպես կանոն, համընկնում է վերևում նշված առաջին՝ վարչատարածքային միավորի իմաստին: Կարող է նաև չհամընկնել, որովհետև վարչական առումով համայնքը կարող է մեկից ավելի բնակավայր ընդգրկել: Ցանկացած դեպքում կարևորը ոչ այնքան բնակավայրի չափերն են կամ այնտեղ ապրող մարդկանց թվաքանակը, որքան այն, որ այդ մարդիկ համարեն իրենց մեկ *միասնական հանրության՝ համայնքի անդամներ:* Միայն այդպիսի գիտակցությամբ միավորված համայնքը տեղական և ընդհանուր հասարակական ու պետական ջանքերի զուգակցությամբ կարող է առաջադրել և լուծել իր համար կենսականորեն կարևոր խնդիրներ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Ընթերցելով հայազգի մեծանուն գրողի ստեղծագործությունից ստորև բերվող հատվածը՝ վերհիշեք որևէ հիմնախնդիր, որը լուծվել է ձեր համայնքի ընդհանուր ջանքերով:

Ֆրեզնոն

Մեր քաղաքի սրտից երկու մղոն քայլելով՝ մարդ կարող էր գալ հասնել անապատ և զգալ անմարդաբնակ, երկրի երեսին կորած–մոլորած, մարդկային մտքի կարեկցանքից կորստյան մատնված վայրի մենությունը: Մեր քաղաքի ծայրամասում կանգնելով՝ մարդ կարող էր զգալ, որ մենք անապատի լռության ու մենու-

թյան մեջ ենք հիմնել մեր բնակատեղին ու փողոցները, և որ մենք անվեհեր գործ ենք արել: Եկել ենք պատմություն չունեցող այս չոր ու ցամաք վայրը, հանգրվանել ենք այստեղ ու կառուցել մեր տները և անշտապ արարում ենք մեր կյանքի լեգենդը: Ջրին հասնելու համար փորում ու պապակ հողով առվակներ էինք հոսեցնում: Տնկում ու մշակում էինք և կանգնած էինք մեր ձեռակերտ այգու կենտրոնում:

Մեր ծառերը դեռևս բարձր չէին բավարար ստվեր նետելու համար, և մենք մի քանի տեսակ ծառեր էինք տնկել, որ պետք է տնկած չլինեինք, քանի որ դրանք դիմացկուն չէին ու երբեք մի դար ապրել չէին կարող, այդուհանդերձ սկիզբը լավ էինք դրել: Մենք ոչ մի նշանավոր մարդ չէինք թաղել, քանի որ մեծություններ արարելու ժամանակ չէինք ունեցել: Սաստիկ զբաղված էինք՝ ջուրն անապատ հասցնելով: Մեր քաղաքի վրա չէր սավառնում որևէ մեծ մտքի շուք: Սակայն ունեինք խաղահրապարակ, որը կոչվում էր «Կոսմոս»: Ունեինք հանրակրթական դպրոցներ: Մեր քաղաքի միջով երկու կարևոր երկաթգծեր էին անցնում, և որոշ առումով մենք մեզ լիովին կորուսյալ չէինք զգում: Երկու լրագիր, մի քաղաքային լսարան և հասարակական գրադարան ունեինք, որի դեռ մեկ երրորդն էր գրքերով լի: Ունեինք դասախոսության ակումբ: Քրիստոնեականից զատ՝ ունեինք ամեն տեսակի այլ եկեղեցի: Մեր քաղաքի ամեն տուն իր Աստվածաշունչն ուներ, իսկ բազում տներում դրանից չորս հատ կար: Մարդ կարող էր համարել, որ մեր քաղաքը գեղեցկաշեն է:

Քաղաքագլուխ ունեինք, բայց նա նշանավոր անձնավորություն չէր և քաղաքագլխի տեսք էլ չուներ: Նա ագարակատիրոջ տեսք ուներ: Նա ագարակատեր էր որ կար, բայց քաղաքագլուխ էր ընտրվել: Մեզանում երևելի մարդիկ չկային, սակայն բոլորս միասին գրեթե երևելի էինք:

Վիլյամ Սարոյան,
«Ֆրեզնոն»

Առաջադրանք.

Տետրում լրացնել աղյուսակի երկրորդ սյունակը:

Խմբեր

N	*Խմբերի բաժանման հիմքը*	*Նկարագրություն.* *Ինչպե՞ս է տվյալ խմբում լինելն ազդում հասարակական կյանքի տարբեր իրավիճակներում (աշխատանքի ընդունվել, պաշտոնի նշանակվել, շրջազայության մեկնել և այլն) կողմնորոշվելու վրա*
1	Կին — տղամարդ	

2	Պատանի — երիտասարդ –չափահաս — տարեց	
3	Գյուղաբնակ — քաղաքաբնակ	
4	Սոցիալապես անապահով — ապահովված	
5	Այլ հիմունքով առանձնացված …	

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞վ է պայմանավորված հասարակական խմբերի ձևավորումը:
2. Մարդկանց ապրելակերպի, մշակույթի, հասարակական նորմերի և արժեքների բազմազանությունը ինչ ազդեցություն է ունենում հասարակական խմբերի ձևավորման վրա:
3. Ի՞նչ է պետք ձեր կարծիքով, որպեսզի համայնքի անդամները կարողանան իրականացնել իրենց համար կարևոր խնդիրները:

ԴԱՍ 5 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ

Նախորդ դասում անդրադարձանք այն խնդրին, որ մարդը, ծննդյան օրվանից սկսած, մեծ ու փոքր տարբեր խմբերի (ընտանիք, համայնք, ազգ) ներկայացուցիչ է լինում: Այդ խմբերում անվերջ հաղորդակցվում ենք, համագործակցում, երբեմն հակամարտության մեջ հայտնվում: Մարդկանց միջև *հաղորդակցությունը* կարող է լինել հաճելի կամ տհաճ, ձանձրալի կամ հետաքրքիր:

Մեզանից յուրաքանչյուրն ունի բազմաթիվ անձնական շփումներ:

Ձեր կարծիքով՝ ի՞նչը կարող է անձնական շփումների պատճառ դառնալ:

Ամփոփելով փոքրիկ քննարկումը՝ կարող ենք առանձնացնել մի շարք պատճառներ: Այդ շարքում կարևորներից մեկն է հետաքրքրությունը:

Մասնագետները *հետաքրքրություն* հասկացությունը տարբեր կերպ են սահմանում: Բերենք դրանցից մեկը. *հետաքրքրությունը անձի համար արժեքավոր կամ գրավիչ առարկայի, երևույթի նկատմամբ հատուկ վերաբերմունքն է, որը դրսևորվում է որպես դրա հետ առնչվելու պահանջարկ, գիտակցված նպատակ և դառնում որոշակի գործողություններ կատարելու դրդապատճառ, իսթանիչ ուժ:*

Համադասարանցիների հետ մեր շփումը կարող է ունենալ տարբեր պատճառներ: Օրինակ՝ ապրում ենք հարևանությամբ, նույն ժամին միասին գնում ենք դպրոց, հաճախում ենք նույն խմբակը կամ ակումբը, ունենք ընդհանուր նախասիրություններ, փոխադարձ հարգանք ու համակրանք և այլն:



Դյութագորաս

Առավոտյան արթնանալիս հարցրու՝ ես ինչ պետք է անեմ, երեկոյան քնելուց առաջ՝ ես ինչ եմ արել:

Այսպիսով, կարող ենք ասել, որ միմյանց նկատմամբ *հետաքրքրության* հիմքում, որպես կանոն, ընկած է մեր *նախասիրությունների, հայացքների, պահանջմունքների և այլ հատկանիշների ընդհանրությունը:*

Այդպիսի հատկանիշներ են նաև արտաքին տեսքը, վարվելաձևը, մտավոր կարողությունները, ֆիզիկական (մարմնական) տվյալները, նախասիրությունները, ընկերասիրությունը, նվիրվածությունը, հավատարմությունը, ճշմարտասիրությունը, արդարության զգացողությունը, հայրենասիրությունը և այլն:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Թվարկված և բազմաթիվ այլ հատկանիշների հիման վրա ձևավորվում, կայանում է մարդկանց *համագործակցությունը*, այսինքն՝ որևէ ուղղությամբ կամ որոշակի խնդիր լուծելուն ուղղված համատեղ գործունեությունը:

Համագործակցության կարևոր արդյունքը անձի զարգացումն ու անհատականության ձևավորումն է: Ձևավորված և ինքնավստահ մարդն ավելի հեշտ է համագործակցում՝ ընդունելով խմբի բոլոր անդամների մասնակցության իրավունքը: Համագործակցությունը զարգացնում է արդյունավետ փոխհարաբերվելու կարողություններ, որոնց կարիքն ունեն բոլորը: Դրանք նպաստում են ուրիշների կարծիքը լսելուն և հարգելուն, տարաձայնությունները խաղաղ կարգավորել կարողանալուն, փոխօգնությանն ու հանդուրժողականությանը: Արդյունավետ փոխհարաբերվել կարողանալու համար էական են իրական ինքնագնահատականը, սեփական և ուրիշների զգացմունքներն ու դրանց դրսևորումները հասկանալու, վերլուծական դիտարկումներ կատարելու ունակությունը: Համագործակցությունը նպաստում է նաև անձի հակումների բացահայտմանը և մասնագիտական կողմնորոշմանը, ցանկալի աշխատանք գտնելուն, աշխատանքային խնդիրներ լուծելուն և ընդհանրապես մասնագիտական հաջողություններին:

Համագործակցությունը, որպես կանոն, գործնական, աշխատանքային հարաբերություն է, բայց կարող

է վերաճել նաև բարեկամական, ընկերական հարաբերությունների: Այդպիսի զարգացումը դրական գործընթաց է, սակայն կարևոր է, որ ընկերությունը չհանգեցնի մյուսներից առանձնացմանը, մեկուսացմանը, ընկերոջը մյուսներից անհիմն կերպով բարձր դասելուն, անգամ նրա անթույլատրելի արարքները ներելուն: Այդպիսի զարգացումը սովորաբար առաջ է բերում հակասություններ, լարվածություններ տվյալ խմբում՝ դասարանում, լսարանում, աշխատախմբում և այլն:

ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Քննարկում

Բացի վերը նշվածից՝ խմբի ներսում ինչ պատճառով ինչ հակասություններ կարող են առաջանալ, ինչպե՞ս կարելի է հաղթահարել դրանք:

Շարունակելով քննարկումը՝ կարող ենք հանգել նաև այն եզրակացության, որ խմբի ներսում ծագած հակասությունները հաղթահարելու համար անհրաժեշտ է՝

հանդուրժողականություն,
փոխադարձ հարգանք,
ազատ մրցակցություն,
հնարավորությունների հավասարություն և այլն:

Հակասությունների հաղթահարման պատվիրաններ
- վերլուծի՛ր իրավիճակը
- ազատվի՛ր բացասական հույզերից
- գտի՛ր հակասության պատճառը
- հստակեցրո՛ւ խնդրի լուծման հնարավոր ուղիները
- փոխշահավետ լուծո՛ւմ առաջարկիր

Հակասությունների հաղթահարումը զուցեև բարեկամական հարաբերություններ չստեղծի բոլորի միջև, բայց կվերականգնի գործնական աշխատանքային համագործակցությունը և կվերստեղծի *համակեցության* միջավայր:

Դա նշանակում է, որ անկախ այն բանից՝ խմբի այս կամ այն ներկայացուցիչը, համադասարանցին, գործընկերը մեզ համակրելի է, թե ոչ, մենք հարգանքով ենք նրան վերաբերվում և ընդունում նրա հետ համագործակցության կանոնները: Այդ պահանջը բնականաբար վերաբերում է խմբի բոլոր անդամներին:

Եվ միայն այդ պահանջի, կարելի է ասել՝ կանոնի կատարումը կարող է համակեցություն ստեղծել: Դա, իհարկե, չի նշանակում խմբի ներսում հակասությունների բացառում: Հակասությունները մեր կյանքի անբաժանելի մասն են, քանի որ դրանց աղբյուրը մեր մտավոր և մարմնական կարողությունների, ընկալումների, կարծիքների, հայացքների, նախասիրությունների, շահերի տարբերությունն է:

Անհրաժեշտ է սակայն, որ այդ բնականոն բազմազանության արդյունքում ծնված հակասությունները չվերաճեն հակամարտության, լարվածության և թշնամանքի: Դա միանգամայն հնարավոր է, քանի որ բոլորս էլ կարիք ունենք հակասությունների հաղթահարման, համագործակցության և այդ ամենի արդյունքում՝ համակեցության:

Ամփոփելով բերենք համագործակցության ու համակեցության հետ առնչվող մի շարք հասկացություններ՝ համառոտ բացատրությամբ:

Համեստություն – *Համեստ* լինել նշանակում է ընդունել սեփական սխալները, չափավոր և զուսպ լինել վարվեցողության, ապրելակերպի մեջ, չտառապել ցուցամոլությամբ, շրջապատի հետ հարաբերություններում լինել հավասարակշռված: Համեստությունը ազնվացնում է մարդուն, նրան դարձնում հմայիչ, բարոյապես գեղեցիկ: Համեստ մարդը միշտ վայելում է շրջապատի հարգանքը:

Հավասարակշռություն — *Հավասարակշիռ* նշանակում է լինել զուսպ, ողջամիտ, կշռադատված, խոհեմ: Հավասարակշռված մարդիկ արագ չեն բռնկվում, հապճեպ եզրակացություններ չեն անում և չեն դիմում անխոհեմ արարքների:

Հավատարմություն – *Հավատարիմ* նշանակում է հավատի արժանի, վստահելի, իր պարտքին, իր խոսքին նվիրված, անդավաճան: Առանց հավատարմության չի կարող լինել ո՛չ սեր, ո՛չ բարեկամություն, ո՛չ առաքինություն: Հավատարմության վրա է խարսխվում բարեկամությունը:

Հոգատարություն – *Հոգատարությունը* սերը տածելը և խնամք տանելն է մերձավորի, զավակի, հարազատի, ծնողի, հիվանդի, թույլի, տկարի, բնության նկատմամբ: Դա սովորական ուշադրությունը կամ պարտականություն կատարելը չէ:

Հուսալիություն – *Հուսալի* նշանակում է լինել հույս ներշնչող, հույս տվող, կայուն, կամային, ուժեղ, ունակ: Հուսալի մարդուն վստահում են կարևոր գործեր, աշխատանք, արժեքներ և այլն: Հուսալի մարդկանց շնորհիվ է, որ կարողանում ենք պայքարել, ապրել, մարտնչել:

Գործնական աշխատանք

Ստորև ներկայացվող իրավիճակներում, ձեր կարծիքով, ի՞նչ հակասություններ կարող են առաջանալ, և ի՞նչ լուծումներ կարող եք առաջարկել: Առաջադրանքը կատարե՛ք տետրում:

	Նկարագրություն	**Հակասություններ**	**Լուծումներ**
Իրավիճակ 1	Դպրոցից հինգ հոգի պետք է ընտրվեն բանավեճի համաքաղաքային մրցույթին մասնակցելու համար: Հաղթող թիմը մեկնելու է շրջագայության: Բանավեճի դպրոցական ակումբի 12 անդամները համաձայնության չեն գալիս, թե ով պետք է ընտրվի:		

Իրավիճակ 2	Նարեկը ծննդյան օրվա կապակցությամբ հորեղբորից գումար է նվեր ստացել: Ծնողները դեմ են, որ Նարեկը գումարը տնօրինի իր հայեցողությամբ: Նարեկը համաձայն չէ նրանց հետ:		
Իրավիճակ 3	Միջքաղաքային երթուղայինի վարորդը միացրել է բարձր, ուղևորների մի մասի կարծիքով՝ անճաշակ երաժշտություն: Ուղևորների մնացած մասը դեմ է երաժշտությունը անջատելուն:		

Հարցեր և առաջադրանքներ

1. Հակասությունների հաղթահարման և համակեցության հաստատման ինչ առանձնահատկություններ և դժվարություններ կարող եք նշել՝

ա) ընտանիքում,

բ) դասարանում, դպրոցում,

գ) համայնքում:

2. *«Երբվանից ես ակնոց դնում: Հիմար տեսք ունես»:*

Այս «բարեկիրթ» հարցը, ձեր կարծիքով, ինչ կառաջացնի. ընտրեք պատասխանի տարբերակներ և մեկնաբանեք:

ա) լարվածություն և հակասություն,

բ) կողմերի մեկուսացում,

գ) հաշտություն,

դ) հումոր:

3. Նկարագրեք իրավիճակներ, որտեղ ընդգծված է ստորև թվարկված արժեքների կարևորությունը:

համեստությունը

հավասարակշռությունը

հավատարմությունը

հոգատարությունը

հուսալիությունը:

ԴԱՍ 6–7 ԸՆՏԱՆԻՔ, ԱԶԳ, ՍԾԱԿՈՒՅԹ

Տունը և ընտանիքը մի փոքրիկ թագավորության երկիրն ու սահմանն են:

Սույն ընտանեկան պալատի ու թագավորության մեջ ոչ ոստիկան կա, ոչ սուր, ոչ բռնություն, ոչ զավազան, այլ այդ բոլորի տեղ հայրական սերն ու մայրական գորովն են:

Խրիմյան Հայրիկ

ԸՆՏԱՆԻՔ

Մենք, մանկությունից սկսած, ընտանեկան «փոքրիկ թագավորության» բնակիչներն ենք: Եթե մեզ հնարավորություն տրվեր սահմանելու օրենքներ, ինչ պահանջներ կդնեինք ընտանիքի անդամների՝ ծնողների ու զավակների առջև: Կլինեին արդյոք պատիժներ: Եթե ոչ, ապա ինչպե՞ս պետք է ընտանիքի յուրաքանչյուր անդամ գիտակցեր իր սխալը և հատուցեր դրա համար:

Փորձենք միասին գտնել այս դժվար հարցի պատասխանը:

Ընտանիք հասկացության վերաբերյալ բազմաթիվ տեսակետներ, բնութագրումներ կան: Տարբերություններով ու տարակարծություններով հանդերձ՝ դրանց միավորում է հիմնական մի դրույթ. ընտանիքը հասարակության հիմքն է, նրա սկզբնական օղակը: Ընտանիքի վերաբերյալ հաճախակի են օգտագործվում պատկերավոր արտահայտություններ՝ ընտանիքը հասարակության բջիջն է, նրա հիմնաքարը և այլն:

Ինչո՞վ է դա բացատրվում: Ի՞նչն է այդպիսի բնութագրումների հիմքը:

Ժամանակակից փոքր ընտանիքի մոդել

Յուրաքանչյուր ընտանիք ունի իր տնտեսությունը, եկամուտներն ու ծախսերը, դժվարություններն ու հաջողությունները: Ընտանիքն է հասարակության վերարտադրման հիմնական հաստատությունը: Այսինքն՝ ընտանիքի միջոցով է հասարակությունն իրականացնում իր համար կենսական նշանակություն ունեցող ինքնավերարտադրման գործընթացը: Ընդ որում՝ այդ ինքնավերարտադրումը տեղի է ունենում ոչ միայն կենսաբանական, այլև հոգեբանական, լեզվական, մշակութային և այլ առումներով: Այսինքն՝ մարդը ոչ միայն ծնվում ու ֆիզիկապես հասունանում է որևէ ընտանիքում, այլև ձևավորվում է որպես անձ, անհատականություն, որպես այս կամ այն ազգության, լեզվի, դավանանքի և այլ հատկանիշների կրող: Անգամ եթե դա տեղի է ունենում ընտանիքից դուրս, ասենք՝ մանկատանը կամ խնամակալական որևէ այլ հաստատությունում, միևնույնն է, երեխայի կրթության, դաստիարակության հիմքում դրվում են ընտանիքում կիրառվող, ընտանիքի համար ընդունելի, երաշխավորելի սկզբունքներ:

Ընտանիքում և ընդհանրապես մարդկանց հետ հաղորդակցվելիս հոգեբանները խորհուրդ են տալիս օգտագործել կամ, ընդհակառակը, խուսափել մի շարք արտահայտություններից.

- Դու լավ ես հասկանում. խնդրում եմ, օգնի՛ր ինձ...
- Ես հազար անգամ քեզ ասել եմ...
- Մի՞թե դժվար է հասկանալ...
- Ոչ մի բան կարգին չես անում...
- Դու հրա՛շք ես, ապրե՛ս...
- Ո՞նց եմ քեզ սիրում...
- Իսկ ինչո՞ւ ես գոռում...
- Ես որևէ իրավունք ունե՞մ...

Անտուան դը Սենտ-Էքզյուպերի

Սիրել չի նշանակում նայել միմյանց: Սիրել նշանակում է նայել միևնույն ուղղությամբ:

Փորձե՛ք ավարտել նախադասությունները:

Ընտանիքի հիմքը դրվում է տղամարդու և կնոջ ամուսնությամբ: Ամուսնությամբ սկիզբ դրված ընտանեկան կյանքի բնականոն արդյունքը երեխաների ծնունդն ու դաստիարակությունն են: Այդ պատասխանատու խնդրի իրագործման ամենակարևոր նախապայմանը ընտանեկան հարկի տակ տիրող սիրո ու համերաշխության մթնոլորտն է:

Կարևոր են, իհարկե, նաև բարեկեցությունը, նյութական լավ պայմանները և այլ արտաքին հանգամանքներ: Դրանով հանդերձ, անգամ նյութական բարվոք պայմանների դեպքում, եթե ընտանիքում բացակայում են համերաշխությունն ու փոխադարձ հարգանքը, դժվարություններն անխուսափելի են լինում: Իրար օգնելու, համատեղ ջանքերով դժվարություններն ու խնդիրները հաղթահարելու փոխարեն ծնվում են վեճեր, փոխադարձ մեղադրանքներ, լարվածություն, ինչի հետևանքով ամուսինները բաժանվում են, և ընտանիքը քայքայվում է:

Գործնական աշխատանք

Լրացրեք աղյուսակը տետրում:

Պատճառներ, որոնք հանգեցնում են ընտանեկան վեճերի և գժտությունների	Լուծման ուղիներ



Արթուր Շոպենհաուեր

Ամուսնանալ նշանակում է կիսով չափ պակասեցնել սեփական իրավունքները և կրկնակի մեծացնել պարտականությունները:

Բաժանությունից հետո էլ ընտանիքը շարունակում է կատարել իր գործառույթը: Այսինքն՝ անկախ այն բանից, որ բաժանության կամ այլ հանգամանքների պատճառով ընտանիքում մնացել է մեկ ծնող, միևնույնն է, ընտանեկան կյանքը շարունակվում է՝ չնայած դժվարություններին ու հոգսերին:

Ըստ կազմի՝ ընտանիքը լինում է մեծ կամ փոքր: Ներկայումս ավելի տարածված է փոքր ընտանիքը (հայր, մայր, զավակներ): Հնում այդ կազմն ավելի ընդարձակ էր: Միևնույն հարկի տակ ապրում էին մի քանի փոքր ընտանիքներ՝ մեծ ընտանիքի կամ գերդաստանի նահապետի գլխավորությամբ: Չնայած այսօր այդքան մեծ ընտանիքում չենք ապրում, սակայն ձգտում ենք պահպանելու կապերը մեծ ընտանիքի կամ գերդաստանի անդամների և հարազատների հետ:

Խորհուրդներ

- *Հարգեք ինքներդ ձեզ և նույն հարկի տակ ապրող մարդկանց:*
- *Կարողացեք ընդունել ձեր սխալները:*
- *Եղեք ուշադիր ընտանիքի անդամների նկատմամբ:*
- *Մի՛ կենտրոնացեք ընտանիքի անդամների թերությունների վրա:*
- *Հանդուրժող եղեք ընտանիքի մյուս անդամների հետաքրքրությունների նկատմամբ:*
- *Վստահեք ընտանիքի անդամներին:*

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Ընթերցելով Օրբելիների ընտանիքի մասին պատմող նյութը՝ համառոտ ներկայացրեք ձեր տպավորությունները: Ձեր կարծիքով՝ ինչ ազդեցություն ունեցավ այդ նշանավոր ընտանիքում տիրող մթնոլորտը Օրբելի եղբայրների հետագա կյանքում:

Օրբելիների ընտանիքը

Հովսեփ Աբգարի Օրբելին ծնվել է հին ավանդույթներ ունեցող հայկական ընտանիքում: Նրա պապը՝ Հովսեփ Օրբելի ավագը, ավարտել է Լազարյան ճեմարանը, ուսուցչություն է արել Մոսկվայում և Պետերբուրգում, ապա ձեռնադրվել քահանա: Շատ չանցած, փոխադրվելով Թիֆլիս, դարձել է հայկական եկեղեցիներից մեկի ավագ քահանա, հիմնել է մասնավոր դպրոց, միաժամանակ դասավանդել Ներսիսյան դպրոցում: Նրա գրչին են պատկանում աստվածաբանական մի քանի գրվածքներ:

Աբգար Օրբելին՝ Հովսեփ Օրբելու հայրը, բացառիկ կրթված մարդ էր: Նա մեծ ուշադրություն էր դարձնում երեխաների դաստիարակությանը և, չնայած համեմատաբար համեստ միջոցներին, կարողացավ որդիներին կրթության տալ: Ընտանիքում նրա ազդեցությունը մեծ էր, հեղինակությունն՝ անվիճելի: Թեև որդիների ազատությունը ոչնչով չէր սահմանափակվում, այդուհանդերձ, 1906 թվականին տասնիններորդ Հովսեփ Օրբելին պեղումների մեկնեց Անի միայն հոր թույլտվությունը ստանալուց հետո: Նույնիսկ ծերունական հասակում Հովսեփ Օրբելին հաճախ էր հիշում հորը, որի նկատմամբ սիրո ամենախոր զգացմունքներն էր տածում:

Հովսեփ Օրբելու մայրը՝ Վառվառան, արտասովոր կին էր: Սերելով հայ Արղության–Երկայնաբազուկների իշխանական տոհմից՝ նա մանուկ հասակից վարժվել էր ֆիզիկական աշխատանքին: Վառվառա Օրբելին արտակարգ հոգատարություն էր հանդես բերում երեխաների նկատմամբ, մեծ ուշադրություն էր նվիրում նաև ուրիշներին, և շրջապատի մարդկանցից շատերը նրա մասին չափազանց բարի հուշեր են պահպանել:

Հովսեփի ավագ եղբայրը՝ Ռուբեն Օրբելին, ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական բաժինը, սակայն հետագայում տարվել է ջրասուզակային գործով: Ռուբեն Օրբելին ստորջրյա հնագիտության հիմնադիրներից էր Խորհրդային Միությունում: Հովսեփի մյուս եղբայրը՝ Լևոն Օրբելին, խոշոր բնախոս էր, որի անունը հայտնի է ամբողջ աշխարհում:

Ընտանեկան ավանդույթները մեծ դեր են խաղացել Հովսեփ Օրբելու աշխարհայացքի և բնավորության այնպիսի գծերի ձևավորման մեջ, ինչպիսիք էին դատողությունների շիտակությունը, հասարակական պարտքի բարձր գիտակցումը և մարդասիրությունը:

Կ. Յուզբաշյան,
«Ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելի»



Վիլյամ Սարոյան

Հայերենը հայուն խորհուրդն է:

ԱԶԳ

Հունարեն *էթնոս՝ ազգ* բառը հայերենում բազմաթիվ իմաստներ ունի: Առաջին հերթին կիրառվում է որոշակի ազգությանը պատկանելու իմաստով, օրինակ՝ *հայ ազգ* կամ *հայ ժողովուրդ* արտահայտության մեջ:

Քննարկում

Ինչի՞ հիման վրա, ի՞նչ հատկանիշներով են հազարավոր, միլիոնավոր մարդիկ իրենց համարում միևնույն ազգային ընդհանրության ներկայացուցիչ: Ի՞նչ նկատի ունի մարդը, երբ ասում է, որ ինքը հայ է, հույն կամ ճապոնացի:

Խմբային քննարկման արդյունքում կազմենք ազգային հատկանիշների ցանկը:

Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Ազգային կարևոր հատկանիշներից մեկը, եթե ոչ ամենակարևորը, **լեզուն** է: Լեզուն միավորում է տվյալ ազգության մարդկանց և միաժամանակ նրանց առանձնացնում մյուսներից: Իզուր չէ, որ իր լեզուն ժողովուրդն անվանում է **մայրենի**: Լեզվի տարբերակիչ դերը շատ մեծ է եղել անցյալում և այսօր էլ նշանակալի է: Այսպես, գոյություն ունեցող գիտական վարկածներից մեկի համաձայն՝ գերմանացիների՝ հին սլավոնական ցեղերի կողմից տրված *նեմեց* ցեղանունը կապված է *նեմա* (չկա) բառի հետ: Այսինքն, չհասկանալով հարևան գերմանական ցեղերի լեզուն, հին սլավոնները համարում էին, որ նրանք «լեզու չունեն», քանի որ չեն կարողանում հասկանալ իրենց:

Լեզվի՝ ազգային հատկանիշ լինելու հիմնահարցը տարբեր կողմեր ունի: Նախ՝ կան միևնույն լեզվով խոսող տարբեր ժողովուրդներ, օրինակ՝ անգլերեն են խոսում ոչ միայն անգլիացիները, այլև ամերիկացիները, կանադացիների մեծ մասը, ավստրալացիները, նորզելանդացիները, իռլանդացիների և շոտլանդացիների մեծ մասը, այլ ժողովուրդների ներկայացուցիչներ: Նույն կարգի տարածում ունեն նաև

իսպաներենը, պորտուգալերենը, ռուսերենը և այլն: Մյուս կողմից՝ կան ժողովուրդներ, որոնք խոսում են տարբեր լեզուներով: Օրինակ՝ մորդվինները խոսում են երեք լեզվով (դրանցից մեկը ռուսերենն է): Ավելի խայտաբղետ է վիճակը հրեաների, գնչուների և աշխարհով մեկ տարածված այլ ժողովուրդների դեպքում: Հազարավոր հայեր նույնպես, երկար ժամանակ ապրելով այլ երկրներում, հաղորդակցվում են անգլերենով, ռուսերենով, հունարենով և այլ լեզուներով: Այդուհանդերձ, նրանց գերակշիռ մասը շարունակում է իրեն հայ համարել:

Մայրենի լեզուն ազգային այն հատկանիշներից է, որոնց հիման վրա ձևավորվում, բյուրեղանում է ազգային ինքնագիտակցությունը կամ, ինչպես ընդունված է ասել, **ինքնությունը**: Այդ հատկանիշներից առանձնացնենք նաև կրոնը (դավանանքը), ազգային արժեհամակարգը և մշակույթը:

Հայերը քրիստոնյա ժողովուրդների շարքում են: Առաջինը պետականորեն ընդունելով քրիստոնեությունը՝ հայերն ազգային իմաստ դրեցին քրիստոնյա լինելու մեջ, ազգայնացրին իրենց եկեղեցին ու հավատքը, և կրոնական պատկանելությանը վերաբերող հարցին հայ մարդը սովորաբար պատասխանում է՝ ես հայ քրիստոնյա եմ: Հայերն, այսպիսով, ի թիվս հույների, սերբերի, ռուսների, լեհերի, վրացիների և այլ ժողովուրդների, համաշխարհային քրիստոնեական հանրության մի մասն են:

Մինչև քրիստոնեության ընդունումն էլ հայ ժողովուրդը մշակութային զարգացման հազարամյա ճանապարհ է անցել: Հայկ Նահապետից սկիզբ առնող այդ երկարամյա ճանապարհն ապարդյուն չի եղել, և դրա մշակութային–քաղաքակրթական ձեռքբերումները քրիստոնյա Հայաստանի, հայ միջնադարյան քրիստոնեական մշակույթի բնականոն մասն են կազմել: Դա գիտակցել է նաև հետագա ժամանակների հայ միտքը, ինչի գեղարվեստորեն փառահեղ ձևակերպված արտահայտություններից է Դ. Վարուժանի բանաստեղծությունից ստորև բերվող հատվածը:



Ջորջ Բայրոն

Ով չի սիրում իր երկիրը,
ոչինչ սիրել չի կարող:

Եղեգնյա գըրչով երգեցի փառքեր.
— Քեզի ընծա՛, իմ հայրենիք —
Սոսյաց անտառեն էի զայն կըտրեր...
— Քեզի ընծա՛, հին հայրենիք —
Եղեգնյա գըրչով երգեցի քուրմեր.
Ընդ եղեգան փող լո՛ւյս ելաներ:

Դանիել Վարուժան,
«Ձոն» («Ցեղին սիրտը» ժողովածուից)

Քրիստոնեության հետևորդ լինելը խոչընդոտո՞ւմ է այլ կրոնական պատկանելություն ունեցող ժողովուրդների հետ խաղաղ, բարիդրացիական հարաբերություններ պահպանելուն: Պատասխանը հիմնավորե՛ք պատմությունից ձեզ հայտնի օրինակներով:

ՄՇԱԿՈՒՅԹ: ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Ազգային ինքնության բաղադրիչները միայն լեզուն և հավատքը չեն: Ազգային ինքնություն ձևավորող կարևոր գործոն է մշակույթը:

Մշակույթ հասկացությունը տասնյակ, անգամ հարյուրավոր սահմանումներ ունի: Այդ սահմանումներից մեկի համաձայն՝ մշակույթը մարդկության ստեղծած նյութական և հոգևոր արժեքների ամբողջությունն է:

Ի՞նչ նյութական և հոգևոր արժեքներ կարող եք թվարկել ձեր կենցաղից, համայնքից և առհասարակ ձեր շրջապատից:

Մշակութային արժեքները, որպես կանոն, ստեղծվում են որևէ ազգի, ժողովրդի կողմից: Ազգային մշակույթի լավագույն օրինակներն այնուհետև դառնում են ուրիշ ազգերի սեփականությունը, մտնում համաշխարհային գանձարան: Այդպիսի արժեքների թվում անվերապահորեն կարող ենք դասել հայկական մանրանկարչությունը, խաչքարերը և ճարտարապետական հուշարձանները:

Նկարագրե՛ք, թե ինչ զգացողություն եք ունեցել, երբ

առաջին անգամ տեսել եք ճարտարապետական որևէ հայտնի կառույց, որն ընդմիշտ տպավորվել է ձեր գիտակցության մեջ:

Մեզ, իհարկե, հիացնում, զարմացնում են արվեստի այդ հրաշալիքները, սակայն գեղագիտական հաճույքից բացի՝ մեզ պատում է ինչ–որ անորոշ զգացողություն՝ նման նրան, երբ, օրինակ, հանկարծակի իր ողջ վեհությամբ հորիզոնում երևում է Մասիսը: Սրբազան լեռը հայ ազգային ինքնության մեծագույն խորհրդանիշներից է, որն արժանիորեն իր տեղն է գրավել Հայաստանի երեք հանրապետությունների զինանշաններում:

Ազգային ինքնության մաս կարող են կազմել նաև երգն ու պարը, նվագարանները, ճաշատեսակները, տոները, ծեսերը և այլ մշակութային արժեքներ:

Լեզվին և ազգային ինքնությունը կազմող մյուս արժեքներին անձը սկսում է հաղորդակցվել առաջին հերթին ընտանիքում: Մայրենի լեզվի յուրացումը զուգահեռաբար նշանակում է նաև մշակույթի հիմունքների յուրացում: Այս ամենի արդյունքում ձևավորվում է ազգային ինքնության հիմնական բաղադրատարրերը կրող և հանրային կյանքի հիմնական սկզբունքներին ու կանոններին ծանոթ չափահաս անձ՝ քաղաքացի:

Յուրաքանչյուր ժողովուրդ, իմ պատկերացմամբ, զորեղ մի ծառ է, որի արմատները հայրենի հողում են, իսկ ծաղիկներով ու պտուղներով ծանրաբեռնված ճյուղերը պատկանում են ամբողջ աշխարհին: Այդպես էլ արվեստը՝ ամենայն ճշմարիտն ու վառ ազգայինը, միշտ իր մեջ համամարդկային ինչ–որ բան ունի: Եվ ամեն բան, ինչպես բնության մեջ, ունի իր արմատներն ու անկրկնելի ձևը:

Մարտիրոս Սարյան, *«Արվեստի մասին»*

Հարցեր և առաջադրանքներ

1. Բացատրեք հասարակության մեջ ընտանիքի նշանակությունը:
2. Ինչ կազմ ունի ժամանակակից ընտանիքը:
3. Ինչ է անհրաժեշտ ընտանիքի ամրության և կայունության համար: Ինչն է ընտանիքում միավորում մարդկանց:
4. Ձեր կարծիքով՝ որո՞նք են մեծ և փոքր ընտանիքների առավելություններն ու թերությունները:
5. Ինչո՞ւ են ընտանիքն անվանում ազգի դիմագիծ:
6. Ինչն է, ձեր կարծիքով, նյութական արժեք, և ինչը՝ հոգևոր:
7. Թվարկեք հայ մշակույթի ստեղծագործություններ, որոնք, ձեր կարծիքով, կարող են համաշխարհային մշակույթի գանձարանի մաս համարվել:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ *ԳԼՈՒԽ 1*

Խմբային աշխատանք

Բաժանվեք խմբերի, կարդացեք ստորև շարադրված հիմնախնդիրների տեսակներից մեկի մասին տեղեկությունները: Գտեք լրացուցիչ տեղեկություններ «Համայնքային հիմնախնդիրները սովորողների տեսակետից» ցանկից: Քննարկեք համանման հիմնախնդիրների առկայությունը ձեր համայնքում:

Յանկին ծանոթանալուց հետո դասարանին ներկայացրեք, թե արդեն ինչ գիտեք հիմնախնդրի տվյալ ոլորտի մասին կամ ինչ եք լսել քննարկումների ժամանակ: Ձեր կողմից բացահայտված հիմնախնդիրների ցանկը տրամադրեք ուսուցչին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԻ ԿԱԶՄՈՒՄ

Համայնքային հիմնախնդիրներ

Ա. Համայնքի ընդհանուր հիմնախնդիրներ

Որոշ հիմնախնդիրներ սովորաբար ծագում են գրեթե բոլոր համայնքներում: Մի շարք համայնքներում ծագած որոշակի հիմնախնդիրներ իրենց հրատապությամբ և կարևորությամբ կարող են տարբեր լինել: Հաճախ մարդկանց կողմից հնչում է այն կարծիքը, որ իշխանության մարմինները պետք է այնպիսի քայլեր իրականացնեն կամ այնպիսի քաղաքականություն վարեն, որոնց համար պատասխանատու կլինեն, և որ նրանք պետք է ձգտեն առավելագույնս ճիշտ լուծում տալու հիմնախնդիրներին:

Բ. Հասարակական հիմնախնդիրներ

Հիմնախնդիրների այս շարքն առնչվում է հասարակությունում քաղաքացիների մասնակցությանը տարբեր հարցերի քննարկմանն ու լուծմանը: Մարդկանց գործունությունը կամ կրավորականությունը նպաստում է հասարակական կյանքի բարելավմանը կամ վատթարացմանը: Քննարկենք կրթական հիմնախնդիրները:

Դպրոցական հիմնախնդիրներն առնչվում են աշակերտների սովորելուն, ուսուցիչների և վարչական կազմի արդյունավետ աշխատանքի խոչընդոտներին: Այս հիմնախնդիրները լինում են ինչպես դասարանում, դպրոցի տարածքում, այնպես էլ դպրոցի սահմաններից դուրս կամ երևան են գալիս սովորողի՝ դպրոցն ավարտելուց հետո: Օրինակ՝ որոշ աշակերտներ հաճախակի բացակայում են դասերից և, փաստորեն, դուրս են մնում ուսումնական գործընթացից: Շատերը կարծում են, որ դպրոցն աշակերտներին բավարար հնարավորություններ չի տալիս և չի աջակցում հետագա ուսումնառության խնդրում:

Շատ ուսուցիչներ անտեսում են ցածր առաջադիմություն ունեցող սովորողների ուսման հիմնախնդիրները և չեն նկատում նրանց ներկայությունը դասարանում՝ ստեղծելով սովորելու անհավասար պայմաններ տարբեր աշակերտների համար: Վերջապես՝ դպրոցում ներկայումս գործող գնահատման համակարգը ստուգում է սովորողների ուսման միայն մեկ կողմը՝ առանց հաշվի առնելու տարբեր գործոններ: Գնահատման այդպիսի մոտեցումը հաճախ օգտագործվում է որպես սովորողներին պատժելու միջոց:

գ. Բնապահպանական հիմնախնդիրներ

Մեր երկրում առկա են շրջակա միջավայրին առնչվող բյուրավոր հիմնախնդիրներ, որոնց լուծման հետաձգումը կհանգեցնի բնապահպանական բազմաթիվ նոր աղետների: Ուստի շատ կարևոր է, որ կարողանաք բացահայտել համանման խնդիրները և գտնեք դրանց արդյունավետ լուծման միջոցներ: Դրանցից է, օրինակ, աղբահանության խնդիրը:

դ. Երիտասարդությանն առնչվող հիմնախնդիրներ

Երիտասարդների կրթությանը, աշխատանքին, ընտանեկան կյանքին, բնակարանին, կենցաղին առնչվող հիմնախնդիրները ևս շատ կարևոր են: Օրինակ՝ շատ երիտասարդներ աշխատում են դասերից հետո և հանգստյան օրերին: Դա ազդում է նրանց առաջադիմության վրա և դժվարացնում կրթական գործընթացը:

Հիմնախնդիրներ կարելի է գտնել նաև ֆինանսատնտեսական, առողջապահական և այլ ոլորտներում:

Ստորև ներկայացված են համայնքային հիմնախնդիրների օրինակներ.

ա. Ընդհանուր համայնքային

- Ներքաղաքային փոխադրամիջոցների մաշվածությունը
- Փողոցային առևտուրը

- Ժամանցային կենտրոնների բացակայությունը
- Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակը
- Երթևեկության անվտանգության ցածր աստիճանը
- Կամուրջների անմխիթար վիճակը
- Գետնանցումների բացակայությունը կամ անբարեկարգ վիճակը
- Գիշերային լուսավորության անմխիթար վիճակը
- Զբոսայգիների բացակայությունը գյուղական համայնքներում
- Ապօրինի կառույցները

բ. Հասարակական

- Պատմամշակութային հուշարձանների անխնամ վիճակը
- Աղքատությունը մեր համայնքում
- Ծխախոտի օգտագործումն անչափահասների կողմից
- Սոցիալապես անապահով ընտանիքներում ապրող երեխաների վիճակը
- Երիտասարդ ընտանիքների՝ բնակարանով ապահովված չլինելը
- Հաշմանդամ երեխաների ինտեգրման դժվարությունները
- Ծերերի իրավունքների չպաշտպանվածությունը
- Առաջին բուժօգնության անմխիթար վիճակը

գ. Կրթական

- Նախադպրոցական հաստատությունների բացակայությունը կամ սակավությունը
- Ռադիոհանգույցի բացակայությունը դպրոցում
- Սանհանգույցների անմխիթար վիճակը

դ. Բնապահպանական

- Կանաչ գոտիների բացակայությունը մեր համայնքում
- Անօրինական ծառահատումները
- Թափառող շների մեծ քանակությունը
- Անկազմակերպ աղբահանությունը
- Հանգստյան գոտու աղտոտվածությունը
- Գետերի ջրերի և ափերի աղտոտվածությունը

Առաջադրանք

Օգտագործելով «Հիմնախնդրի բացահայտման հարցաթերթիկը» ՝ ձեր համայնքում առկա հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկություններ հավաքեք հետևյալ եղանակով:

Հարցադրում

- Ընտրեք ձեր խմբում քննարկված հիմնախնդիրներից որևէ մեկը:
- Դա քննարկեք ընտանիքում, ընկերների շրջապատում, հարևանների հետ և այլ միջավայրերում:

• Բացահայտեք, թե նրանց ինչ է հայտնի ձեր կողմից առաջ քաշված հիմնախնդրի մասին, և իրենք ինչ կարծիք ունեն:

• Լրացրեք «Հիմնախնդրի բացահայտման հարցաթերթիկը»:

Համանման քայլերով տեղեկություններ հավաքեք և վերլուծեք՝ օգտվելով տպագիր, ռադիո–հեռուստատեսային և համացանցային տեղեկատվության աղբյուրներից:

Հիմնախնդրի բացահայտման հարցաթերթիկի նմուշօրինակ

(լրացնել տետրում)

Հարցազրույց թիվ _____ Ամսաթիվը _____

Հիմնախնդիրը. _____

1. Դուք կամ ձեր համայնքի այլ բնակիչներ կարծում եք, որ այս հիմնախնդիրը կարևոր է: Ինչու: _____

_____

_____

2. Իշխանության ո՞ր օղակներն են պատասխանատու հիմնախնդրի լուծման համար:

_____

_____

3. Ինչ են անում իշխանության մարմինները այդ հիմնախնդրի լուծման ուղղությամբ:

_____

_____

3.1. Որո՞նք են այդ քայլերի ուժեղ և թույլ կողմերը:

_____

_____

3.2. Այդ քայլերը ինչպե՞ս կարելի է բարելավել: _____

_____

3.3. Կա՞ն արդյոք տարբեր կարծիքներ այդ գործողությունների մասին:

_____

_____

4. Արդյո՞ք ծանոթ եք ուրիշների կարծիքներին այդ առումով: _____

_____

_____

_____

5. Կա՞ն արդյոք այլ հիմնախնդիրներ համայնքում: _____

_____

_____

_____

ԳԼՈՒԽ 2 ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐ

ԴԱՍ 8 ԻՆՉ Է ԱՐԺԵՔԸ: ՄԱՐԴԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՔ

- *Ի՞նչ եք հասկանում՝ արժեք ասելով:*
- *Թվարկե՛ք, ձեր կարծիքով, մի քանի կարևոր արժեքներ:*
- *Իսկ ի՞նչ եք կարծում, մարդն՝ ինքնին արդյո՞ք արժեք է:*

Դուք բոլորդ նույն տարիքի, նույն սերնդի, նույն ժամանակաշրջանի մարդիկ եք, և թվում է՝ ձեր հայացքները պետք է մոտ լինեն իրար: Որպես կանոն՝ դա այդպես էլ լինում է, սակայն չի բացառվում, որ լինեն նաև իրարից խիստ տարբեր տեսակետներ:

Օրինակ՝ մեկն ասում է, որ կարևորը բարությունն է, ուրիշին օգնելը, ճիշտ պահվածքը, ազնիվ լինելը, արդարամտությունը, կրթությունը, մյուսը՝ ընդհակառակը, կարծում է, որ կարևոր են հարստությունը, փողը, պաշտոնը և այլն:

Կարևոր բաների մասին խոսելիս խիստ տարբեր, անգամ հակադիր տեսակետներ կարելի է լսել: Կլինեն շատերը, որոնք առաջին հերթին կնշեն գեղեցիկ բնակարանի, շքեղ ավտոմեքենայի և նման այլ բարիքների մասին: Մինչդեռ ուրիշները կհիշեն այլ հասկացություններ, ինչպիսիք են գեղեցկությունը, հանդուրժողականությունը, հավասարությունը և այլն:

Փորձե՛ք ինքնուրույն բերել այլ օրինակներ:

Ասույթներ

Չես նկատի՝ երբ և ինչպես է շփումն իմաստուն մարդկանց հետ քեզ օգուտ տվել, սակայն այդ շփումից ստացած օգուտն ինքնին կնկատես:

Ֆեդոն

Ընտանիքը բնության հրաշալիքներից մեկն է:

Ջ.Սանտայանա

Խորհե՛ք բերված ասույթների շուրջ: Փորձե՛ք ինքներդ համանման ասույթներ հորինել:

Գարեգին Նժդեհ

Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, ընկնում՝ դրա պակասից: Բացարձակապես հաշտելի են հայրենասիրությունն ու մարդասիրությունը: Միայն ազգասեր կարող է սիրել և մարդկությունը:

Հայրենապաշտպան դաստիարակություն. ահա մեր փրկության խարիսխը:

Մի ժողովրդի հայրենի հողը չի կարող ուրիշի մնայուն հայրենիքը դառնալ:

ԻՆՉ Է ԱՐԺԵՔԸ

Արժեքների մասին պատկերացումներ մարդիկ ունեցել են շատ վաղուց, սակայն դրանց վերաբերյալ բոլորի կողմից ընդունված գաղափար ձևավորվեց միայն 19–րդ դարում: Հաստատուն և մարդկանց համար շատ թանկ կենսական կողմնորոշումը իմաստասերներն անվանեցին *արժեք*: Դա այն է, ինչը շատ կարևոր է, խիստ թանկ, առանց որի մարդը չի կարող պատկերացնել իր լիարժեք կյանքը:

Քննարկում

Ձեր կարծիքով՝ այս կամ այն արժեքը գնահատելու, կարևորելու համար անհրաժե՞շտ է արդյոք գիտելիքների որոշակի պաշար և կենսափորձ:

Օրինակ՝ նա, ով սիրահարված է, կարծում է, թե իր սիրած էակն աշխարհում ամենագեղեցիկն է, թեկուզև ուրիշները համաձայն չլինեն դրան: Ժամանակի ընթացքում, հնարավոր է, որ փոխվի մարդու կարծիքն իր «սիրո առարկայի» վերաբերյալ: Կամ հայրենիքի պաշտպանությունը մի դեպքում կարող է լինել հայրենիքի նկատմամբ սիրո, նվիրվածության արտահայտություն, մյուս դեպքում՝ դիտվել որպես քաղաքացիական պարտքի կատարում (այսինքն՝ մենք դա կատարում ենք՝ պարզապես ենթարկվելով օրենքին):

Առանց հայրենիքի պատմության, սեփական մշակույթի որոշակի իմացության դժվար է պատկերացնել ճշմարիտ, գիտակցված հայրենասիրությունը:

Թվարկե՛ք արժեքներ, որոնք, ձեր կարծիքով, երբևէ չեն կորցնի իրենց նշանակությունը: Ինչո՞ւ եք այդպես կարծում:

Մեր օրերում ականատես ենք լինում դարավոր արժեքների էական, լուրջ փոփոխության: Օրինակ՝ վաղ բուրժուական ժամանակներում, երբ ձևավորվում էր ժամանակակից Եվրոպան, աշխատանքը համարվում

էր մարդու կարևորագույն պահանջմունքներից մեկը, առանց որի մարդկային կյանքը կհամարվեր իմաստազրկված: Մարդիկ, որոնք չէին աշխատում, այն դարաշրջանում հասարակության կողմից արհամարհանքի էին արժանանում: Աշխատանքի նկատմամբ այսպիսի վերաբերմունքը բնորոշ է նաև մեր ժամանակներին:

Սակայն հանրային գիտակցության մեջ գոյություն ունի նաև մեկ այլ պատկերացում, համաձայն որի՝ աշխատանքը մարդու ամենաառաջնային արժեքը չէ. ուղղակի պետք է փող՝ զվարճանալու, կյանքի հաճույքները վայելելու համար: Ըստ այդպիսի պատկերացման՝ փող կարելի է ձեռք բերել ոչ միայն աշխատանքով, այլև, եթե հաջողակ լինես, և բախտը ժպտա քեզ:

Այժմ արդեն մարդկանց մեծ մասը, գիտակցելով այդպիսի մտածողության ոչ ճիշտ, պատրանքային լինելը, կրկին բարձրացնում է աշխատանքի՝ նախկինում ունեցած հասարակական արժեքը վերականգնելու խնդիրը:

Աշխատանքից բացի՝ մարդկանց համար գոյություն են ունեցել և ունեն շատ այլ արժեքներ՝ ազատություն, պատասխանատվություն, արդարություն, բարություն, սեր, հավատարմություն և այլն:

Իսկ ինչպե՞ս կարելի է բացահայտել արժեքների վերաբերյալ սեփական պատկերացումները:

Ինչպես ասվեց, արժեքները հաստատուն, մեր կյանքում շատ կարևոր նշանակություն ունեցող կողմնորոշիչներ են: Բոլոր մարդիկ ունեն արժեքների սեփական «հավաքածուները», որոնց հետևում ենք կարևոր որոշումներ կայացնելիս: Դրանք օգնում են մեզ պարզելու, թե ինչ ակնկալիքներ կարող ենք ունենալ մեզանից և ուրիշներից:

ՈՆՉ ԵՆՔ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ: ՄԱՐԴԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՔ

Հետևյալ հարցերին պատասխանելով՝ կարող ենք բացահայտել, թե **ինչ ենք արժևորում.**

- արդյո՞ք կա ինչ–որ բան, որ կարևոր է մեզ համար.
- արդյո՞ք լավ ենք զգում, երբ գիտակցում ենք դրա կարևորությունը մեզ համար.

- արդյո՞ք լավ ենք զգում, երբ տեսնում ենք, որ ուրիշներն էլ են կարևորում դա.
- արդյո՞ք լավ կզգանք, եթե մարդիկ, ում հարգում ենք, իմանան, որ մենք արժևորում ենք դա.
- արդյո՞ք երբևէ արել ենք ինչ-որ բան, որը ցույց է տվել դրա կարևորությունը.
- արդյո՞ք կշարունակենք արժևորել դա, եթե տեսնենք, որ ծիծաղի առարկա ենք դառնում:

Շատ հաճախ հայտնվում ենք այնպիսի իրավիճակներում, երբ երկու իրար հակասող արժեքների միջև ընտրություն պետք է կատարել: Այդ ժամանակ պետք է պատրաստ լինենք ինքներս մեզ համար որոշելու, թե դրանցից որն է ավելի կարևոր: Նաև պետք է գիտակցենք, որ պատասխանատու ենք այդ որոշման համար:

Նայելով բերված նկարին՝ ի՞նչ արժեքներ կարող եք թվարկել: Փորձե՛ք անուն տալ նկարին:

Գործնական առաջադրանք 1

Ուսումնասիրե՛ք տվյալ ամսվա ընթացքում մամուլում, հեռուստատեսությամբ, էլեկտրոնային լրատվամիջոցներով տարածվող գովազդի օրինակներ և տեղորում պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

Ի՞նչ արժեքներ են գովազդվում:	
Արդյո՞ք կրում եք այդ արժեքները:	
Կա՞ն արժեքներ, որ չեք կրում:	
Ըստ ձեզ՝ գովազդատուն ի՞նչ կարծիք ունի ձեր կողմից կարևորվող արժեքների վերաբերյալ:	
Արդյո՞ք գովազդը փորձում է ազդել ձեր կողմից կարևորվող արժեքների վրա:	

Գործնական առաջադրանք 2

Բացահայտե՛ք իրար հակասող արժեքներ ստորև բերված ենթադրյալ իրավիճակներում:

Իրավիճակ 1

Դուք վատ եք սովորում մաթեմատիկա առարկան, սակայն ձեր ծնողները ճնշում են գործադրում ձեզ վրա, որ ավելի բարձր գնահատականներ ստանաք: Ավարտական քննությունից մեկ օր առաջ ձեր ընկերներից մեկը գաղտնի իմանում է քննական առաջադրանքները և ձեզ առաջարկում է միասին պատրաստվել դրանց: Դուք մինչ այդ երբեք խաբեությամբ չեք զբաղվել:

Իրավիճակ 2

Դուք սիրով հաճախում եք մարզական ակումբ: Պարապմունքներից մեկից հետո տեսնում եք, որ ակումբակից ընկերներից մեկը վնասում է ձեր մարզիչի ավտոմեքենան: Մարզիչը տեղեկանում է, որ տեսել եք այդ գործողությունը, և սպառնում է հեռացնել ձեզ ակումբից, եթե չտաք մեղավորի անունը: Մինչ այդ դուք երբեք չեք «ծախել» որևէ մեկի:

Իրավիճակ 3

Ձեր ընկերներից մեկին երդվել եք չբացահայտել իր գաղտնիքը այն մասին, որ ինքը «անհույս» սիրահարված է դասարանցիներից մեկին: Ձեր ավագ եղբայրը, սակայն, համառորեն ցանկանում է իմանալ դրա մասին: Դուք միշտ պահել եք ձեր խոստումը:

Ընթերցեք ստորև բերվող նյութը և առանձնացրեք այն նախադասությունները, որոնցում խոսվում է այս կամ այն արժեքի մասին: Ի՞նչ արժեք է դա: Փորձեք նշել նաև այն արժեքները, որոնց մասին գրվածքում անուղղակիորեն է ասվում:

Միաժամանակ նշեք, թե Չապլինի համար *ինչ արժեք է մարդը:*

Չարլի Չապլինի նամակը դպրերը

Դստրիկս, հիմա գիշեր է: Ծննդյան գիշեր: Իմ փոքրիկ ամրոցի բոլոր անզեն պահապանները քնել են: Քնած են և եղբայրդ ու քույրդ:

Ինչքա՜ն հեռու եմ քեզանից, բայց թող կուրանան աչքերս, թե քո պատկերը թեկուզ մի ակնթարթ հեռանում է աչքիս առաջից: Նա այնտեղ է՝ իմ սեղանին, այստեղ՝ սրտիս մեջ, այդտեղ՝ հեքիաթային Փարիզում, ուր դու փառահեղ թատրոնի բեմահարթակի վրա ես...

Գեղեցկուհի՛ եղիր և պարի՛ր, ա՛ստղ եղիր ու փայլի՛ր, բայց եթե հանդիսատեսի ցնծությունն ու շնորհակալության խոսքերն արբեցնեն քեզ, եթե գլուխդ պտտվի քեզ ընծայված ծաղիկների բույրից, ապա քաշվի՛ր մի անկյուն և կարդա՛ իմ նամակը, ունկնդի՛ր եղիր հորդ ձայնին:

Գիտե՞ս, թե քանի գիշեր եմ անցկացրել քո մահճակալի մոտ, երբ դու փոքր էիր. քեզ հեքիաթներ էի պատմում և՛ քնած գեղեցկուհու, և՛ մշտարթուն վիշապի մասին.... Ես տեսնում էի քո երազանքները, Ջերալդի՛նա, տեսնում էի քո ապագան, քո այսօրը, ես տեսնում էի բեմահարթակի վրա խաղացող մի աղջկա, երկնքում ճախրող մի փերու:

....Պարի՛ր: ....Այդ պարերն ու ծափահարությունների որոտը քեզ երկի՛նք կհանեն: Բարձրացի՛ր: Բարձրացի՛ր այնտեղ, աղջի՛կս, բայց և վերադարձի՛ր երկիր. դու պետք է տեսնես՝ ինչպես են ապրում մարդիկ, ինչպես են ապրում ծայրամասերի փողոցի պարուհիները. նրանք պարում են՝ ցրտից և սովից դողալով: Ես այնպիսին եմ եղել, ինչպիսին նրանք են, Ջերալդի՛նա: ....Ես շատ հեքիաթներ եմ պատմել քեզ այն երկար գիշերներին, բայց իմը՝ իմ հեքիաթը, չեմ պատմել: Իսկ դա նույնպես հետաքրքիր է: Հեքիաթ՝ քաղցած ծաղրածուի մասին, որ պարում ու երգում էր Լոնդոնի աղքատ թաղամասերում, իսկ ապա... ողորմություն հայցում...

Ահա նա՝ իմ հեքիաթը: Ես գիտեմ՝ ինչ բան է սովը, ինչ է անօթևան լինելը: Դեռ ավելին, ես ճաշակել եմ ստորացնող մորմոքը այն թափառական ծաղրածուի, որի կրծքի տակ փոթորկում էր հպարտության մի ամբողջ օվկիանոս, և այդ հպարտությունը մեռցնում էին նետված դրամները...

Քո անվանը, Ջերալդի՛նա, հետևում է իմը՝ Չապլին: Այդ անունով ես ավելի քան քառասուն տարի ծիծաղեցրել եմ մարդկանց: Բայց ես ավելի շատ եմ լաց եղել, քան նրանք ծիծաղել են: Ջերալդի՛նա, այն աշխարհում, որտեղ ապրում ես դու, միայն պարերն ու երաժշտությունը չէ, որ գոյություն ունեն... Կեսգիշերին, երբ դու դուրս ես գալիս մեծ դահլիճից, կարող ես մոռանալ քո հարուստ երկրպագուներին, բայց մի՛ մոռանա այն տաքսու վարորդին, որը քեզ տուն է տանում, հարցրո՛ւ նրա կնոջ մասին.... Եվ եթե նրանք փող չունեն, փո՛ղ դիր նրա ձեռքը: Ես կարգադրել եմ,

որ բանկում վճարեն քո այդօրինակ ծախսերը: Ժամանակ առ ժամանակ օգտվիր մետրոյից կամ շրջիր ավտոբուսով և ավելի հաճախ քայլիր, դիտիր քաղաքը: Ջնայիր մարդկանց, նայիր այրիներին ու որբերին և գոնե օրը մեկ անգամ ասա՛ ինքդ քեզ. «Ես այնպիսին եմ, ինչպիսին նրանք են»: Այո՛, դու հենց այնպիսին ես, ինչպիսին նրանք են, դստրիկս: Եվ նույնիսկ ավելի պակաս: Արվեստը նախքան մարդուն թևեր տալը, որպեսզի նա կարողանա ճախրել ամպերից վեր, սովորաբար կտրում է նրա ոտքերը: Եվ եթե գա այն պահը, երբ դու քեզ վեր զգաս հասարակությունից, անմիջապես թո՛ղ բեմը: Նստիր առաջին իսկ պատահած տաքսին և գնա՛ Փարիզի արվարձանները:

Դրանք ինձ շատ լավ ծանոթ են: Դու այնտեղ կտեսնես շատ պարուհիների, այնպիսիներին, ինչպիսին դու ես, նույնիսկ ավելի գեղեցիկների, ավելի նազելիների, ավելի հպարտների, քան դու ես: Քո թատրոնի լուսարձակների կուրացուցիչ լույսերն այնտեղ չկան: Նրանց լուսարձակը լուսինն է:

Նայիր, ուշադի՛ր նայիր: Չի՞ թվում քեզ արդյոք, որ նրանք քեզնից լավ են պարում: Խոստովանի՛ր, աղջիկս: Միշտ էլ կգտնվի մեկը, որ քեզնից լավ կպարի և քեզնից լավ կխաղա: Եվ հիշի՛ր՝ Չարլիի ընտանիքում չի եղել այնքան անտաշ մեկը, որ հայհոյեր կառապանին կամ ծաղրեր Սենայի ափին նստած աղքատին:

....Այս նամակի հետ քեզ ուղարկում եմ չլրացված դրամական վճարագիր, որպեսզի դու կարողանաս ծախսել այնքան, որքան ցանկանում ես: Բայց երբ ծախսես երկու ֆրանկ, մի՛ մոռացիր հիշեցնել քեզ, որ երրորդը քոնը չէ և պետք է պատկանի այն անծանոթին, որն ունի դրա կարիքը: Իսկ դու կգտնես այդպիսի մեկին: Ես խոսում եմ փողի մասին, որովհետև գիտեմ դրա դիվային ուժը: Գիտե՞ս, ես շատ ժամանակ եմ անցկացրել կրկեսում և միշտ երկյուղ եմ զգացել լարախաղացների համար: Բայց պետք է քեզ, աղջիկս, ասեմ մի ճշմարտություն. մարդիկ գետնի վրա ավելի անհաստատ են, քան լարախաղացները՝ երերուն լարի վրա: Գուցե կարող է պատահել՝ այս գիշեր քեզ կուրացնի մի թանկագին ադամանդի փայլ. հենց դա էլ կլինի քո անհուսալի պարանը, և քո անկումն անխուսափելի է:

....Ուզում եմ հավատալ, որ ծննդյան այս գիշերը հրաշքների գիշեր է: Ես կցանկանայի, որ հրաշք կատարվեր, որ դու իսկապես հասկանայիր այն ամենը, ինչ ցանկացա ասել քեզ:

....Ես հրեշտակ չեմ եղել, բայց, որքան կարողացել եմ, ձգտել եմ մարդ լինելու:

Դո՛ւ էլ փորձիր:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ո՞ւմ եք համարում հերոս: Ինչո՞ւ: Ի՞նչ արժեքներ ունի նա կամ ինչի՞ն է հավատում: Ի՞նչ դասեր կարող ենք քաղել նրանից:**
2. **Պատկերացրե՛ք՝ 100 տարի հետո ձեր հետնորդները հանրագիտարանում հանկարծ ձեր մասին հոդված են գտնում: Ի՞նչ է պատմում հոդվածը ձեր մասին: Ի՞նչ արժեքներով եք առաջնորդվել: Ի՞նչ եք արել ձեր կյանքում: Գրե՛ք այդ մասին կես էջի սահմաններում:**
3. **Գրե՛ք ինչ-որ դիպվածի մասին, երբ որևէ մեկի արարքը հակասել է ձեր արժեքներին: Ինչպե՞ս է պատահել: Ի՞նչ եք զգացել: Դուք փոխե՞լ եք ձեր վերաբերմունքը կամ դիրքորոշումը դրանից հետո: Ի՞նչ եք սովորել այդ դիպվածից:**

Կատարե՛ք թվարկված հանձնարարություններից մեկը՝ ձեր ընտրությամբ:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Հավանաբար չկա աշխարհում մարդ, որ հաճույքով չարտասանի *ազատություն* բառը:

Ինչ է ազատությունը: Փորձենք միասին գտնել այդ դժվար հարցի պատասխանը: Իսկ գուցե ամենևին էլ դժվար չէ՞: Դա պարզ կլինի ձեր պատասխաններից: Պարտադիր չէ, որ դրանք խիստ պահանջներով կազմված սահմանումներ լինեն: Կարևոր է, որ միտքը հասկանալի լինի: Օրինակ՝ *ազատությունն այն է, երբ ինձ ոչ ոք չի հարկադրում անել այն, ինչ ես չեմ ուզում, կամ՝ ազատությունն այն է, երբ ես կատարում եմ այն, ինչ ցանկանում եմ:*

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

17–րդ դարի հոլանդացի իմաստասեր Բ. Սպինոզան հետևյալ ուշագրավ միտքն է արտահայտել. *«Ազատ կանվանեմ նրան, ով ղեկավարվում է միայն գիտակցությամբ»:*

Երբ կարդում ենք Սպինոզայի խոսքերը, առաջին հայացքից դրանք գուցեև զարմանալի թվան. ինչ կապ ունի ազատությունը գիտակցության հետ:

Ասվածի իմաստը հասկանալու համար այսպիսի օրինակ բերենք: Պատկերացնենք, թե նույն ցանկությունը *(ինչ ուզում եմ, անում եմ)* երեխան է ունենում: Ինչ հետևանքներ կունենա այդ ցանկության կատարումը, եթե նա չգիտի, ասենք՝ փուշեկուլը կամ համակարգիչը աշխատեցնելու ձևը: Դրա հետևանքով կարող է փչանալ սարքը կամ, որ ավելի վատ է, սխալ միացման հետևանքով՝ բնակարանի հոսքագիծը: Իսկ ինչ կարող է մեզ հետ կատարվել, եթե չգիտենք, օրինակ՝ ավտոմեքենա վարել, բայց փորձում ենք դա անել: Հասկանալի է, թե ինչ վտանգավոր հետևանքներ կարող է դա ունենալ թե՛ «ինքնակոչ վարորդի», թե՛ շրջապատի մարդկանց համար:

Ուրեմն, որևէ գործողություն կատարելիս, մանավանդ այն դեպքում, եթե դա կատարում ենք մեր կամքով՝ առանց որևէ հարկադրանքի, պետք է գիտակցենք, հասկանանք մեր արարքի նպատակը, պատկերացնենք դրա հնարավոր հետևանքները: Մեծանալով ու հասու-

նանալով սովորում ենք կշռադատել մեր արարքները և գիտակցել դրանց հետևանքների համար պատասխանատու լինելու անհրաժեշտությունը:

Այսպիսով, վերևում ասվածը՝ *ազատությունն այն է, երբ կատարում եմ այն, ինչ ցանկանում եմ, գուցեև պետք է վերաշարադրել՝ ազատությունն այն է, երբ կարողանում եմ կատարել այն, ինչ ցանկանում եմ՝ գիտակցելով դրա հետևանքները:*

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ: ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Իսկ հիմա պատկերացնենք, թե ինչ կկատարվի, եթե մի օր հանկարծ բոլորը որոշեն, որ իրենք *«ազատ մարդիկ են և պարտավոր չեն կատարել այն, ինչը սովորաբար անում են»:* Այսինքն՝ հացթուխները հրաժարվեն հաց թխելուց, քաղաքային կամ միջքաղաքային փոխադրամիջոցների վարորդները՝ մեքենա վարելուց, էլեկտրաէներգիա, ջուր և գազ մատակարարող ձեռնարկություններում աշխատողները՝ իրենց պարտականությունները կատարելուց և այսպես շարունակ:

- *Ի՞նչ եք կարծում, ի՞նչ իրավիճակ կստեղծվի բոլորի համար: Առաջարկե՛ք որևէ խելամիտ ելք ստեղծված պայմաններում:*

Շարունակելով քննարկումը՝ փորձենք հասկանալ՝ արդյո՞ք ազատությունը սահմաններ ունի, և ինչո՞վ են դրանք պայմանավորված.

- մեկ ուրիշի ազատությամբ, օրինակ՝ «քո ձեռքերի ազատությունը վերջանում է այնտեղ, որտեղ սկսվում է իմ քիթը»,
- սեփական անձի պահանջմունքներով, օրինակ՝ «դու կարող ես ընտրել ուտելիքը, սակայն չես կարող ընդհանրապես հրաժարվել դրանից»,
- օրենքներով, կանոններով և այլ պարտադիր նորմերով, օրինակ՝ «չի կարելի մի քանի խնձոր պոկելու համար տրորել ուրիշի այգին»,
- բարոյական կանոններով, օրինակ՝ «ընդունված չէ թանգարան գնալ լողազգեստով»:

Գործնական առաջադրանք

Վերլուծե՛ք բերված օրինակները և բերե՛ք ազատության սահմանափակման այլ օրինակներ:

Ազատության սահմանափակումն այլ կերպ անվանում են պատասխանատվություն: Ազատության և պատասխանատվության հարաբերակցության խնդրին կանդրադառնանք ավելի ուշ:

◈ *Ստորև թվարկված ասույթներից որո՞նք են, ձեր կարծիքով, առավել հաջողվածները: Կա՞ն արդյոք մտքեր, որոնց համաձայն չեք: Ինչո՞ւ:*

Ասույթներ

Ազատություն նշանակում է պատասխանատվություն: Ահա թե ինչու են շատերը վախենում դրանից:

Բեռնարդ Շոու

Պարտականությունը այն գինն է, որ յուրաքանչյուր մարդ պետք է վճարի ազատության համար:

Էդիթ Համիլտոն

Ազատությունը այն ամենն անելու իրավունքն է, ինչը չի վնասում ուրիշներին:

Մատիաս Կլաուդիուս

Այն, ինչը որոշ պայմաններում կոչվում է ազատություն, այլ պայմաններում կոչվում է սանձարձակություն:

Քվինտիլիանոս

Ազատությունը պարապություն չէ, այլ սեփական ժամանակը ազատորեն տնօրինելու և իր համար գրաղմունքի տեսակ ընտրելու հնարավորություն: Կարճ ասած՝ ազատ լինել նշանակում է ոչ թե անգործության մատնվել, այլ անձամբ որոշել ինչ անելը և ինչ չանելը:

Ժան Լաբրյուեր

Միայն հիմարներն են կամայականությունն անվանում ազատություն:

Տակիտոս

Չկա մարդ, որն ազատությունը չսիրի: Բայց արդարամիտը դա պահանջում է բոլորի համար, անարդարամիտը՝ միայն իր:

Լյուդնիգ Բյոռնե

Ազա՛տ եղիր՝ օրենքի գերին մնալով:

Կիկերոն

ԼՐԱՅՈՒՅԻՉ ՆՅՈՒԹ

Եղնիկը

«Մի անգամ իմ բարեկամ մի որսորդ մեր հանդի անտառուտ սարերից մի եղնիկ նվեր բերեց երեխաներիս համար»:

Այսպես սկսեց ընկերս աշնանային մի երեկո, երբ, նստած միասին նրա պատշգամբում, հիացած նայում էինք հեքիաթային վերջալույսով վառվռուն սարերին, որոնց վրա մակաղած հոտերի նման մեղմորեն հանգչում էին ոսկեգեղմ անտառները:

«Դա մի մատաղ ու խարտյաշ եղնիկ էր՝ խորունկ, սև ու ջինջ աչքերով, որ ծածկվում էին երկայն, նուրբ թարթիչների տակ:

Կամաց–կամաց մեզ սովորեց նա. էլ չէր փախչում, չէր վախենում մեզնից. մանավանդ շատ էր մտերմացել երեխաներիս. նրանց հետ միասին վազվզում էր պարտեզում, նրանց հետ ճաշում էր, նրանց հետ քնում:

Մի բան ինձ շատ էր զարմացնում:

Եղնիկը թեև այնպես ընտելացել էր մեզ, սովորել էր մեր տանն ու դռանը, բայց մեկ–մեկ մեզնից թաքուն բարձրանում էր այս պատշգամբը և ուշադիր, լռիկ նայում էր հեռու՝ անտառներով փաթաթված սարերին. ականջները լարած՝ խորասույզ լսում էր անտառների խուլ ու անդուլ շառաչը, որ երբեմն ուժեղանում էր, երբեմն թուլանում՝ նայելով հովերի թափին: Նայում էր նա այնպես անթարթ և այնպես ինքնամոռաց, որ երբ պատահում էր՝ բարձրանում էի պատշգամբը, ինձ բավական միջոց չէր նկատում և երբ հանկարծ ուշքի էր գալիս, նետի պես ծլկում էր մոտիցս...

Երբ գրկում էի նրան՝ այդ նազելի էակին, և նայում էի լեռնային աղբյուրների նման վճիտ աչուկների մեջ, տեսնում էի այնտեղ մի թախծալի, երազուն կարոտ...

Մի գիշեր, մի քամի գիշեր էր. սարերից անսանձ փչում էր քամին, դուռն ու պատուհանները ծեծում ու ծեծկում: Պարզ լսվում էր, որ այնտեղ՝ անտառում, դարավոր կաղնիներն ու վայրի ընկուզենիները ճակատում էին հողմի դեմ, աղմկում և գոռում: ...

Երեխաներս վախից կուչ էին եկել. մինչդեռ եղնիկը դողում էր մի խենթ սարսուռով: Աչքերը կայծակին էին տալիս: Անթարթ, ամբողջովին լսելիք դարձած՝ ականջ էր դնում անտառի հուժկու շառաչին, որ խոսում էր նրա հետ մայրենի լեզվով:

«Անտառը կանչում է նրան, ընկերների ազատ վազքն է տեսնում նա մթին թավուտների մացառուտ ժայռերն ի վեր», — մտածում էի ես:

Մի փոքր հետո ավելի սաստկացավ քամին՝ փոթորիկ դառնալու չափ. մեկ էլ աղմուկով բացվեցին լուսամուտի փեղկերը, և մի ուժգին շառաչ միանգամից ներս խուժեց: Եղնիկը հանկարծակի մի ոստումով ցատկեց լուսամուտի գոգը՝ աչքերը սուզելով շառաչուն խավարի մեջ: Ես իսկույն վրա վազեցի՝ բռնելու նրան, սակայն նա մի ակնթարթի մեջ թռավ լուսամուտից պարտեզը և ծածկվեց խավարի մեջ...

Դեհ, հիմա գնա՛ ու գտի՛ր նրան իր հայրենի անծայր անտառներում...»:

Ավետիք Իսահակյան

- *Ինչ կարծիք ունեք կենդանաբանական այգում վայրի կենդանիներ պահելու մասին:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է ազատությունը: Բերե՛ք առնվազն երեք բացատրություն:
2. ***«Ազատ կանվանեմ նրան, ով ղեկավարվում է միայն գիտակցությամբ»:*** Ինչպե՞ս կարելի է բացատրել Սպինոզայի այս դատողությունը:
3. Ձեր կարծիքով՝ ո՞ր դեպքում մարդու ազատությունը կարող է սահմանափակվել:

ԴԱՍ 10–11 ԻՆՉ Է ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ: ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

ԻՆՉ Է ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեր առօրյա կյանքում շատերն են ասում, որ ինչ–որ մեկը կամ ինչ–որ բան արդար է կամ անարդար: Ամեն օր շփվում ենք արդարության խնդրին տանը, դպրոցում կամ շրջապատում: Իսկ ինչպե՞ս կարող ենք որոշել՝ որն է արդար, և որը՝ անարդար: Որոշ իրավիճակներում շատ հեշտ է գտնել արդարացի լուծումներ, մինչդեռ կան իրավիճակներ, երբ շատ դժվար է եզրահանգումներ կատարելը:



Պլատոն

Պետության ծագումը նաև արդարության ծագումն է:

Քննարկում

- *Նշե՛ք իրավիճակներ ձեր կյանքից, երբ արդար եք եղել, և իրավիճակներ, երբ անարդարացի եք վարվել:*
- *Արդյո՞ք հիմնավորված էր անարդար լինելը: Երբևէ ասե՞լ եք. «Դա անարդար է»: Ինչպե՞ս եք իմանում, որ ինչ–որ բան անարդար է:*
- *Ինչ–որ մեկը ձեզ մոլորեցրել կամ խաբե՞լ է: Ի՞նչ եք զգացել:*

Մարդիկ միշտ ձգտել են *հավասարության* և *արդարության*, քանի որ դրանց ապահովումը լավ հասարակություն կառուցելու նախապայման է: Արդարության գաղափարը եղել է բոլոր հասարակություններում: Տարբեր ժամանակներում իշխանության ներկայացուցիչներն էլ դա հիմնական նպատակ են համարել կամ գոնե ի լուր աշխարհի հայտարարել են այդ մասին:

Արդարության գաղափարի հիմքում ընկած է արդարացի, անաչառ լինելը: Մասնագետների կարծիքով՝ յուրաքանչյուրը, այդ թվում՝ փոքր երեխան, ունի արդարության բնածին զգացողություն, պահանջարկ: Երբ փոքր երեխան վրդովված ճչում է, նա որոշակի «անարդարության» մասին է հայտնում:

Բոլոր հասարակություններում մարդիկ իրենց մտահոգությունն են արտահայտել տիրող անարդարությունների վերաբերյալ: Չնայած դրան՝ գոյություն չունի արդարության ընդհանրական, բոլորի կողմից ընդունված սահմանում:

Համաշխարհային պատմության դասընթացից մեզ հայտնի բյուզանդական կայսր Հուստինիանոսը (527–565) արդարությունը ներկայացրել է որպես *«մշտական և հավերժական ցանկություն, որը ստիպում, հարկադրում է ամեն մեկին իրավացիորեն կատարելու իր պարտականությունները»:* Արդարության այդ սահմանումը այսօր էլ համախոհներ ունի:

Շատ մտածողներ կարծում են, որ արդարությունն այն է, ինչին անհատը հասել է, կամ ինչին ինքը արժանի է: Հին հունական իմաստասերներն արդարության գաղափարը դիտարկել են ազնվության և հավասարության գաղափարների հետ միասին: Նրանք արդարությունը նույնացրել են ճշմարտացիության, ներդաշնակության և առաքինության հետ: Քաղաքացուց ակնկալվել է, որ իր գործողությունների կամ հասարակական տարբեր խնդիրների քննարկման ու լուծման ժամանակ նա միշտ մտածի ներդաշնակ պայմանների, արդար և առաքինի գործողությունների մասին:

Արդարության գաղափարի կարևորագույն առանձնահատկություններից է «մեկ արշինով չափելը», այսինքն՝ մարդկանց, նրանց արածը միևնույն չափանիշով գնահատելը, տարբերություն չդնելը: Դատավորն ունի մեկ կշեռք, որով կշռում է հարուստին և աղքատին, մեծին և փոքրին: Նրա դատավճիռը պայմանավորված է ոչ թե անհատով, այլ գործի հանգամանքներով:

Այսինքն՝ մարդուն գնահատելու, դատելու համար դիտարկում ենք նրա վարքագիծը, նրա կատարած գործողությունը և դրա արդյունքը, ոչ թե այդ մարդուն՝ ըստ իր հատկանիշների (սեռ, տարիք, հասարակական պատկանելություն և այլն): Օրինակ, երբ սովորողը փչացնում է դպրոցի գույքը, արդարությունը պահանջում է պատժել նրան իր արածի և դրա հետևանքների

համար՝ հաշվի չառնելով սովորողի առաջադիմությունը, ծնողների ով լինելը կամ այլ հատկանիշներ:

Սակայն առկա են բազմաթիվ իրադրություններ, երբ մարդկանց՝ տարբեր կերպ վերաբերվելն արդարացի է: Օրինակ՝ արդարացի ենք համարում, երբ ծնողներն իրենց երեխաներին սիրում և ուշադրություն են դարձնում ավելի շատ, քան ուրիշների երեխաներին:

Մի շարք հանգամանքներում արդարացի են համարվում հասարակության մեջ ընդունված որոշ կանոններ: Դրանցից է *«առաջինը՝ առաջինին»* սկզբունքը, երբ առաջինը հասնողին ավելի շուտ է բաժին ընկնում այն, ինչի համար մարդիկ հավաքվել են: Կամ խանութում հերթը առջևում կանգնածներին ավելի շուտ է հասնում, իսկ թատրոնի տոմս գնելիս նրանք տեղերի ավելի մեծ ընտրություն ունեն:

Արդարացի է, որ սոցիալական աջակցություն ցուցաբերվի խոցելի խմբերին՝ անապահով մարդկանց, ընտանիքներին, հաշմանդամներին: Պետությունը նրանց վճարումներ է կատարում ընտանեկան նպաստների կամ կենսաթոշակների տեսքով:

Արդարացի է, երբ սխալ գործողը պատժվում է դրա համար, իսկ նրանք, ովքեր նման սխալներ չեն գործել, չեն պատժվում:

Վերջապես, արդարացի է, երբ նրանք, ովքեր ավելի շատ ջանքեր են ներդնում ընդհանուր գործի հաջողության համար, մյուսներից ավելի բարձր գնահատականի կամ վարձատրության արժանանան:

Կարիքը, արժանիքը, ներդրումը և *ջանքերն* արդարության գնահատման չափանիշներից են, որոնց միջոցով տարբերակված մոտեցում է ցուցաբերվում մարդկանց, նրանց գործունեությանը: Գնահատման ժամանակ երբեմն օգտագործվում են նաև այլ չափանիշներ, օրինակ՝ մարդկանց մասին դատելն՝ ըստ նրանց տարիքի, սեռի, ռասայի կամ կրոնական նախընտրության: Այսպիսի չափանիշները հիմնավոր չեն՝ անարդար են, և չեն նպաստում հասարակության ներդաշնակ զարգացմանը:

Խմբային աշխատանք

Հետևյալ իրավիճակներում նշե՛ք, թե որոնք են արդար, և որոնք՝ անարդար: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը՝ ելնելով արդարության սկզբունքներից:

- Գործատուն կին աշխատակիցների համար սահմանել է արտաքին տեսքի որոշակի կանոններ: Աշխատակիցներից շատերն ազատվել են աշխատանքից՝ տվյալ պահանջները կատարելուց հրաժարվելու համար:
- Պատերազմի ժամանակ տղամարդկանց պարտադիր զորակոչել են: Սակայն կանանց չեն զորակոչել:
- Հայաստանում տղամարդկանց ֆուտբոլին մեծ ուշադրություն է դարձվում, և այդտեղ տասնապատիկ անգամ ավելի մեծ գումարներ են ներդրվում, քան բասկետբոլի, լողի, կանանց ֆուտբոլի զարգացման վրա՝ միասին վերցրած:
- Հանրային գերակա շահի հիմնավորումով (մայրուղի կառուցելու համար) մարդկանց տեղահանել են իրենց բնակարանից՝ տալով փոխհատուցում: Արդյո՞ք կփոխվի ձեր պատասխանը, եթե տվյալ տարածքը տրամադրվի օտարերկրյա ներդրողի՝ գործարան կառուցելու համար:
- Բարձրաստիճան պաշտոնյան սեռական ոտնձգություն է կատարել երիտասարդ աղջկա նկատմամբ, որը պաշտպանվելու նպատակով ձեռքի տակ ընկած դանակով հարվածել է նրան: Պաշտոնյան մարմնական վնասվածքով տեղափոխվել է հիվանդանոց: Ոստիկանությունը ձերբակալել է աղջկան և մեղադրանք առաջադրել:
- Մինչև 21 տարեկաններին արգելվում է օգտագործել ոգելից խմիչք: Այդ պահանջը չկատարողների նկատմամբ սահմանվել է խոշոր տուգանք:
- Երևանի սրճարաններից մեկում արգելվում է ծխել այլ քաղաքների գրանցում ունեցող բոլոր անձանց:

Առաջադրանք

Տպագիր կամ էլեկտրոնային թերթերից կամ հանդեսներից ընտրե՛ք հոդվածներ, որոնցում արծարծվում են արդարությանն առնչվող հարցեր:

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

Քննարկում

- *Ինչ եք հասկանում՝ արդարության իրավական կողմ և արդարության բարոյական կողմ ասելով:*
- *Բերեք օրինակներ ձեր առօրյայից:*



Մարտին Լյութեր Քինգ
Աշխարհի որևէ վայրում տեղի ունեցող անարդարությունը սպառնալիք է համընդհանուր արդարությանը:

Արդարությունն ունի երկու «երես»՝ իրավական և բարոյական, որոնցից առաջինը կարգավորվում է *օրենսդրությամբ*, իսկ երկրորդը՝ հասարակական կյանքի այն կանոններով, որոնք ընդունված է անվանել *բարոյական նորմեր:*

Առաջին դեպքում արդարությունն ապահովվում է օրենքների, որոշումների, հրամանագրերի, կարգերի և իրավական այլ փաստաթղթերի միջոցով, որոնցից բխում է, թե ինչ իրավունքներ և ինչ պարտականություններ ունի մեզնից յուրաքանչյուրը:

Օրենսդրության կարևորագույն խնդիրը հասարակության բոլոր անդամների համար արդարություն ապահովելն է: Այսինքն՝ եթե մարդը հանցագործություն է կատարել, ապա սահմանված պատիժը համապատասխան, համարժեք լինի նրա կատարած արարքին: Կամ՝ եթե որևէ մեկը բարձր առաջադիմություն է ցուցաբերել ուսման ընթացքում, ապա դա գնահատվի ըստ արժանվույն (օրինակ՝ կարողանա դրան համապատասխան աշխատանք գտնել):

Օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտեր ստեղծում է պետական իշխանությունը, որը և ապահովում է դրանց կատարումը: Այդ նպատակով ստեղծված են պետական համապատասխան մարմիններ՝ դատարաններ, ոստիկանություն, քրեակատարողական հիմնարկներ և այլն: Օրենքի խախտման դեպքում արդարության վերականգնման նպատակով այդ պետական մարմինների կողմից սահմանվում և իրագործվում է որոշակի պատիժ՝ տուգանքի, ազատազրկման կամ այլ ձևով:

Ճիշտ է՝ օրենսդրության խնդիրն է ապահովել արդարության և հավասարության սկզբունքները, սակայն իրավական շատ փաստաթղթեր երբեմն հասարակության անդամների կողմից ընկալվում են որպես անարդարացի:

Այսպես, ազատության համար պայքարի մեծ գործիչ Մարտին Լյութեր Քինգը անցյալ դարի վաթսունական թվականների *Ամերիկյան քաղաքացիական իրավունքների* շարժման մասնակիցներին հորդորում էր *«ընդունել փոթորիկն առանց հակադարձության ու հակընդդիմության, համբերատարությամբ դանել բանտի չարչարանքները՝ արդարությունը պահպանելու համար»:* Երբ նրան հարցրել են, թե ինչպես կարելի է խախտել որոշ օրենքներ և հնազանդվել մյուսներին, նա պատասխանել է.

«….Երկու տեսակի օրենքներ կան՝ արդար և անարդար: Ես կլինեմ առաջինը, ով ձեզ խորհուրդ կտա հնազանդվելու արդար օրենքներին: Մարդն ունի ոչ միայն իրավական, այլև բարոյական պատասխանատվություն՝ հնազանդվելու արդար օրենքներին: Նմանապես, մարդը բարոյական պատասխանատվություն ունի չհնազանդվելու անարդար օրենքներին: Ես համաձայն եմ Սուրբ Օգոստինոսի հետ. «Անարդար օրենքն օրենք չէ ընդհանրապես….»:

Հուսով եմ, որ ի վիճակի եք հասկանալու իմ տեսակետը: Ոչ մի դեպքում խորհուրդ չեմ տալիս խույս տալու կամ արհամարհելու օրենքները….: Դա կտանի դեպի անիշխանություն: Մարդը, որը խախտում է անարդար օրենքը, պետք է դա անի բաց ձևով և պատրաստակամ լինի ընդունելու պատիժը: Ես համոզված եմ, որ անհատն իրականում արտահայտում է օրենքի հանդեպ բարձրագույն հարգանք, երբ խախտում է մի օրենք, որն, ըստ իր գիտակցության, անարդար է, և կամավոր ընդունում է ազատազրկման պատիժը, որպեսզի բարձրացնի հասարակության անդամների գիտակցությունն այդ անարդարության նկատմամբ»:

- *Համաձա՞յն եք արդյոք Մարտին Լյութեր Քինգի հետ:*
- *Ինչպե՞ս ենք մենք՝ ՀՀ քաղաքացիներս, ընդունում օրենքի պահանջը:*
- *Ի՞նչ դրական և բացասական կողմեր կարող եք նշել այստեղ:*
- *Ինչպե՞ս կարելի է շտկել իրավիճակը:*

Արդարության բարոյական կողմն առնչվում է ճիշտի և սխալի, բարու և չարի, արդարի և անարդարի, պարտքի և խղճի մասին մարդկանց պատկերացումներին: Բարոյականությունն առնչվում է այն կանոններին, որոնցով կարգավորվում է մարդու վարքագիծը հասարակության մեջ: Նա թելադրում է մեզ անել ինչ–որ բան կամ արգելում է կատարել մեկ այլ բան: Չնայած դրան՝ բարոյականի և իրավականի միջև հստակ սահմաններ դնելը դժվար է:

Բարոյական կանոնները ձևավորվում են հասարակության կողմից, և դրանց հիման վրա ստեղծվում է որոշակի հասարակական կարծիք:

Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս է ստեղծվում հասարակական կարծիքը: Ի՞նչ է անհրաժեշտ բարոյական նորմերի պահպանման համար:

Գործնական աշխատանք

Կարդացեք ստորև ներկայացված առաջադրանքը և փորձեք քննարկել խմբերում:

Պատկերացրեք, որ ձեր գաղտնիքը վստահել եք դասընկերոջը, որն անմիջապես դրա մասին տեղեկացրել է դպրոցի տնօրենին: Անկախ նրանից, թե ինչ արժեք ուներ գաղտնիքը, դրա բացահայտումը դասընկերոջը դարձնում է անվստահելի ամբողջ դասարանի համար:

Գաղտնիքը բացահայտած դասընկերը օրենքի տեսանկյունից պատասխանատվության ենթակա չէ: Սակայն շրջապատի մարդիկ (համադասարանցիները, ուսուցիչները, ծնողները, բարեկամները, ընկերները) սկսում են այլ կերպ վերաբերվել նրան՝ «ընդունված կանոնները խախտողին»: Հնարավոր է, որ նրա հետ դադարեն ընկերություն անելուց, հյուր հրավիրելուց, կարևոր հարցեր քննարկելուց, շփվելուց: Այսպիսով, եթե օրենքը նախատեսում է պատիժ՝ տուգանքի կամ ազատազրկման տեսքով, ապա բարոյական պատիժը կատարվում է մարդու թույլ տված «վատ» արարքի հասարակական դատապարտման, նրան ընկերական պարսավանքի ենթարկելու, համապատասխան այլ վերաբերմունքի արժանացնելու միջոցով:

Սակայն կան իրավիճակներ, երբ հասարակական սխալ կարծիք է ձևավորվում, որի հետևանքով արդարության վերականգնման փոխարեն տեղի է ունենում անարդարության խորացում: Օրինակ, երբ մարդը «վատ» արարք չի գործել, սա-

կայն բոլոր կասկածները ուղղորդվել են դեպի նա: Տվյալ իրավիճակում մեղավորի կարգավիճակում հայտնված մարդը պետք է բոլորին բացատրի իր անմեղության հանգամանքը և նկարագրի իրավիճակը իր տեսանկյունից՝ վերականգնելու համար նախկին հարգանքը, վստահությունը և հարաբերությունները:

Խմբային աշխատանք

Բաժանվե՛ք 4–5–հոգանոց խմբերի և դրանցում քննարկե՛ք ու տետրի մեջ կամ թղթի վրա լրացրե՛ք ներքևում բերված աղյուսակը: Հիշե՛ք օրինակներ ձեր կյանքից: Մի՛ խուսափեք այնպիսի իրավիճակներ ներկայացնելուց, որտեղ դուք արդարացի վարքագիծ չեք դրսևորել:

	Ովքե՞ր են եղել մեղադրողները:	Արդյո՞ք արդարացի են եղել մեղադրողները:	Արդյո՞ք վերականգնվել է արդարությունը: Ինչպե՞ս:
Նշե՛ք այնպիսի օրինակներ ձեր անձնական կյանքից, երբ մեղադրվել եք անարդարության համար:			
Նշե՛ք այնպիսի օրինակներ, երբ համայնքը կամ հասարակությունը, որում ապրում եք, մեղադրվել է անարդարության համար:			

ԴԱՍ 12 ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Ծանոթացե՛ք հետևյալ իրավիճակներին և քննարկե՛ք հարցերը:

Ա. Դուք ձեր դպրոցի ֆուտբոլի հավաքականի անդամ եք, սակայն ձեր մարզիչ–ուսուցիչը խաղերի ժամանակ ձեզ խաղի մեջ համարյա չի ընդգրկում՝ թողնելով պահեստայինների նստարանին: Մինչդեռ ձեզնից ավելի վատ խաղ ցուցաբերող թիմակիցները հաճախակի հայտնվում են դաշտում:

Բ. Երիտասարդ աղջիկն իր մայրիկի հետ տուն էր վերադառնում, երբ մոտենում է մի երիտասարդ և դանակը պահելով նրանց վրա՝ պահանջում իրեն տալ ոսկեղենը և դրամը: Գումարը և զարդեղենը ստանալուց հետո երիտասարդը բռունցքի մի քանի հարված է հասցնում կանանց և փախուստի դիմում: Շատ չանցած՝ ոստիկանությունը ձերբակալում է երիտասարդին: Վերջինս խոստովանում է իր մեղքը: Դատարանը նրան դատապարտում է վեց ամիս պայմանական ազատազրկման, այսինքն՝ երիտասարդը խուսափում է քրեակատարողական հիմնարկում պատիժը կրելուց:

Գ. Հանգստյան օրը մի քանի հոգի ներխուժել են դպրոց և վնասել դպրոցական գույքը: Դուք դրա հետ ոչ մի առնչություն չունեք, սակայն վկաներից մեկը պնդում է, որ դպրոց ներխուժողներից մեկը ձեզ շատ նման էր: Տնօրենը ձեզ կանչել է իր առանձնասենյակ և միջադեպին առնչվող հարցեր տվել՝ պարզելու, թե ինչով եք զբաղված եղել հանգստյան օրերին: Այնուհետև տնօրենը ձեր ծնողներին և ընկերներից մի քանիսին հրավիրել է դպրոց՝ ձեր ասածի ճշմարտացիությունը ստուգելու նպատակով: Վերջում նա ձեզնից ներողություն է խնդրել պատճառած անհանգստության համար և առաջարկել վերադառնալ դասի:

- *Ի՞նչն էր արդար կամ անարդար հիշյալ իրավիճակներում:*
- *Երբևէ հայտնվե՞լ եք նմանատիպ իրավիճակներում կամ ականատես եղել:*

◇ *Ի՞նչ կանոններ կամ սկզբունքներ գիտեք, որոնց նպատակն է արդարության պահպանումը նմանատիպ իրավիճակներում:*

Արդարության դրսևորումները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի՝ *բաշխման, ուղղման* և *ընթացակարգի:*

ԲԱՇԽՄԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Երբ որևէ բան բաշխվել, բաժանվել է առանձին մարդկանց կամ խմբերի միջև, ապա գործ ունենք բաշխման արդարության հետ: Բաշխման առարկա կարող է լինել ինչպես բարիքը և իրավունքը (օրինակ՝ աշխատանքի վարձատրությունը, ձայնի, քվեարկության իրավունքը և այլն), այնպես էլ պարտականությունը (օրինակ՝ զինվորական ծառայությունը, հարկերի վճարումը, ընտանիքում աշխատանքի կատարումը և այլն):

Բաշխման արդարության համար կան մի քանի սկզբունքներ, որոնք պետք է հաշվի առնել արդարության գնահատման, այսինքն՝ ինչ–որ բան արդարացի կամ անարդարացի համարելու ժամանակ: Դրանցից առաջինն է *նմանության սկզբունքը.* եթե որևէ իրավիճակում մարդիկ իրենց կարևորագույն հատկանիշներով նման են, պետք է նույնանման ձևով քննվեն, դատվեն: Օրինակ՝ զորակոչի ժամանակ բոլորը ենթակա են հավաքագրման՝ բացի օրենքով սահմանված կարգով տարկետման իրավունք ունեցողներից կամ ծառայությունից ազատվածներից:

Բաշխման արդարության նշված սկզբունքի (նմանության սկզբունք) հիմքում հետևյալ չափանիշներն են.

- *կարիք,*
- *կարողություններ, ունակություններ,*
- *վաստակ, արժանիքներ:*

Օրինակ՝ բուհական ընդունելության ժամանակ հաշվի են առնվում դիմորդի *ընդունակությունները:* Ընդունվում են նրանք, ովքեր ավելի բարձր արդյունքներ են ցույց տալիս քննությունների ընթացքում: Սակայն բուհ ընդունվելու համար հաճախ *արժանի* են համարվում

նաև այն դիմորդները, որոնք թեև ավելի ցածր միավոր են հավաքել, սակայն ծնողազուրկ են, վերադարձել են զինծառայությունից և այլն: Ծանրամարտի մրցումներում հաղթող է ճանաչվում առավել մեծ ծանրություն բարձրացնելու *ունակ* մարզիկը: Ամեն տարի ՀՀ նախագահը մրցանակ է սահմանում գիտության և մշակույթի բնագավառներում լավագույն *վաստակ* ունեցող գիտնականների և ստեղծագործողների համար: Նրանց տրամադրվում են նաև ֆինանսական միջոցներ՝ որպես խրախուսանք: Հենաշարժական խնդիրներ ունեցող երեխան *կարիք ունի* համապատասխան խնամքի, բուժման և կրթության:

- *Թերթերից գտե՛ք բաշխման արդարությանն առնչվող նյութեր: Փորձե՛ք պարզել՝ հաշվի՞ են առնվել արդյոք կարիքը, կարողությունը և արժանիքը հիմնախնդրի ներկայացման ժամանակ:*
- *Քննե՛ք բաշխման արդարությանն առնչվող որևէ դեպք, որը տեղի է ունեցել ձեր ընտանիքում, դպրոցում կամ համայնքում: Կիրառե՛ք կարիքի, կարողության և արժանիքի չափանիշները դեպքի վերաբերյալ ձեր կարծիքն արտահայտելիս:*
- *Ձեր համայնքը պետք է կառուցի ֆուտբոլի նոր խաղադաշտ երեխաների համար: Ովքե՞ր պետք է ներդրում կատարեն խաղադաշտի կառուցման համար: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:*

ՈՒՂՂՄԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Կատարված սխալին կամ հասցված վնասին պատշաճ ձևով արձագանքելով՝ գործ ենք ունենում *ուղղման արդարության* հետ: Օրինակ՝ ուղղման արդարության կարիք ենք զգում, երբ տեղի է ունեցել գողություն, վնասվել է ինչ-որ բան, կամ մեզ ցավ են պատճառել:

Արդարության վերականգնումն այս դեպքում նշանակում է՝ ուղղել կատարված սխալը կամ փոխհատուցել վնասը: Կան բազմաթիվ եղանակներ արդարության վերականգնման համար:

Շատ դեպքերում բավարար է սխալ արարքի կամ

վնասի մասին *ճիշտ տեղեկություններ տարածելը* կամ *կեղծ տեղեկատվությունը հերքելը:* Այլ դեպքերում սխալի փոխհատուցման նպատակով *փուզանք է սահմանվում:* Վերջապես, կան որոշակի հանգամանքներ, երբ սխալ գործողը պատժվում է՝ ենթարկվելով *քրեական պատասխանատվության:*

Այսպիսով, միշտ ձգտում ենք որևէ կերպ ուղղել, շտկել իրավիճակը, երբ անձը սխալ արարք է կատարել կամ վնաս է հասցրել: Դրանով իսկ հորդորում ենք մյուսներին՝ խուսափելու նման գործողություններից, փորձում ենք կանխարգելել «սխալ» արարքները: Այսինքն՝ արդարության վերականգնմամբ սովորեցնում ենք ուրիշներին դասեր քաղել սխալ արարք գործած անձի վարքագծի հետևանքներից և խուսափել վնաս պատճառող գործողություններից:

Այսպիսով՝ ուղղման արդարությունն ունի երեք հիմնական նպատակ.

ա. իրավիճակի ուղղում,

բ. սխալ արարքի կանխարգելում

գ. զգոնության բարձրացում:

- *Խմբերով քննարկե՛ք սխալի շտկման կամ վնասի փոխհատուցման օրինակներ ձեր առօրյա կյանքից: Ձեր կարծիքով՝ այդ գործողությունները արդա՞ր են եղել, թե՞ ոչ: Ինչո՞ւ:*
- *Բերե՛ք օրինակներ, երբ համանման գործողությունները, ձեր կարծիքով, անարդար են եղել: Ինչո՞ւ:*
- *Ի՞նչ իրավիճակ կստեղծվի, եթե ընտանիքում, դպրոցում, համայնքում կամ ընդհանրապես երկրում արդարության պահպանմանն ուղղված միջոցներ չձեռնարկվեն:*

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք գործ ունենք ընթացակարգի արդարության հետ, երբ ձգտում ենք արդարություն պահպանել տեղեկությունների ստացման կամ որոշումների կայացման ընթացքում: Ընթացակարգի արդարությունն առնչվում է ոչ թե տեղեկության կամ ընդունված որոշման բովանդակությանը, այլ այն ձևին, եղանակին, որով ձեռք է բերվել տեղեկությունը կամ ընդունվել որոշումը:

Դիտարկենք հետևյալ օրինակը: Դիցուք՝ կառավարությունը ստեղծել է պետական գույքի մասնավորեցման հանձնաժողով, որի առաջարկների հիման վրա որոշումներ են կայացվում հանրային շենքերի և հողատարածքների մասնավորեցման վերաբերյալ: Ըստ կարգի՝ յուրաքանչյուր դեպքում որոշում կայացնելու նպատակով հանձնաժողովը պետք է կազմակերպի հանրային լսումներ՝ հասարակության տարբեր խմբերի կարծիքներին ծանոթանալու համար: Սակայն, հանձնաժողովը հաճախ որոշ խմբերի ներկայացուցիչների մասնակից չի դարձրել լսումներին՝ պատճառաբանելով, որ հանձնաժողովի փորձագետներն ուսումնասիրել են այդ խմբերի կարծիքները: Արդյո՞ք հանձնաժողովը պահպանել է պահանջվող ընթացակարգը:

Ընթացակարգի արդարության պահպանման համար անհրաժեշտ է տեղեկությունները հավաքել օրենքով թույլատրելի բազմազան եղանակներով և մատուցել արդյունավետորեն՝ դրա ամբողջականությունն ապահովելու և խելամտորեն օգտագործելու համար: Ավելին՝ պետք է պաշտպանել այնպիսի հիմնարար արժեքներ, ինչպիսիք են մարդու արժանապատվությունը, ազատությունը, մասնավոր կյանքի իրավունքը, բաշխման արդարությունը:

- *Ի՞նչ եք կարծում, պե՞տք է իշխանության պատասխանատու մարմիններին իրավունք տալ մարդկանց մասին տեղեկություններ հավաքելու ցանկացած եղանակով: Ինչո՞ւ այո կամ ոչ: Ի՞նչ հիմնարար արժեքներ կարող են վնասվել այս կամ այն դեպքում:*
- *Ինչպե՞ս կարող են անաչառությունը, հանրության ներգրավվածությունը, սխալների հայտնաբերման և ուղղման գործընթացի թափանցիկությունն օգնել ձեզ գնահատելու որոշումների կայացման արդարացիությունը:*

Խմբերում քննարկեք և պարզաբանեք, թե ստորև բերված իրավիճակները արդարության որ տեսակին են վերաբերում՝ բաշխման, ուղղման, թե ընթացակարգի:

1. Դպրոցական ուսումնական «Բանավեճ» խաղի ժամանակ Կապանի թիմը, ցուցաբերելով լավագույն խաղը, ստանում է գլխավոր մրցանակը:

2. Տարվա վերջում հեռախոսային ընկերությունը համակարգիչներ է նվիրում ամենաշատ վաճառք ապահոված առևտրական երեք գործակալներին:

3. Տարիներ շարունակ քվեարկել թույլատրվում էր միայն անշարժ գույքի սեփականատեր տղամարդկանց:

4. Հարկային օրենսդրությունը պահանջում է, որ շատ եկամուտ ստացողները շատ հարկեր վճարեն:

5. Գազիկը և Վարդուհին տնային հանձնարարությունը չկատարելու պատճառով հինգ օր պետք է ավելի երկար մնան դպրոցում:

6. Նոր արտադրված մեքենայի սեփականատերը դիմում է դատարան, քանի որ անսարքություն է հայտնաբերել օդափոխման համակարգում: Դատարանը արտադրողին պարտադրում է իր հաշվին կարգի բերել մեքենան:

7. Որոշ երկրներում գողություն անողներին մահվան են դատապարտում, իսկ այլ երկրներում՝ ձեռքն են կտրում:

8. Ուրիշին անզգուշորեն վնաս պատճառողը ստիպված է վճարել տուժողի բժշկական և հարակից այլ ծախսերը: Սակայն եթե վնասը միտումնավոր է հասցվել, ապա հնարավոր է, որ տվյալ անձը լրացուցիչ վճարումներ կատարի կամ ենթարկվի ավելի ծանր պատժի:

9. Զբոսայգու անվտանգության աշխատակիցը մոտենում է երեք տղաների և պահանջում հեռանալ տարածքից՝ խառնաշփոթ իրավիճակում մի երեխայի ծեծած լինելու պատճառաբանությամբ: Նա տղաներին հնարավորություն չի ընձեռում բացատրելու, որ իրենք պատահարի վայրում չեն եղել:

10. Մի կնոջ ձերբակալում են խանութից գողություն կատարելու համար: Հետաքննության ժամանակ նրան պաշտպանելու համար դատավորը փաստաբան է նշանակում:

11. Մեծահարուստը հրահանգում է աշխատանքից ազատել այն աշխատակցին, ում կասկածում է խարդախության մեջ՝ նրան զրկելով բացատրություններ տալու հնարավորությունից:

12. Դպրոցի խորհուրդը նիստ է գումարում տնօրեն ընտրելու համար: Բոլոր շահագրգիռ կողմերը հրավիրվում են նիստին՝ իրենց կարծիքն արտահայտելու համար:

- *Բերված իրավիճակներում ի՞նչն է արդար, և ի՞նչը՝ ոչ:*
- *Ի՞նչ համանման իրավիճակների եք ականատես եղել:*

ԴԱՍ 13 ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկային հասարակության մեջ, ինչպես և բնության մեջ ընդհանրապես, բացարձակ հավասարություն գոյություն չունի: Անգամ զույգ եղբայրները տարբերվում են իրարից: Առավել ևս նման չեն տարբեր ընտանիքներում, վայրերում և հասարակական միջավայրում ծնված ու մեծացած մարդիկ: Նրանք տարբերվում են առաջին հերթին իրենց արտաքին, մարմնական տվյալներով:

Ազատություն, հավասարություն, եղբայրություն (Ֆրանսիական մեծ հեղափոխության կարգախոսը)

Առաջադրանք 1.

Ուսուցիչը սովորողներին բաժանում է 4–5 խմբի: Հանձնարարում է պատասխանել ստորև ներկայացված աղյուսակի Ա և Բ սյունակներում տրված հարցերին:

Ա	Բ
1. Դու աղջիկ ես: 2. Եղել ես արդյոք այլ երկրներում: 3. Սիրում ես զբաղվել սպորտով: 4. Տիրապետում ես որևէ նվագարանի: 5. Աչքերդ շագանակագույն են: 6. Դու հանգիստ մարդ ես: 7. Սիրում ես գնալ վարսավիրանոց: 8. Բարձրությունից վախենում ես: 9. Քեզ ո՞ր գույնն է ավելի շատ դուր գալիս՝ նարնջագույնը, թե՞ դեղինը: 10. Նկարել սիրում ես:	1. Քեզ մի՞շտ ես երջանիկ զգում: 2. Մատներիդ եղունգներ ունե՞ս: 3. Կարողանում ես գոնե մի փոքր մտածել: 4. Կարո՞ղ ես ապրել Սառուցյալ օվկիանոսում: 5. Կարո՞ղ ես թռչունի պես թռչել: 6. Կարո՞ղ ես ապրել, եթե որևէ հեղուկ չօգտագործես: 7. Դու միշտ շնչո՞ւմ ես: 8. Դու մշտապես ջրի տակ ես ապրում: 9. Քո արյունը կանա՞չ է: 10. Քեզ դուր գալիս է վատ եղանակը:

Ավարտելով աշխատանքը՝ ուսուցիչն առաջարկում է գրատախտակին գրանցել աղյուսակի երկու սյունակներում եղած հարցերի պատասխանները, այնուհետև

դրանք խմբավորել: Արվում է հետևյալ հարցադրումը. ինչո՞ւ երկրորդ սյունակում տրված հարցերի բոլոր պատասխանները գրեթե նույնն են:

Ամփոփելով քննարկումը՝ կարող ենք ասել, որ մարդիկ ի բնե տարբերվում են ֆիզիկական, մտավոր, հոգեկան տասնյակ հատկանիշներով: Հետևաբար, ինչպես վերևում ասվեց, մարդկանց միջև բացարձակ հավասարություն գոյություն չունի: Չնայած դրան՝ գոյություն ունի (կամ պետք է գոյություն ունենա) հավասարության մեկ ուրիշ տեսակ՝ իրավահավասարությունը:

ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Իրավական հավասարությունը մարդկանց՝ բնական անհավասարությամբ, ծագմամբ և այլ հանգամանքներով պայմանավորված ելակետային (սկզբնական, նախնական) անհավասարության անցանկալի հետևանքները մեղմելու միջոց է:

Ի՞նչ է դա նշանակում: Խնդիրը հասկանալու համար բերենք մեկ–երկու օրինակ:

Ա. Ենթադրենք՝ 9–րդ դասարանն ավարտելուց հետո շատերն են ուզում սովորել ավագ դպրոցում: Սակայն պարզվում է, որ բոլոր ավագ դպրոցները վճարովի են: Հիմնական դպրոցի շրջանավարտների մի մասը ցանկության դեպքում անգամ չի կարող շարունակել ուսումնառությունը զուտ ֆինանսական պատճառով:

Բ. Ենթադրենք՝ մանկահասակ երեխաների բժշկական պատվաստման համար ծնողը պետք է վճարի որոշակի գումար: Դրա բացակայության դեպքում երեխաները համապատասխան պատվաստում չեն կարող ստանալ, իսկ դա կարող է վտանգավոր հետևանքներ ունենալ կյանքի և առողջության համար:

◈ *Բերված իրավիճակների համար ի՞նչ լուծում կառաջարկեիք, եթե լինեիք պետական լիազորված (այսինքն՝ այդ հարցում որոշում ընդունելու իրավունք ունեցող) մարմնի ներկայացուցիչ, պատասխանատու պաշտոնատար անձ:*

Առաջարկվող լուծումը յուրաքանչյուր դեպքում առաջին հերթին պետք է լինի խնդրի կարգավորմանն ուղղված իրավական ակտ՝ օրենք, որոշում, հրաման, կարգադրություն և այլն, որով իրավական և գործնական հավասար հնարավորություններ են ստեղծվում՝

ա. հիմնական դպրոցի բոլոր այն շրջանավարտների համար, որոնք ցանկանում են շարունակել ուսումը ավագ դպրոցում,

բ. մանկահասակ բոլոր այն երեխաների համար, որոնց անհրաժեշտ է համապատասխան բժշկական աջակցություն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Վերևում թվարկված իրավական ակտերի ընդունումը արդյո՞ք բավարար պայման է նշված խնդիրների լուծման համար: Եթե ոչ, ապա ուրիշ ի՞նչ անհրաժեշտ պայման է հարկավոր: Շարունակելով քննարկումը՝ պարզաբանենք, որ բացի ընդունված իրավական փաստաթղթերից՝ անհրաժեշտ են նաև համապատասխան նյութական և մարդկային պաշարներ, այսինքն՝

ա. դպրոցներ, ուսումնական հաստատություններ, որտեղ կարող են սովորել ցանկացողները, ուսուցիչներ, դասագրքեր, ուսուցման այլ միջոցներ և այլն,

բ. առողջապահական հաստատություններ, բժիշկներ և այլ բուժաշխատողներ, համապատասխան դեղամիջոցներ և այլն,

գ. հատուկ գումարներ՝ անապահով ընտանիքների երեխաների անվճար կամ զեղչով կրթությունը և պատվաստումը ապահովելու համար:

Նշված պայմանների առկայության դեպքում միայն կարելի է հավաստել, որ բնակչության վերոհիշյալ խմբերի (շրջանավարտների, մանուկների) բոլոր ներկայացուցիչների համար ստեղծված են հավասար հնարավորություններ: Այսինքն՝ իրավահավասարությանը գումարվում է *սոցիալական հավասարությունը:*

Լրացուցիչ հանձնարարություն

Իրավիճակ

Գնչուհի աղջիկը պատմում է հետևյալը. «Օրեր առաջ, երբ աշխատանք էի փնտրում, խանութի ցուցափեղկին հայտարարություն տեսա այն մասին, որ պահանջվում է 18–23 տարեկան վաճառողուհի: Քանի որ 19 տարեկան եմ, մտա խանութ և հարցրի աշխատանքի հետ կապված մանրամասները: Աշխատակիցն ինձ առաջարկեց մի երկու օրից կրկին այցելել: Ես ևս երկու անգամ գնացի այնտեղ. պատասխանը նույնն էր: Երկու շաբաթ անց, երբ նորից այցելեցի, ինձ ասացին, որ արդեն ընդունել են վաճառողուհի: Սակայն հայտարարությունը դեռևս փակցված էր: Վրդովմունքս մեծ էր: Կատարվածի մասին պատմեցի ընկերուհուս: Նա, որ գնչուհի չէ, հաջորդ օրը այցելեց խանութ և աշխատանքի առաջարկով ներկայացավ խանութի տիրոջը: Նրան ասացին, որ հրավիրում են աշխատանքի: Ինձ համար ամեն ինչ պարզ էր...»:

Քննարկում

1. Ի՞նչ զգացողություն կունենայիք, եթե ձեզ հետ նույն կերպ վարվեին:
2. Ի՞նչն էր, ձեր կարծիքով, նման վերաբերմունքի պատճառը:
3. Ի՞նչ կարող էր անել աղջիկը իր իրավունքները պաշտպանելու համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Քննարկե՛ք, թե մարդիկ ինչով, ինչ հատկանիշներով են տարբերվում իրարից: Փորձե՛ք կազմել այդպիսի հատկանիշների ցանկ:
2. Իրավական հավասարության հասնելու համար ի՞նչ անհրաժեշտ պայմաններ կարող եք նշել:
3. Փորձե՛ք ներկայացնել սոցիալական հավասարությանը վերաբերող այլ իրավիճակների օրինակներ:

ԴԱՍ 14-15 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆ ՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

- *Ի՞նչ նկատի ունեք, երբ ինչ-որ մեկի մասին ասում եք՝ պատասխանատու մարդ է:*
- *Թվարկե՛ք, թե ինչ պատասխանատվություն ունեք դուք և ձեր ուսուցիչները:*

Պատասխանատվությունը վստահելի և արժանահավատ լինելու դրսևորումներից է: Այն մարդուն կապում է իր պարտականությունների հետ: Պատասխանատվության զգացում ունենալ նշանակում է հոգալ այլ մարդկանց ու շրջակա միջավայրի մասին: Նաև նշանակում է լինել խիզախ, քաջ և ունենալ ինքնատիրապետման զգացողություն:

Մարդիկ պատասխանատու չեն ծնվում, դառնում են այդպիսին: Մեր մեջ պատասխանատվության հատկանիշը ձևավորվում և զարգանում է ժամանակի ընթացքում: Մեզնից շատերը չեն գիտակցում, որ մենք ենք ընտրում մեր վարքագիծը, ուրիշները չեն անում դա մեր փոխարեն: Անկախ գիտակցելու կամ համաձայն լինելու փաստից՝ մենք ենք պատասխանատու այն ամենի համար, ինչ մտածում, ասում կամ անում ենք:

Փորձենք ձևակերպել, թե ինչ է պատասխանատվությունը: *Դա որոշակի բան անելու կամ չանելու պարտավորություն է, հանձնառություն կամ խոստում՝ համապատասխան հետևանքներով:* Օրինակ՝ մինչև ընկերների հետ խաղալու գնալը պետք է ձեր դասերը պատրաստեք, չօգտագործեք ձեր ծնողների գործիքներն առանց իրենց թույլտվության:

Ստանձնած պարտավորությունների կատարումը սովորաբար հանգեցնում է համապատասխան հատուցման, պարգևատրման: Իսկ պատասխանատվության կատարման ձախողումը հանգեցնում է պատժի,

տույժի կամ տուգանքի: Օրինակ՝ դուք ցածր գնահատականի կարժանանաք, եթե պատշաճ կերպով չպատրաստվեք ձեր դասերին կամ չկատարեք տնային առաջադրանքները: Հետևաբար պատասխանատվության կատարումը կամ դրա կատարումից խուսափելը հանգեցնում են տարբեր հետևանքների:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Իսկ ինչպե՞ս է առաջանում պատասխանատվությունը, որո՞նք են պատասխանատվության ծագման աղբյուրները: Այդպիսի աղբյուրներ են մարդկանց խոստումները, որոշակի պաշտոնի նշանակվելը, նրանց վրա պարտականություններ դնելը, աշխատանքի բնույթը, օրենքները, սովորույթները, քաղաքացիությունը, բարոյական սկզբունքները և այլն:

Խոստում: Երբ մի անձ մեկ ուրիշի *խոստանում* է, ինչ–որ բան, ապա նա *պարտավորություն է ստանձնում* կատարելու խոստումը: Երբեմն այդ խոստումը ամրագրվում է իրավական փաստաթղթով, որը կոչվում է *պայմանագիր (պարտավորագիր և այլն):* Սակայն խոստումները հիմնականում լինում են ոչ պաշտոնական, բանավոր: Եթե ընկերոջից գումար եք վերցրել և խոստացել, որ կվերադարձնեք մեկ շաբաթից, ապա պետք է վճարումը կատարեք մինչև ժամկետի լրանալը:

Հանձնարարում: Հաճախ մարդիկ *հանձնարարում* կամ *հարկադրում* են ուրիշներին ստանձնել որոշակի պատասխանատվություն: Օրինակ, երբ ուսուցիչը հանձնարարում է անգիր սովորել ոտանավորը, կամ դպրոցի տնօրենը կարգադրում է ուսուցիչներին խստորեն հետևել դպրոցի կարգապահական կանոններին:

Նշանակում: Որոշակի իրավիճակներում մարդիկ *ընտրվում* կամ *նշանակվում* են պաշտոնների: Դա իր մեջ ներառում է պատասխանատվության շրջանակ: Օրինակ՝ վարչապետը, օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում, ինչ–որ մեկի մարզպետ է նշանակում՝ մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնելու համար:

Աշխատանքի բնույթ: Յուրաքանչյուր *աշխատանք* իր մեջ ներառում է պատասխանատվություն: Ուսուցիչը պատասխանատու է դասավանդման գործընթացի կազմակերպման համար, հաշվապահը պատասխանատու է կազմակերպության ֆինանսական փաստաթղթերի վարման, հաշվետվությունների կազմման և համապատասխան մարմիններին սահմանված ժամկետներում ներկայացման համար:

Օրենքներ: *Օրենքները և նորմատիվ իրավական այլ փաստաթղթերը* հասարակության անդամների համար սահմանում են պատասխանատվության որոշակի շրջանակներ: ՀՀ Սահմանադրությունը, օրինակ, պարտադիր է համարում հիմնական կրթություն ստանալը: 18 տարին լրացած արական սեռի ներկայացուցիչ ՀՀ քաղաքացիները պարտադիր զորակոչվում են՝ բացի օրենքով սահմանված դեպքերից:

Սովորույթներ: Որոշակի պարտականություններ ունենում ենք՝ հասարակության մեջ առկա *սովորույթներից* ելնելով: Ընկերոջը նրա ծննդյան օրը նվեր ենք տալիս: Հասարակական փոխադրամիջոցներում երիտասարդներն իրենց տեղը զիջում են տարեցներին:

Քաղաքացիություն: Մարդիկ ունեն որոշակի պարտականություններ հենց իրենց *քաղաքացիության* հանգամանքով: Օրինակ՝ մեր քաղաքացիական պարտականություններից է ընտրություններին մասնակցելը:

Բարոյական սկզբունքներ: Սրանք վարքագծի կանոններ են, որ հիմնված են ճշտի և սխալի մասին դատողություններ անելու վրա: Մարդկանց, այդ թվում՝ ծնողներին, ուսուցիչներին հարգելը, ազնիվ և արդար լինելը հիմնված են բարոյական սկզբունքների վրա:

- *Նկարագրեք դեպքեր, երբ պատասխանատու եք եղել, և հիմնավորեք տվյալ պատասխանատվության աղբյուրը:*
- *Դրանցից ո՞ր պատասխանատվությունն եք վերցրել կամավոր հիմունքներով: Ո՞րն է պարտադրվել ձեզ:*
- *Իսկ ո՞րն եք ստանձնել առանց հստակ պատկերացում ունենալու, առանց գիտակցված ընտրության:*

- *Ինչ խրախուսանքի կամ պարգևի եք արժանացել պատասխանատվությունն իրացնելիս: Իսկ ինչ պատժի կամ տույժի եք ենթարկվել անպատասխանատվության հետևանքով:*

ՄՐՑԱԿՑՈՂ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՐԺԵՔՆԵՐ ԵՎ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր պատասխանատվությունն իրականացնելիս հաճախ կանգնում ենք երկընտրանքի առջև. հնարավոր է կատարել կա՛մ այս, կա՛մ այն պարտականությունը: Դրա հետևանքով հակամարտություն (բախում) է առաջանում: Դա առաջանում է հիմնականում հետևյալ պատճառներով.

- Որոշ իրավիճակներում երկու պարտականություն բախվում են, քանի որ նույն ժամանակում հնարավոր է կատարել միայն մեկը: Ուստի պետք է ընտրություն կատարենք, թե դրանցից որն իրականացնենք:
- Այլ իրավիճակներում բախումն առաջանում է մեր պարտականությունների ու արժեքների կամ պարտականությունների ու հետաքրքրությունների միջև:

Երբեմն, երբ որոշում ենք կատարել որևէ պարտականություն, զոհաբերում եք մեր հետաքրքրություններից կամ շահերից որևէ մեկը կամ մի քանիսը: Այլ իրավիճակներում, երբ առաջնահերթ ենք համարում որոշակի արժեքներ կամ հետաքրքրություններ, հնարավոր է, որ դրա հետևանքով չկատարենք մեր այս կամ այն պարտականությունը:

- *Ինչպե՞ս կարելի է ընտրություն կատարել մրցակցող պարտականությունների, արժեքների և շահերի միջև:*
- *Ինչ բախումներ կարող են ծագել պատասխանատվություն իրականացնելիս:*

Խմբային աշխատանք

Ընթերցե՛ք հետևյալ պատմությունները և այնուհետև պատասխանե՛ք հարցերին:

ա. Չորեքշաբթի օրը Գոհարի ուսուցիչը դասարանին հանձնարարեց տնային աշխատանք, որի հանձնման ժամկետը ուրբաթն էր: Այդ օրը Գոհարը ոչինչ չարեց, բայց հանձնարարությունն այնպիսին էր, որ դրա կատարման համար ստիպված պիտի աշխատեր գրադարանում: Իսկ դա նրանից կխլեր հինգշաբթիի ամբողջ կեսօրը և երեկոն: Հինգշաբթի առավոտյան վոլեյբոլի մարզիչը հայտարարեց, որ իրենց թիմը պետք է դասերից հետո մնա պարապմունքի: Գոհարը չգիտեր ինչ անել: Նա թիմի ավագն էր, և պարապմունքը հաջող անցկացնելու հույսը նրա վրա էր:

բ. Մայրիկն Արմանին գումար էր տվել պարապմունքից հետո տուն վերադառնալիս բանջարեղեն գնելու համար ու խնդրել էր այլ նպատակներով գումարը չօգտագործել: Սակայն պարապմունքի ժամանակ Արմանի ընկերը վնասվածք էր ստացել, ու նրան պետք էր տեղափոխել հիվանդանոց: Արմանը զանգում էր մայրիկին, որպեսզի տեղեկացնի, որ երեկոյան գնումներ կատարելու փոխարեն ցանկանում է վճարել տաքսու գումարը, բայց մայրիկի հեռախոսը չէր պատասխանում:

- *Ի՞նչ պարտականությունների կատարման մասին են մտածում Գոհարն ու Արմանը յուրաքանչյուր իրադրությունում:*
- *Ի՞նչ պարտականություններ են բախվում այս իրավիճակներում:*
- *Իսկ ի՞նչ կանեիք դուք: Մեկնաբանեք ձեր պատասխանը:*

Ո՞վ է պատասխանատու թագավորի ապանության համար

Ընթերցե՛ք Վ. Շեքսպիրի «Մակբեթ» դրամայի ստորև բերվող հատվածը: Խմբային աշխատանքի միջոցով պատասխանե՛ք հարցերին:

Մի օր՝ վաղ առավոտյան, շոտլանդական բանակի գեներալ Մակբեթը երկարատև ճամփորդությունից հետո մարտի դաշտից վերադառնում էր տուն: Նա ու իր զորքը հաղթանակած էին, բայց հետաքրքիր բան պատահեց հետադարձի ճանապարհին, և ինքը ցանկանում էր պատմել այդ մասին կնոջը: Մուտք գործելով ամրոց՝ Մակբեթը վազեց դեպի կնոջ պալատը:

— Սիրելի՛ս, — անհամբեր ասաց Մակբեթը, — լսի՛ր նորությունը: Տուն գալու ճանապարհին ես հանդիպեցի երեք վհուկների: Նրանք տարօրինակ կանայք էին և անհավանական կանխատեսում արեցին:

Մակբեթը խոր շունչ քաշեց և շարունակեց խոսքը.

— Նրանք ասացին, որ մի օր ես թագավոր կդառնամ: Ես լսել էի, որ այդ վհուկներն ապագան կանխատեսելու ուժ ունեն,

բայց շատ դժվար էր հավատալ իրենց: Եթե իմ զարմիկ Դունկան թագավորը մահանար, հնարավոր է, որ ես ժառանգեի թագը: Բայց նա բավականին երիտասարդ է ինձնից:

Տիկին Մակբեթն ուշադրությամբ լսեց նրա պատմությունը: Նա շատ հավակնոտ էր և ցանկանում էր թագուհի դառնալ: Նա ոչ մի բանի առջև չէր կանգնի, որպեսզի ամուսինը դառնար թագավոր: Այժմ ինքը խոսեց.

— Դու պետք է թագավոր դառնաս, իմ ամուսի՛ն: Մենք բախտավոր ենք: Թագավորն այս գիշեր գալիս է այստեղ: Մենք կարող ենք սպանել նրան, և եթե վհուկների կանխատեսումները ճիշտ են, դու կհռչակվես թագավոր:

Մակբեթը տարակուսեց: Նրան դուր չեկավ թագավորին սպանելու գաղափարը, բայց կինն ուժեղ ազդեցություն ուներ նրա վրա: Վերջապես, ընդառաջելով կնոջ՝ թագուհի դառնալու բաղձանքին, Մակբեթը հարկադրված խոստացավ սպանել Դունկանին:

Այդ գիշեր Դունկան թագավորը ժամանեց ամրոց: Հաղթանակի տոնակատարությունից հետո Դունկանը գնաց քնելու: Նա իր երկու թիկնապահներին հրամայեց հսկել իր պալատը:

Լեդի Մակբեթը շտապեց ամուսնու մոտ:

— Արդեն ժամանակն է, — ասաց նա լացակումած. — թիկնապահները քնած են:

Բայց Մակբեթն այլ մտքերով էր տարված: Նա աղոթում էր թագավորի համար: Նա ասաց, որ չի ցանկանում սպանել այդպիսի լավ մարդուն:

Լեդի Մակբեթը շտապեցրեց նրան: Նա կասկածի տակ դրեց Մակբեթի քաջությունը: Կինը վստահեցնում էր, որ թիկնապահներին կմեղադրեն մարդասպանության համար: Հետո նա պնդեց.

— Մակբե՛թ, կցանկանայի՞ր կորցնել թագավոր դառնալու քո միակ հնարավորությունը: Գնա՛ հիմա: Ահա՛ քո դաշույնը:

Մակբեթը վերցրեց դաշույնը: Շրջանցելով քնած թիկնապահներին՝ նա մտավ թագավորի սենյակը: Առանց երկար մտածելու նա հարվածեց թագավորին: Երբ նա վերադարձավ կնոջ մոտ, վերջինս վերցրեց դաշույնը նրանից, միջանցքով անցավ և դրեց թիկնապահների մոտ:

Հաջորդ առավոտյան, երբ ոճրագործությունը բացահայտված էր, Մակբեթը և կինը ձևացրին, թե հուսահատության մեջ են և ցավում են: Նրանք պնդեցին, որ թիկնապահներն են սպանել թագավորին:

- *Ո՞վ պետք է պատասխան տա թագավորի սպանության համար:*
- *Եթե մեկից ավելի անձինք են պատասխանատու, արդյո՞ք նրանք հավասարապես են պատասխանատու: Ինչո՞ւ:*
- *Ո՞վ պատասխանատվություն չի կրում սպանության համար: Ինչո՞ւ:*

ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հանդուրժողականությունն ուրիշների արժեքների, մոտեցումների, հավատալիքների և այլ դրսևորումների ճանաչումը, ընդունումը և դրանց նկատմամբ հարգանքն է: Նաև ենթադրում է թույլատրելի վերաբերմունք դեպի նրանց, ովքեր մեզանից տարբերվում են իրենց կարծիքով, տեսքով, ազգությամբ, ռասայով, հավատքով, ունակություններով, ոճով, հաշմանդամություն ունենալու փաստով և այլ հատկանիշներով: Հանդուրժողականություն սովորում ենք մեր փորձի և շփման միջոցով: Ընդ որում, ինչքան շատ ենք հաղորդակցվում մեզնից տարբերվող անհատների և խմբերի հետ, այնքան բարձրանում է մեր հանդուրժողականությունը նրանց նկատմամբ: Դա ժողովրդավարության, բացախոսության և համակեցության նախապայմաններից մեկն է:

Հելվեցիոս

Պետության ներսում առկա հանդուրժողականությունն ուժերի հավասարակշռության նշան է:

(18–րդ դարի ֆրանսիացի փիլիսոփա)

Քննարկում

Ձեր դիրքորոշումն արտահայտեք ստորև բերվող նամակի բովանդակության վերաբերյալ:

«Մենք Ռուզան և Սյուզան երկվորյակ քույրիկներն ենք...: Չնայած ունենք հենաշարժողական բազում խնդիրներ, մեր ծնողների ջանքերի շնորհիվ սկսեցինք հաճախել դպրոց: Զգում էինք, որ տարբեր ենք մյուս երեխաներից, այնուամենայնիվ հաղթահարեցինք չհասկացված ու մեկուսացված լինելու մեր վախը: Հանրակրթական դպրոցում սովորելով՝ մեզ լիարժեք զգացինք, մեզնում մեծացավ մարդկանց մեջ ավելի հաճախ լինելու և ամեն ինչում մեր մասնակցությունն ունենալու ցանկությունը: Տարիների ընթացքում, նաև մեր ծնողների վերաբերմունքի շնորհիվ մարդիկ սովորեցին չխղճալ մեզ և չխուսափել մեզնից, այլ գնահատել մեր մեջ մարդուն, տեսնել մեր կարողությունները:

Մեր կյանքում շատ մեծ էր նաև համայնքային կենտրոնի դերը, որն առաջնորդվում է «բոլոր

երեխաները կարող են» սկզբունքով: Օգտվելով կենտրոնի ծառայություններից՝ զգացինք ու հասկացանք, որ չնայած կրթությունը հատուկ կարևորություն ունի յուրաքանչյուրիս կյանքում, սակայն մեզ անհրաժեշտ է նաև ավելի շատ ու հաճախ շփվել մարդկանց հետ: Ընդլայնվեց մեր ընկերների և ծանոթությունների շրջանակը, փորձեցինք նորովի բացահայտել ինքներս մեզ, ձեռք բերել նոր կարողություններ ու հմտություններ: Այս ամենը կարծես ավելի մեծ ինքնավստահություն ներշնչեց մեզ: Այստեղ մենք մեզ զգացինք որպես բոլորից տարբեր, բայց բոլորին հավասար մարդիկ:

Ցավոք, սակայն, հաշմանդամություն ունեցող բազմաթիվ երեխաներ Հայաստանում և ամբողջ աշխարհում չեն ստացել այն հնարավորությունները, ինչ որ մենք: Շատերը մանկապարտեզ և դպրոց չեն գնում, չունեն ընկերներ, ներգրավված չեն սպորտում կամ արվեստներում և անգամ փակված են տանը: Մեզ համար հատկապես ցավալի է, որ հաշմանդամության պատճառով երեխաները հայտնվում են մանկատանը: Մենք ևս մեկուսացված և անլիարժեք կյանքի դատապարտված կլինեինք առանց մեր հայրիկի ու մայրիկի սիրո և անսպառ ջերմության, ովքեր, հակառակ բժշկական բոլոր ախտորոշումներին ու մռայլ կանխատեսումներին և հասարակության վերաբերմունքին, տեսան մեր ներուժը և հավատացին մեզ: Մինչդեռ այսօր ոչ միայն ավարտում ենք հանրակրթական դպրոցը, այլև պատրաստվում ենք ընդունվելու համալսարան և դառնալու բարձրակարգ մասնագետներ»:

Ռուզան և Սյուզան Աղաբաբյաններ

Անհանդուրժողականության դրսևորումներից է, երբ չենք սիրում մեկին, ով տարբերվում է մեզանից, և ցանկանում ենք, որ բոլորը վարվեն մեզ պես: Այսպիսի անհանդուրժողականությունը հիմնախնդիր է եղել հնագույն ժամանակներից և պատերազմների ու թշնամանքի պատճառ դարձել: Շատ մարդիկ կան, ովքեր բռնություն են կիրառում նրանց նկատմամբ, ում չեն հանդուրժում: Կրթության և դաստիարակության միջոցով մարդիկ սովորում են զսպել իրենց անհանդուրժողականությունը:

Անհանդուրժողականությունը նաև երկրորդ կողմն ունի: Պետք է անհանդուրժող լինել մարդկանց այն վարքագծի նկատմամբ, որում առկա է բռնություն, չարու-

թյուն, հակաօրինական կամ հակամարդկային ուղղվածություն: Օրինակ՝ չի կարելի հանդուրժող լինել, երբ մեկը զբոսայգում ծառ է կտրում: Այս դեպքում հանդուրժողականությունը դառնում է անտարբերություն, ինչը բերում է հանրային բարիքի խաթարմանը, փչացմանը, նվազեցմանը կամ ոչնչացմանը:

Խմբային աշխատանք

Խմբերում ընթերցե՛ք հատված ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1996 թ. նոյեմբերի 16-ին ընդունված «Հանդուրժողականության սկզբունքների հռչակագրից» և քննարկե՛ք ստորև տրված հարցերը.

Հանդուրժողականության սկզբունքների հռչակագիրը

Հանդուրժողականություն նշանակում է աշխարհի մշակութային հարուստ բազմազանության, մեր ինքնարտահայտման ձևերի և մարդկային անհատականության դրսևորման եղանակների հարգում, ընդունում և ընկալում: Դրան նպաստում են գիտելիքները, բաց լինելը, հաղորդակցումը և մտքի, խղճի ու համոզմունքների ազատությունը: Հանդուրժողականությունը ներդաշնակություն է բազմազանության մեջ: Դա ոչ միայն բարոյական պարտք է, այլև քաղաքական և իրավական պահանջմունք: Հանդուրժողականությունը առաքինություն է, որը հնարավոր է դարձնում խաղաղության հաստատումը և նպաստում է պատերազմի մշակույթը խաղաղության մշակույթով փոխարինելուն:

Հանդուրժողականությունը զիջում, ներում, թողտվություն չէ: Հանդուրժողականությունը նախ և առաջ գործուն հարաբերություն է, որը ձևավորվում է մարդու համընդհանուր իրավունքների և հիմնարար ազատությունների ընդունման հիման վրա: Ոչ մի պարագայում հանդուրժողականությունը չի կարող արդարացնել այդ իրավունքների և ազատությունների ոտնահարումը: Հանդուրժողականություն պետք է դրսևորեն անհատները, խմբերը, պետությունները:

Հանդուրժողականությունը մարդու իրավունքների, բացախոսության (այդ թվում՝ մշակութային բացախոսության), ժողովրդավարության և իրավակարգի հաստատմանը նպաստող պարտավորություն է: Հանդուրժողականությունը հասկացություն է, որը նշանակում է կարծրամտությունից, ճշմարտության բացարձակացումից հրաժարում և մարդու իրավունքների ոլորտում գործող միջազգային իրավական ակտերի կողմից սահմանված կանոնների հաստատում:

Հանդուրժողականության դրսևորումը, որը համահունչ է մարդու իրավունքների հարգմանը, չի նշանակում հանդուրժելի, համբերատար վերաբերմունք հասարակական անարդարությանը, ուրիշների համոզմունքների ընդունում՝ սեփական համոզ-

մունքներից հրաժարվելու գնով: Դա նշանակում է, որ յուրաքանչյուրն ազատ է իր համոզմունքներին հավատարիմ մնալու հարցում և ճանաչում է ուրիշների համանման իրավունքը: Դա նշանակում է ընդունել, որ մարդիկ ի բնե տարբերվում են արտաքինով, դիրքով, լեզվով, վարքով, արժեքներով և իրավունք ունեն խաղաղ ապրելու և իրենց անհատականությունը պահպանելու: Դա նաև նշանակում է, որ որևէ մեկի հայացքները չեն կարող պարտադրվել ուրիշներին:

Ամփոփելով դասը՝ նշենք, որ յուրաքանչյուրիս ներսում կան հանդուրժողականության «բեկորներ»: Ամեն օր առնչվում ենք անհանդուրժողականության բազմաթիվ դրսևորումների նույնիսկ մեր տանը: Առաջարկում ենք սկսել հանդուրժողականության սկզբունքների փորձարկումը հենց տնից: Երբ ականատեսն եք լինում, որ մեկն իր աշխատանքն անում է մեր պատկերացումներից տարբերվող ձևով, կամ դրսևորում է մեր ակնկալիքներին չհամապատասխանող վարքագիծ, մտածե՛ք այն պահերի, դեպքերի մասին, երբ դուք եք եղել անհանդուրժողականության զոհը: Հաշվե՛ք մինչև տասը, նո՛ր միայն արձագանքեք: Չպետք է մոռանալ, որ անհանդուրժողականությունը հասարակական էական հիմնախնդիր է, և մեր առաքելությունն է նպաստել այս երևույթի նվազեցմանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Փորձե՛ք հնարավորինս պարզ սահմանել «հանդուրժողականություն» հասկացությունը:**
2. **Բերե՛ք օրինակներ, երբ դրսևորել եք հանդուրժողականություն:**
3. **Բերե՛ք օրինակներ, երբ անհանդուրժող եք եղել:**

Լրացուցիչ առաջադրանք

Վերընթերցե՛ք Հովհաննես Թումանյանի «Մի կաթիլ մեղրը» և վերլուծե՛ք ու ներկայացրե՛ք անհանդուրժողականության դրսևորումները:

Քվեարկությունը՝ որպես իրավունք, պահանջ և պատասխանատվություն

- *Ինչ տեղեկություններ ունեք Հայաստանում ընտրությունների վերաբերյալ:*
- *Օգտվելով համացանցից՝ նշեք, թե ինչ ընդհանրություններ և տարբերություններ կան մեր հանրապետությունում և այլ երկրներում տեղի ունեցող ընտրությունների միջև:*

Քվեարկելը իրավունք է, պարտականություն, թե՞ պատասխանատվություն

Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք: ....

ՀՀ Սահմանադրություն, հոդված 30

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիները քվեարկում են իրենց գրանցման վայրում: Այլ բնակավայր տեղափոխվելիս մարդիկ քվեարկում են այդ նոր վայրում: Աշխատանքի կամ այլ պատճառներով գրանցման վայրից հեռու գտնվելու դեպքում ևս քաղաքացիները հնարավորություն ունեն քվեարկելու՝ համապատասխան դիմումի դեպքում:

Չնայած քաղաքացիները քվեարկության իրավունք ունեն, սակայն շատերը չեն քվեարկում: Հանրության մի մասը քվեարկությունը չի դիտարկում որպես քաղաքացիական կարևոր պարտականություն: Ուրիշներն առաջարկում են, որ քաղաքացիների համար քվեարկությունը (կամ առնվազն քվեարկության գնալը) պետք է պարտադիր դառնա, ինչպես ամրագրված է աշխարհի շատ երկրների օրենսդրության մեջ:

Խմբային աշխատանք

Բաժանվեք երկու խմբի: Կատարեք խմբերի դերաբաշխում հետևյալ ձևով. առաջին խումբը կարդում և պաշտպանում է «Տեսակետ 1»-ը, երկրորդ խումբը՝ «Տեսակետ 2»-ը:

Խորհեք քվեարկության մասին շարադրված հարցերի շուրջը: Բանավեճի արդյունքում փորձեք հանգել փոխհամաձայնեցված եզրակացության:

Տեսակետ 1. Քվեարկությունը իրավունք է

Առաջին խմբի անդամները՝ որպես քվեարկող, պնդում են.

Ժողովրդավարական երկրում ապրելն առավելություն է, սակայն ժողովրդավարություն նշանակում է ազատություն՝ ներառյալ քվեարկության ազատությունը: Հավատում ենք, որ ընտրելու ազատությունն իրավունք է այնպես, ինչպես քվեարկելը: Ակնհայտ է, որ ժողովրդավարական հասարակությունում մարդիկ հաճախ հիմնավոր, արդարացված պատճառներ ունեն քվեարկությանը մասնակցելու համար. քվեարկության արդյունքը կարևոր նշանակություն ունի նրանց համար: Նրանք համոզված են, որ իրենց մասնակցության շնորհիվ կարող են փոփոխություններ կատարվել ինչպես իրենց, այնպես էլ ուրիշների կյանքում:

Սակայն անձի համար երբեմն լինում են հիմնավոր պատճառներ քվեարկությանը չմասնակցելու համար, օրինակ՝ երբ չկա վստահություն, որ իր նախընտրած թեկնածուն կամ քաղաքական ուժը կհաղթի:

Քվեարկելն իրավունք է, և մարդիկ են որոշում օգտվել այդ իրավունքից, թե ոչ:

Տեսակետ 2. Քվեարկությունը պարտականություն է

Երկրորդ խմբի անդամները՝ որպես քվեարկող, պնդում են.

Ժողովրդավարությունը բարիքներ է բերում հասարակությանը: Ուստի այդպիսի հասարակության անդամները պետք է պատասխանատու դիրքորոշում ունենան ժողովրդավարական ընտրությունների իրականացման համար:

Ցանկանում ենք ապրել մի երկրում, որտեղ քաղաքացիները կարող են մասնակցել կառավարման գործընթացին, կարող են ընտրել իրենց տեսակետներն ու շահերը ներկայացնողների: Յուրաքանչյուր քաղաքացի պատրավոր է մասնակցել քվեարկությանը: Քվեարկությունը օրենսդրությամբ ամրագրված պարտականություն է:

Համոզված ենք, որ քվեարկությունը քաղաքացիական պարտականություն է և պետք է լինի պարտադիր:

ԳԼՈՒԽ 3 ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 16 ԻՆՉ Է ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Հաճախ ենք լսում՝ նա մեծ իշխանություն ունի, կամ՝ դուք այդպիսի իշխանություն չունեք: Ինչ է նշանակում իշխանություն ունենալ: Ինչ կերպար է մեր մտքում առաջանում, երբ լսում ենք *իշխանություն* բառը: Դա առաջին հերթին կարող է որևէ մեկի (ծնողի, ուսուցչի, մարզիչի և այլն) կերպար լինել: Հնարավոր են նաև այլ պատկերներ, ասենք՝ տնօրինությունը, քաղաքապետարանը կամ գյուղապետարանը և այլն: Դրանք մատնանշում են իշխանության մի կարևոր հատկանիշ. իշխանությունը նախ և առաջ *հարաբերություն է*՝

- ծնողների և զավակների,
- ուսուցիչների և սաների,
- ղեկավարների (տնօրենի, պետի) և ենթակաների միջև և այլն:

Այդ հարաբերություններն ուղղված են անհատին, խմբին, հանրությանը վերաբերող որոշակի խնդիրների կարգավորմանը:

Այդպիսի խնդիրներ են, օրինակ՝ սովորելը, աշխատելը, հանգստանալը, գնումներ կատարելը, բժշկական սպասարկումից և այլ ծառայություններից օգտվելը և այլն: Այդ խնդիրները կարելի է բաժանել երեք խմբի.

- անհատական,
- խմբային (ընտանիքին, դասարանին, համայնքին առնչվող և այլն),
- ընդհանուր հանրային (ամբողջ հասարակությանը վերաբերող):

Տեղում լրացրե՛ք աղյուսակը:

Անհատական խնդիրներ	Խմբային խնդիրներ	Հանրային խնդիրներ

Համեմատելով աղյուսակում բերված խնդիրների օրինակները՝ պարզ է դառնում, որ դրանք տրամաբանորեն կապված են մեկը մյուսին: Օրինակ՝ *սովորելը* իմ անհատական խնդիրն է, բայց դա իրագործում եմ խմբում (դասարանում, լսարանում): Միաժամանակ դա առնչվում է գրեթե բոլորին, որովհետև հասարակությանը պետք են գրագետ քաղաքացիներ: Նույն կերպ, աղյուսակի որևէ սյունակում թվարկված յուրաքանչյուր խնդիր այս կամ այն կերպ կապված է մյուս սյունակների համանման խնդիրների հետ:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Իշխանության գլխավոր նպատակներից մեկը մարդկանց, հասարակական խմբերի միջև հարաբերությունների կարգավորումն է: Դրանք առաջին հերթին այն հարաբերություններն են, որոնք վերաբերում են մարդու *կենսական կարիքների բավարարմանը:*

Հասկանալու համար, թե որքան ընդարձակ կարող է լինել այդ կարիքների շրջանակը, վերհիշենք ամբողջ օրվա ընթացքում մեր գործողությունները, քայլերը, որոնք ուղղված են որոշակի կարիքների բավարարմանը: Դրանք պատկերենք գծակարգի տեսքով (տե՛ս նկ. 1):



Գծակարգը ինքնուրույն լրացրեք տեղրում.

- *առանձին վանդակներում նշեք ենթադրվող կարիքների և պահանջմունքների ցանկը,*
- *անհրաժեշտության դեպքում ավելացրեք նոր վանդակ:*

Ինչ եք կարծում, եթե մեր երկրում չլինի կարգուկանոն, չգործեն օրենքները, և չլինեն դրանց կատարման համար պատասխանատու, լիազորված մարդիկ, կկարողանա՞նք արդյոք բավարարել մեր պահանջմունքները և ընդհանրապես իրագործել մեր նպատակները: Ինչ խոչընդոտներ կարող են առաջանալ այդ ճանապարհին, ինչպե՞ս կարող ենք հաղթահարել դրանք, և ընդհանրապես ի՞նչ է անհրաժեշտ, որ մեր նպատակներն իրագործվեն:

Դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է, որ՝

ա. ապահովված լինի մեր անվտանգությունը,

բ. կանոնավոր կերպով աշխատեն մեզ համար խիստ կարևոր ձեռնարկությունները, կազմակերպությունները (դպրոց, հիվանդանոց, էլեկտրացանց, հեռախոսակայան և այլն),

գ. պաշտպանված լինեն մեր իրավունքները:

Իշխանությունն, այսպիսով, ապահովում է հասարակական կարգուկանոն, սահմանում է օրենքներ և ապահովում դրանց կատարումը: Խոսքն այստեղ *պետական իշխանության* մասին է:

Հասարակական այս կամ այն հարաբերությունը

կարգավորելու, հասարակության մեջ օրինականություն և կարգուկանոն պահպանելու, մարդու իրավունքները պաշտպանելու համար անհրաժեշտ է, որ պետությունը սահմանի որոշակի, բոլորի համար *պարտադիր կանոններ* (օրենքներ, որոշումներ, կարգեր և այլ օրենսդրական, իրավական ակտեր): Բացի այդ՝ անհրաժեշտ է նաև, որ պետությունն ունենա *ուժ*՝ օրենքով սահմանված պահանջներն իրագործելու համար:

Ուժ ասելով՝ պետք է հասկանալ պետական իշխանության համապատասխան մարմինները (ինչպիսիք են ոստիկանությունը, ազգային անվտանգության ծառայությունը, բանակը և այլն): Որպեսզի պետական նշված և այլ մարմինների գործունեությունը ուղղված լինի հասարակական շահերի պաշտպանությանը, այդ մարմինների կազմավորման կարգը և լիազորությունները (իրավունքներն ու պարտականությունները) պետք է սահմանված լինեն օրենքով:

Օրենքները, սակայն, «հավերժական շարժիչ» չեն: Օրենքներն ինքնին չեն աշխատի, եթե չարտահայտեն հանրության մեծ մասի իրական կարիքներն ու պահանջները: Օրենքների իրագործման արդյունավետությունն ավելի բարձր կլինի, եթե իշխանության՝ դրանք ընդունող և դրանցով առաջնորդվող մարմինները հենվեն ոչ միայն ուժի, հարկադրանքի, այլև հեղինակության վրա:

Շատ գրողներ, երգիչներ, դերասաններ, գիտնականներ և այլ նշանավոր մարդիկ, ունենալով մեծ հեղինակություն, հաճախ զգալի ազդեցություն են ունեցել հասարակության վրա: Այսպես՝ Հովհաննես Թումանյանը, Եղիշե Չարենցը, Մարտիրոս Սարյանը, Արամ Խաչատրյանը, Պարույր Սևակը, Վիկտոր Համբարձումյանը իշխանություն չունեին, սակայն ունեին մեծ հեղինակություն և հետևաբար՝ ազդեցություն իրենց ժամանակակիցների վրա:

Գործնական աշխատանք

Քննարկենք և համեմատենք ***իշխանություն*** *և* ***հեղինակություն*** *հասկացությունները: Ձեր կարծիքով՝ որքանո՞վ են դրանք փոխկապակցված:*

Իշխանություն	Հեղինակություն
Իշխանության հեղինակությունն ինչո՞վ է պայմանավորված. - ուժով - ..... -	Հեղինակություն ունեցող անձը կարող է նաև իշխանություն, ազդեցություն ունենալ մարդկանց վրա. ինչո՞վ է դա պայմանավորված. - իր գործունեությամբ - ..... - .....

Ամփոփելով գործնական աշխատանքի արդյունքները՝ կարող ենք ասել. լավագույն տարբերակն, իհարկե, հեղինակության ուժով կառավարելն է, բայց, իշխանություն կրողը հաճախ հարկադրված է լինում ուժ կիրառելու: Լավագույն կառավարումն այն է, երբ զուգակցվում են ուժն ու հեղինակությունը, օրենքն ու իրավունքը:

Տիգրան Մեծ արքայի մասին

Նա, ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով, ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով. չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը:

Մովսես Խորենացի, *Հայոց պատմություն*

Ասույթներ

Ով գիտությամբ և արդարությամբ է վարում իշխանությունը, բարի համբավ է ձեռք բերում, ինչպես գիտուն բժիշկը, որ գործով է իմաստուն և ոչ թե սոսկ անվամբ:

Հովհաննես Երզնկացի

Բարքերը մարդիկ են, օրենքները՝ երկրի բանականությունը: Բարքերը հաճախ ավելի դաժան են, քան օրենքները: Բարքերը՝ հաճախ անխոհեմ, հաղթում են օրենքներին:

Օնորե դը Բալզակ

Ինձ համար կարևոր չէ, թե ում կողմն է ուժը. կարևորն այն է, թե ում կողմն է իրավունքը:

Վիկտոր Հյուգո

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են, ձեր կարծիքով, իշխանության դրական ու բացասական կողմերը: Իշխանությունը առավելությո՞ւն է, արտոնությո՞ւն, թե՞ ...:
2. Ի՞նչ միջոցներով է իշխանությունն ազդում մարդկանց վարքագծի վրա:
3. Ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով է պետությունը կարգուկանոն հաստատում և պաշտպանում:
4. Ընթերցե՛ք ստորև բերված առակը և բացատրե՛ք դրա խորհուրդը:

Առյուծը, աղվեսը և մուկը

Առյուծը մի երինջ էր բռնել և նստած ուտում էր նրա տաք միսը: Աղվեսը փորսող տալով մոտեցավ նրան ու սկսեց աղերսել.

— Տե՛ր Առյուծ, վկա է աստված, որ ես քաղցից մեռնում եմ: Դու հզոր արքա ես, և առատ է քո բաժինը: Դու պարտավոր ես քո հպատակների մասին ևս հոգալ: Ուրեմն թո՛ւյլ տուր, ո՛վ արքա, քո բաժնի փշրանքներից մի փոքր ուտեմ, որ քաղցից չմեռնեմ:

Առյուծը պինդ կշտացավ և ծանր պառկեց հանգստանալու: Լսելով Աղվեսի աղերսանքը՝ նա ասաց.

— Մոտեցի՛ր, Աղվե՛ս, և կե՛ր իմ սեղանի մնացորդներից, որքան կամենում ես, և գլուխս մի՛ ցավեցրու քո լացուկոծով:

Աղվեսն ավելի խղճալի ձայնով ասաց.

— Սակայն ես վախենում եմ քեզանից, տե՛ր Առյուծ: Դու, իհարկե, չես ուզի սպանել ինձ, սակայն կնայես, կտեսնես, թե ինչ ախորժակով եմ ուտում քո որսի միսը, և

կբարկանաս ու ինձ խփելով կսպանես:

— Ուրեմն ի՞նչ անեմ, - հորանջում և հարցնում է Առյուծը: - Ասա՛, Աղվե՛ս, ի՞նչ անեմ, որ դու անվախ մոտենաս և ուտես, որքան կամենում ես: Ի՞նչ անեմ, որ դու չվախենաս ինձնից:

Աղվեսը, հազար տեղից կռանալով, կոտրատվելով, ավելի դառնաղի թախանձելով, ասաց.

— Որպեսզի դու, ո՛վ բարի Առյուծ, ո՛վ հզոր տեր, քո կամքից անկախ մեղք չանես՝ ինձ սպանելով, թո՛ւյլ տուր՝ ես քո թաթերը կապեմ, որպեսզի ապահով լինեմ, նոր միայն մոտենամ մսին: Այլապես ես, սարսափելով քեզնից, ոչինչ չեմ կարող ուտել: Օ՜, տե՛ր, կատարի՛ր խնդրանքս, չէ՞ որ դու հզոր ես ու բարի...

Առյուծը լսում է նրան, խղճում և մեծահոգաբար համաձայնում:

— Լավ,— ասում է,— եկ թաթերս կապի՛ր:

Աղվեսը, հազար օրհնություն տալով Առյուծին, վերցնում է երինջի տաք ու փափուկ աղիքները և դրանցով փաթաթելով Առյուծի թաթերը՝ միմյանց կապում: Առյուծը հանդարտ ննջում է, իսկ Աղվեսն սկսում է միս ուտել իր համար:

Արևն արագ չորացնում է Առյուծի թաթերին փաթաթված բարակ աղիքները, մտցնում մաշկի մեջ: Չորացած աղիքները սկսում են սաստիկ սեղմել Առյուծի թաթերը և ցավեցնել: Նա ահեղ մռնչում է, սակայն ոչ մի կերպ չի կարողանում ատամներով կրծել ու պոկել կապերը:

Առյուծը գալարվում է ցավից, խնդրում Աղվեսին, որ օգնի իրեն, սակայն վերջինս միայն հռհռում է և շարունակում լափել Առյուծի որսի մնացորդները: Կուշտուկուռ ուտելուց հետո մի մեծ կտոր միս էլ վերցնում է հետը և հեռանում՝ Առյուծին թողնելով մահացու տառապանքների մեջ: Այդ պահին Առյուծին է մոտենում մի գորշ Մուկ:

— Թո՛ւյլ տուր՝ ես քեզ ազատեմ, տե՛ր Առյուծ, - համարձակ ասում է Մուկը և կանգնում հետևի ոտքերին:

Մուկը մտնում է Առյուծի կապկպված թաթերի արանքը և սկսում կրծել չորացած աղիքե լարերը: Կրծում է, կրծում և Առյուծին ազատում է ստույգ մահից:

Հենց որ թաթերն ազատվում են, Առյուծն սկսում է ահուսարսափով փախչել: Մուկը նրա հետևից ձայն է տալիս.

— Ո՞ւր ես փախչում, տե՛ր Առյուծ, ինչո՞ւ:

— Փախչում եմ անապատ,— պատասխանում է Առյուծը:— Փախչում եմ այն աշխարհից, որտեղ ինձ կապկպողը Աղվեսն է, ազատողը՝ Մուկը:

Սերո Խանզադյան

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

- *Բերեք հասարակական առաջնորդի օրինակ ձեր կյանքից և ներկայացրեք այն հատկանիշները, որոնց համաձայն՝ նրան ընկալում եք որպես առաջնորդ:*

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

Ժողովրդավարական հասարակությունում առաջնորդությունը *հասարակական ազդեցության գործընթաց* է, որում անհատը կարողանում է համոզել կամ ազդել խմբին՝ որևէ համատեղ նպատակի հասնելու կամ հասարակական հիմնախնդիր լուծելու համար: Այդ գործընթացն իրականացվում է *հանրային առաջնորդների* կողմից, ովքեր իրենց գիտելիքների ու կարողությունների կիրառման և մարդկանց կամավոր մասնակցության միջոցով ձգտում են հասնելու ցանկալի արդյունքի:

Դիտարկենք առաջնորդությունն օրինակի միջոցով: Պատկերացրե՛ք, որ ուսուցիչն իր առջև խնդիր է դրել բարձրացնելու սովորողների առաջադիմությունը: Այս նպատակին հասնելու համար նա նախաձեռնում է հետևյալ գործողությունները.

- հարցազրույցներ է անցկացնում սովորողների և նրանց ծնողների հետ՝ առաջադրված խնդիրն ավելի լավ պատկերացնելու համար,
- բարելավում է առարկայի դասավանդման ծրագրումը՝ առավել համապատասխանեցնելով սովորողների կարիքներին,
- ուսման դժվարությունները հաղթահարելիս օժանդակում է սովորողների *ամբողջ* համակազմին,
- բարձրացնում է գնահատման համակարգի դերը՝ ուսման որակը լավացնելու նպատակով,
- օգնում է սովորողին «կառուցելու» սեփական ուսումնառությունը:

Այս քայլերով տեղի է ունենում *հանրային ազդեցության գործընթաց,* այսինքն՝ բարելավվում է սովորողի ուսումնառությունը: Տեղի է ունենում նաև առաջնոր-

Նելսոն Մանդելա

Եթե մարդու հետ խոսեք իրեն հասկանալի լեզվով, ապա դա կմտնի իր գլուխը: Եթե նրա հետ խոսեք իր լեզվով, ապա դա կմտնի իր սրտի մեջ:

դության գործընթաց: Առաջնորդի դերում հանդես է գալիս ուսուցիչը: Նրան աջակցող խմբերն են սովորողները և ծնողները: Կարող են այլ խմբեր ևս լինել:

Առաջնորդության կարևոր հատկանիշներից է խմբի անդամների *կամավոր մասնակցությունը:* Բերված օրինակում սովորողները պետք է ցանկանան, որ ուսուցիչը նախաձեռնի իրենց ուսման բարելավման գործընթացը, կամավոր միանան այդ գործին: Նրանք պետք է օգնեն ուսուցչին բացահայտելու իրենց ուսումնառության խնդիրները, որպեսզի վերջինս կարողանա գտնել «ճիշտ բանալիներ» այդ խնդիրների լուծման համար:

Առաջնորդն իր հերթին պետք է կարողանա իրավիճակի վերլուծություն կատարել, խմբի անդամների հետ քննարկել խնդրի լուծման այլ տարբերակներ և բացահայտել նրանց մոտեցումները: 18-րդ դարի ֆրանսիացի մտածող Շառլ Մոնտեսքյոն կարծում է, որ *«...եթե ուզում եք կառավարել մարդկանց, պետք է ոչ թե վանեք, այլ հերևեք նրանց»:*

Կարծիք կա, թե մարդը ծնվում է որպես առաջնորդ: Սակայն վերջին ժամանակների հասարակագետները նշում են, որ լավ առաջնորդներ չեն ծնվում, այլ դառնում են: Եթե անհատն ունի կամք և ձգտում, նա կարող է կրթության, ինքնազարգացման և փորձառության բարելավման միջոցով դառնալ արդյունավետ առաջնորդ:

Առաջնորդության՝ որպես հասարակական երևույթի մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ դա պետք է հանգեցնի հասարակության արժեքի բարձրացմանը, նպաստի *հանրային բարիքի աճին:* Այսինքն՝ առաջնորդը նպաստում է գիտելիքի աճին ու տարածմանը, նյութական բարիքի ստեղծմանն ու ավելացմանը, հասարակական կարգի պահպանմանն ու զարգացմանը, մարդու իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը:

Եվս մեկ կարևոր առանձնահատկություն պետք է քննարկել. առաջադրված հանրային խնդրի լուծման համար խիստ կարևոր է, որ խումբը հաջողության գրավական չհամարի գերազանցապես առաջնորդի հմայքը, բանիմացությունը և այլ հատկանիշներ: Կարևոր է, որ այդ հատկանիշները բերեն խմբի կազմակերպական ընդհանուր ջանքերի միավորմանը, ինչը կհանգցնի նաև

պատասխանատվության ընդհանուր գիտակցմանը:

Մարդիկ երբեմն առաջնորդությունը շփոթում են ղեկավարման հետ: Դրանք, ինչ խոսք, նմանություններ ունեն, սակայն միևնույն երևույթը չեն: Ղեկավարի գործն է ծրագրելը, կազմակերպելը և համակարգելը: Մինչդեռ առաջնորդի խնդիրն է ոգեշնչելն ու խթանելը:

Նոր ժամանակներում ղեկավարից պահանջվում էր արդյունավետորեն հետևել աշխատանքի կազմակերպմանը, մարդկանց միջև աշխատանքի ճիշտ բաժանմանը, հրամաններին հետևելուն, առաջադրանքների կատարմանը, արդյունքների ապահովմանը, աշխատանքի կատարմանը նախատեսված ընթացքով:

Մեր օրերում, երբ տնտեսության զարգացումը տեղի է ունենում առավելապես մարդկանց գիտելիքի շնորհիվ, աշխատողն այլևս արդյունաբերական մեքենայի մի «պտուտօղակը» չէ: Ղեկավարը պետք է ոչ միայն կազմակերպի աշխատանքը և բարձրացնի արդյունավետությունը, այլև զարգացնի թիմակիցների կարողություններն ու աշխատանքային տաղանդը, ոգեշնչի նրանց՝ արդյունքների հասնելու համար: Այդ դեպքում կարևորվում են յուրաքանչյուր անհատի գիտելիքներն ու կարողությունները:

Խմբային աշխատանք

Ընթերցեք և քննարկեք գրվածքը:

Առաջնորդության բացառիկ դրսևորումներ են ցուցաբերել Մահաթմա Գանդին, Մարտին Լյութեր Քինգը, Նելսոն Մանդելան և ուրիշներ, ովքեր բազմաթիվ մարդկանց օգնել են միավորվելու ընդհանուր նպատակի շուրջը և գտնելու այդ նպատակին տանող ուղիները: Օրինակ՝ «Մայքրոսոֆթ» ընկերության հիմնադիր և սեփականատեր Բիլ Գեյթսն իր ժամանակի զգալի մասն անցկացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների հետ՝ քննարկելով, թե ինչպես կարելի է կազմակերպության նոր արտադրանքը համապատասխանեցնել շուկայի պահանջներին և չափանիշներին: Որպես առաջնորդ՝ նա գիտի, որ հնարավոր չէ ամեն ինչ իմանալ: Ուստի նա պատրաստ է լսելու իր թիմի անդամների մոտեցումներն այն հարցերի վերաբերյալ, որոնց մասին ինքը քիչ գիտելիքներ ունի: Սա նշանակում է որոշումների կայացման գործընթացի պատասխանատվության կիսում թիմի անդամների միջև: Սակայն պետք է նկատել, որ արդյունքների համար գլխավոր պատասխանատուն այնուամենայնիվ առաջնորդն է: Այս դեպքում ասում ենք, որ անհատը դրսևորեց ժողովրդավարական առաջնորդության հմտություններ:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդավարական կամ *մասնակցային առաջնորդության* ժամանակ խմբի անդամները մասնակցում են որոշումների կայացմանը, իսկ *ժողովրդավար առաջնորդը* խմբի անդամներին որոշում կայացնելու հնարավորություն է ընձեռում: Խմբի անդամներն ազատորեն կարծիքներ են արտահայտում իրենց հետաքրքրող հարցերի և գաղափարների շուրջը՝ թողնելով վերջնական խոսքը առաջնորդին. նրանք զգում են իրենց ներգրավված լինելը, իսկ ստեղծագործական մտածողությունը խթանվում և պարգևատրվում է:

Ժողովրդավար առաջնորդները բնորոշվում են հետևյալ հատկանիշներով.

- գիտակցում են, որ մարդիկ պատրաստակամ են մասնակցելու, աջակցելու և գործելու, երբ տվյալ գործունեությունն իմաստավորված է իրենց համար,
- առաջինն են մուտք գործում դեռևս չուսումնասիրված, անհայտի աշխարհը և իրենց քաջությամբ ոգեշնչում մնացածներին,
- հասկանում են, որ կարող են սխալներ գործել կամ ձախողվել, սակայն ընդունում են, որ դրանք սովորելու նոր դռներ են բացում,
- կառչած չեն ընդունված կարծրատիպերին, և դրա շնորհիվ տեղ են թողնում նոր գիտելիքի համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Արդյոք համաձայն եք առաջնորդության բերված հատկանիշներին: Հիմնավորե՛ք պատասխանը:
2. Կարո՞ղ եք սահմանել ժողովրդավարական առաջնորդության լրացուցիչ հատկանիշներ:
3. Ներկայացրե՛ք յուրաքանչյուր սկզբունքին համապատասխան առաջնորդության օրինակներ:
4. Տպագիր և էլեկտրոնային մամուլից բերե՛ք ժողովրդավարական առաջնորդության օրինակներ: Ներկայացրե՛ք, թե ինչ հատկանիշներ են բերվում, որով հիմնավորվում են առաջնորդի հմտությունները:

ԴԱՍ 18 ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդավարություն բառը թարգմանված է հունարեն *դեմոկրատիա* բառից (դեմոս նշանակում է *ժողովուրդ, կրատոս՝ իշխանություն, վարչություն):*

Ժողովրդավարության էությունը բացատրելու բազմաթիվ փորձեր են արել տարբեր ժամանակների քաղաքական գործիչներն ու իմաստասերները: Թերևս ամենահայտնին ԱՄՆ–ի 16–րդ նախագահ Աբրահամ Լինկոլնի բնութագրումն է (1863 թ.)՝ *ժողովրդի կառավարում՝ ժողովրդի կողմից և ժողովրդի համար:*

Քննարկենք և փորձենք հասկանալ Լինկոլնի խոսքերը: Ի՞նչ է նշանակում՝

- *ժողովրդի կառավարում,*
- *ժողովրդի կողմից,*
- *ժողովրդի համար:*

Ամփոփելով քննարկումը՝ կարող ենք ասել, որ ժողովրդավարությունը իշխանության կազմակերպման ձև է, որի դեպքում ժողովուրդը՝

- համարվում է իշխանության աղբյուր,
- ունի պետական գործերին մասնակցելու իրավունք,
- ունի քաղաքացիական իրավունքներ և ազատություններ:

Ժողովրդավարությունն, այսպիսով, այն իշխանությունն է, որի դեպքում մարդկանց վարքագծի, նրանց գործունեության վրա ազդելու գլխավոր միջոցը ոչ թե բռնությունն է, այլ ժողովրդի կողմից ընտրված պետական մարմինների հեղինակությունը և բոլորի հավասարությունը օրենքի առաջ: Ժողովուրդն այդ դեպքում կարող է օգտվել իր իրավունքներից և ազատություններից:

Ժողովրդավարական պետություն ստեղծելու, ժողովրդաիշխանություն հաստատելու գաղափարը, որպես կանոն, ընդգրկվում է պետության հիմնական օրենքում՝ սահմանադրության մեջ: Մեր երկրի Սահմա-

նադրության մեջ նույնպես ամրագրված են այդ հիմնարար դրույթները:

«Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»: ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածն այսպիսով հավաստում է, որ ժողովուրդն իր առջև, ի թիվս այլ հիմնական ուղենիշերի, նպատակ է դրել մեր երկրում կառուցելու ժողովրդավարական, իրավական պետություն:

Սահմանադրության հաջորդ հոդվածն ամրագրում է. *«Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին»:* Իսկ ինչպե՞ս է ժողովուրդն իրականացնում իր իշխանությունը: Այդ հարցին պատասխանում է սահմանադրության նույն՝ երկրորդ հոդվածը. *«Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրություններով, հանրաքվեներով, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»:* Եվ վերջապես, կարևորագույն ևս մի դրույթ իրավաբանորեն պաշտպանում է ժողովրդի իշխանությունը. *«Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է»:*

Քննարկում

Ինչո՞ւ ենք համոզված, որ վերը բերված դրույթներն արտահայտում են ժողովրդի կամքը:

Համոզված ենք, որովհետև Հայաստանի ժողովուրդն է իր համընդհանուր կամքն արտահայտող քվեարկությամբ՝ հանրաքվեով, 1995 թ. հուլիսի 5–ին ընդունել մեր նորանկախ հանրապետության Սահմանադրությունը, իսկ դրանից տասը տարի հետո՝ 2005 թ. նոյեմբերի 27–ին, դարձյալ հանրաքվեով փոփոխություններ կատարել դրանում:

Շարունակե՛ք քննարկումը և փորձե՛ք բերել նաև այլ փաստարկներ:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՃՅՈՒՂԵՐԸ

Ժողովուրդը, Սահմանադրության վերը բերված դրույթներին համապատասխան, իր իշխանությունն իրականացնում է ինչպես ուղղակիորեն իր կողմից ընտրված Նախագահի և Ազգային ժողովի, այնպես էլ իշխանության՝ դրանց կողմից ձևավորված (նշանակված, հաստատված) այլ մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Պետական իշխանության համակարգում սովորաբար առանձնացվում է երեք հիմնական ճյուղ՝

- օրենսդիր,
- գործադիր,
- դատական:

Իշխանությունների բաժանման գաղափարն առաջիններից մեկն արծարծել է նոր ժամանակների ֆրանսիացի մտածող Շարլ Մոնտեսքյոն (1689–1755) իր «Օրենքների ոգու մասին» աշխատության մեջ: Մոնտեսքյոն նախապատվությունը տալիս էր կառավարման հանրապետական ձևին: Այդուհանդերձ, իր ժամանակի պետություններում հանրապետական ձևի հնարավորություն չտեսնելով, նա հանգում է սահմանադրական միապետության գաղափարին: Զարգացնելով անգլիացի նշանավոր մտածող և լուսավորական *Ջոն Լոքի* (1632–1704) ուսմունքը՝ Մոնտեսքյոն կարծում էր, որ սահմանադրական միապետության մեջ գործադիր իշխանությունը պետք է պատկանի միապետին, օրենսդիր իշխանությունը՝ ժողովրդի ընտրած ներկայացուցիչներին, իսկ դատարանը՝ վարչակազմին: Ջ. Լոքի և Շ. Մոնտեսքյոյի՝ *իշխանության բաժանման (տարանջատման)* գաղափարը հետագայում զարգացվեց նոր և նորագույն ժամանակների շատ իմաստասերների, իրավաբանների, քաղաքագետների աշխատություններում: Այդ գաղափարն ընկած է ժամանակակից ժողովրդավարական, իրավական պետությունների կառուցվածքի հիմքում: Դա հայտնի է նաև «զսպումների և հակակշիռների համակարգ» անունով: Այսինքն՝ պետական իշխանության կազմակերպման այդպիսի համակարգում

իշխանության մի ճյուղը հակակշռում է մյուսին, զսպում վերջինիս չափազանց հզորացումը: Այդպիսով որոշակի հիմքեր են ստեղծվում պետական իշխանության տարբեր ճյուղերի միջև հնարավորինս ներդաշնակ, օրինական փոխհարաբերությունների հաստատման, իշխանության չարաշահումից խուսափելու և դրանով իսկ ժողովրդավարության կայացման համար:

Ժամանակակից ժողովրդավարական պետություններում օրենսդիր իշխանությունը ներկայացնում է խորհրդարանը՝ ներկայացուցչական ընտրովի մարմինը: Մեր երկրում, ինչպես հայտնի է, դա կոչվում է Ազգային ժողով: Ի դեպ, այդպես է կոչվում նաև Ֆրանսիայի խորհրդարանը: ԱՄՆ–ում, օրինակ՝ օրենսդիր մարմինը Կոնգրեսն է: Դա, ինչպես բազմաթիվ այլ երկրներում, երկու պալատից է կազմված՝ Ներկայացուցիչների պալատ և Սենատ: Ներկայացուցիչների պալատի անդամներն ընտրվում են ընտրատարածքներից և ներկայացնում հավասար թվով ընտրողների: Սենատն ընտրվում է նահանգներից. յուրաքանչյուր նահանգից ընտրվում է 2 պատգամավոր (սենատոր)՝ անկախ նահանգի մակերեսից, բնակչության թվաքանակից և այլ հատկանիշներից: Օրենսդրական նախագիծը օրենք դառնալու «ճանապարհին» կարող է Ներկայացուցիչների պալատից անցնել Սենատ և հակառակը: Այսպիսով օգտագործվում է «երկրորդ ընթերցման» առավելությունը, ինչը թույլ է տալիս ընդունել խորապես մտածված որոշումներ: Միայն Կոնգրեսի երկու պալատների կողմից վերջնական տեսքով ընդունված օրինագիծն է ներկայացվում երկրի նախագահի հաստատմանը, որից հետո դա օրենքի ուժ է ստանում:

Պետության ընթացիկ կյանքը ղեկավարում է ԱՄՆ–ի նախագահին կից գործող կառավարությունը, որը պատասխանատու չէ Կոնգրեսի պալատների առջև, և Կոնգրեսը չի կարող անվստահություն հայտնել կառավարությանը: Սակայն գործադիր իշխանության համար զսպող դեր է կատարում այն, որ նախ՝ Կոնգրեսը հաստատում է նախագահի կողմից արված նշանակումների մեծ մասը: Երկրորդ՝ Կոնգրեսը որոշակի վերահսկիչ

գործառույթներ ունի պաշտոնատար անձանց գործողությունների օրինականությունը ստուգելու առումով: Եվ վերջապես՝ Կոնգրեսն ունի ֆինանսական լայն լիազորություններ կառավարության առանձին ծրագրերի ուղղությամբ ներդրումները քննարկելու առումով:

Ֆրանսիայում, ի տարբերություն Միացյալ Նահանգների, կառավարությունը կրկնակի ենթակայության տակ է: Նախագահն է ձևավորում և վերահսկում կառավարությունը, սակայն վերջինս պատասխանատու է նաև Ազգային ժողովի առջև, որը կարող է անվստահություն հայտնել նրան: Իր հերթին Ֆրանսիայի նախագահը կարող է արձակել Ազգային ժողովը:

Դատական իշխանությունը պետք է անկախ լինի իշխանության մյուս ճյուղերից, և գործադիր իշխանությունը չպետք է որևէ կերպ փոխարինի դատական իշխանությանը: Քաղաքացին պետք է իրավունք ունենա բողոքարկելու ինչպես պաշտոնատար անձանց, այնպես էլ իշխանության մարմինների գործողությունները անկախ դատարանում: Ի վերջո, ցանկացած իրավական պետությունում գործում է *սահմանադրական դատարան,* որը քննարկում է օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը և որոշում դրանց համապատասխանությունը սահմանադրությանը:

Քննարկում

Ի՞նչ եք կարծում, մեր հանրապետությունը որքանո՞վ է համապատասխանում ժողովրդավարական պետության չափանիշներին: Ի՞նչն է, ձեր կարծիքով, առաջնահերթ բարելավման կարիք զգում:

- *Ստորև բերվող ասույթներից որն է, ձեր կարծիքով, ավելի դիպուկ արտահայտում ժողովրդավարության էությունը:*

Ասույթներ

Ժողովրդավարություն նշանակում է պահպանել խաղի կանոնները, նույնիսկ եթե մրցավարը չի հետևում:

Մանֆրեդ Հաուման

Կյանքն ազատության մեջ դյուրին չէ, և ժողովրդավարությունն էլ կատարյալ չէ:

Ջոն Քենեդի

Սխալ է հարցնել, թե ով է ղեկավարելու: Վատ կառավարությունը հեռացնելու կարողությունը բավարար է: Սա ժողովրդավարություն է:

Ալֆրեդ Էմանուել Սմիթ

Մարդու՝ արդարության ընդունակությունը հնարավոր է դարձնում ժողովրդավարությունը, իսկ մարդու հակումը անարդարության նկատմամբ անհրաժեշտ է դարձնում ժողովրդավարությունը:

Ռեյնոլդ Նեյբուր

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբևէ փորձել եք փոփոխություն մտցնել հասարակական կարծիքի մեջ: Նամակ գրել եք որևէ պաշտոնյայի: Օգնել եք կազմակերպելու բողոքի ցույց կամ որևէ այլ միջոցառում: Որո՞նք են եղել այդ գործունեության արդյունքները:
2. Կուզենայի՞ք արդյոք որևէ բնագավառում փոփոխություններ կատարել: Հատկապես ո՞ր: Ինչո՞ւ եք դա նախընտրում:
3. Պատկերացրե՛ք, որ դուք ընտրվել եք ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր: Օրենսդրական ի՞նչ փոփոխություններ կառաջարկեիք: Ներկայացրե՛ք ձեր կարծիքով առավել կարևոր երեք առաջարկություն:

ԴԱՍ 19-20 ԿՈՌՈՒՊՑԻԱ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ

ԿՈՌՈՒՊՑԻԱ

Կոռուպցիա (corruptio) լատիներեն բառը նշանակում է «խեղում, այլասերում, փչացում, քայքայում, կաշառում»: Կոռուպցիան հանցագործություն է, որով պետական կառավարման գործառույթներով օժտված պաշտոնատար անձն ի պաշտոնե ստացած դիրքը, իրավունքներն ու հնարավորություններն օգտագործում է շահադիտական նպատակներով՝ առաջնորդվելով անձնական կամ խմբային շահերով: Դա հասարակական իշխանության չարաշահումն է, որը վնասում է անհատի, հասարակության, պետության շահերին և ի վերջո կազմալուծում իշխանությունը: Կոռուպցիան գալիս է վաղ ժամանակներից: Նրա պատմական արմատները հանգում են բարեհաճության հասնելու համար նվերներ տալու սովորությանը: Թանկարժեք նվերն առանձնացնում էր տվյալ մարդուն մյուսներից և նպաստում այն բանին, որ նրա խնդրանքը կատարվի: Ուստի հին հասարակությունում սեփական խնդիրը լուծելու համար քրմերին կամ առաջնորդներին վճարելը համարվել է համընդհանուր կանոն:

Կոռուպցիայի և դրա դեմ պայքարի մասին առաջին հիշատակումը վերագրվում է Ք.ա. XXIV դարին, երբ շումերական Լագաշ քաղաքի (ներկայիս Իրաքի տարածքում) արքա Ուրուկագինը պետական կառավարման մեջ բարեփոխումներ է կատարել պաշտոնյաների և դատավորների՝ պաշտոնական դիրքը չարաշահելը կանխարգելելու նպատակով: Սակայն Հին աշխարհում կոռուպցիայի դեմ պայքարը սովորաբար չէր բերում ցանկալի արդյունքների: Հին հնդկական «Արտաշաստրա» տրակտատի հեղինակի կարծիքով՝ «ավելի հեշտ է գուշակել թռչունների ուղին երկնքում, քան խորամանկ պաշտոնյայի թաքնված արարքները»: Կաշառակերությունը պատժելի արարք է համարվել նաև Հին

աշխարհում: Դեռևս Հին Բաբելոնի արքա Համուրապիի օրենքներում (Ք.ա. 18–րդ դար), տեղեկություններ կան զինվորականներին կաշառակերության համար մահապատժի ենթարկելու վերաբերյալ:

Հին Կտակարանում Մովսես մարգարեի սահմանած օրենքները անթույլատրելի են համարում դատավորների կողմից կաշառք վերցնելը: Դատավորներին պարտավորեցվում է «իրավունքը չծռել, աչառություն չանել, նվերներ չառնել, որովհետև նվերները կուրացնում են աչքաբացներին և շուռ են տալիս արդարի գործը»:

Կաշառակեր դատավորների նկատմամբ առանձնապես անողոք են եղել պարսիկները: Պարսկաստանում մահապատժի է ենթարկվել կաշառառու դատավորը: Վերջինիս մաշկահան են արել և այդ մաշկով պատել նույն դատավորի աթոռը, որպեսզի այլևս ոչ մի նոր դատավոր չհամարձակվի նման արարք կատարել:

Գործնական առաջադրանք

Ընթերցե՛ք ստորև բերված նյութերը, քննարկե՛ք դրանցում նկարագրված իրավիճակները և պատասխանե՛ք հարցերին:

1. Երթևեկության կանոնները խախտելու համար ավտոտեսուչը կանգնեցնում է նախարարության մի բարձրաստիճան պաշտոնյայի և խնդրում ներկայացնել փաստաթղթերը: Վարորդական իրավունքի հետ պաշտոնյան ներկայացնում է նաև իր ծառայողական վկայականը: Տեսուչը նայում է փաստաթղթերին և բաց թողնում պաշտոնյային՝ զգուշացնելով այլևս խախտում չանել:
2. Մի խումբ մարդիկ առևանգել են «Կ» քաղաքի, «Ճ» վարչության պետի տղային՝ նրա դիմաց պահանջելով անհապաղ հրաժարվել զբաղեցրած պաշտոնից: Հակառակ դեպքում վտանգի կենթարկվի տղայի կյանքը:
3. Տիկին Անահիտը մի մեծ տուփ շոկոլադ և իր պարտեզի վարդերի մի փունջ է նվիրում իր որդուն լուրջ հիվանդությունից բուժած բժշկին:
4. Ուսումնական տարվա ավարտի կապակցությամբ դասարանը ծաղկեփունջ է նվիրում դասղեկին:
5. Համալսարանի դասախոսը գիրք է հրատարակում և ստիպում ուսանողներին գնել այդ գիրքը, այլապես նրանցից ոչ մեկը դրական գնահատական չի ստանա:
6. Ընտանիքն ուներ երեք անդամ՝ հայրը, մայրը և որդին: Նրանք առաջնորդ-

վում էին որոշակի պայմանավորվածությամբ: Օրինակ՝ հերթով լվանում էին ափսեները, իսկ տղային երեկոյան չէր թույլատրվում հեռուստացույց դիտել: Իհարկե, ոչ ոք չէր սիրում աման լվանալ, և ամենից շատ՝ հայրը: Մի անգամ, երբ մայրը տանը չէր և հոր՝ ամանները լվանալու հերթն էր, տղան ասում է. «Եթե ես քո փոխարեն լվանամ ամանները, թույլ կտա՞ս կինո դիտել»: Հայրը համաձայնվում է:

- *Նշված իրավիճակները արտահայտո՞ւմ են կոռուպցիայի երևույթներ, թե՞ ոչ:*
- *Այդ իրավիճակներում բոլո՞ր են արդյոք կոռուպցիայի մասնակիցներ:*
- *Ովքե՞ր պետք է, ձեր կարծիքով, պատասխանատվություն կրեն:*

Կոռուպցիայի հիմնական պատճառը մարդկային եսասիրությունն ու ագահությունն է: Այդպիսի վարքագծի գայթակղությունը մեծանում է սպառողական պահանջների աճի հետ, երբ սեփական բարեկեցությունն ավելի է կարևորվում, քան հասարակության բարեկեցությունը, որը գրեթե մոռացության է մատնվում: Դրա հետևանքով պաշտոնյաներն անձնական բարեկեցության համար սկսում են չարաշահել սեփական պաշտոնը:

Կոռուպցիան հասարակական կյանքի տարբեր բնագավառներում անցանկալի հետևանքներ է ունենում: Օրինակ՝

- հնարավորություն է տալիս հարկերից խուսափելու առավել ունևորներին՝ հիմնական բեռը գցելով հասարակության ավելի անապահով խմբերի վրա,
- խարխլում է հանրային գիտակցությունը, առաջացնում դժգոհություն, մեծացնում հանրային լարվածությունը,
- սպառնում է ժողովրդավարությանն ու օրինականությանը,
- թուլացնում է իշխանության նկատմամբ հավատը և իջեցնում մարդկանց բարոյական գիտակցության մակարդակը,
- նվազեցնում է քաղաքացիների մասնակցությունը հասարակական գործունեությանը և հետաքրքրությունը պետական իշխանության մարմինների աշխատանքի հանդեպ,
- հանգեցնում է կազմակերպված հանցագործությունների աճին:

Մարդկանց վարքագիծը, ինչպես հայտնի է, կարգավորվում է ինչպես իրավական, այնպես էլ բարոյական նորմերով: Բարոյականությունը կարգավորում է մարդկանց հարաբերությունները համոզմունքների, արժեքների միջոցով և հիմնվում է հասարակական կարծիքի վրա: Իրավական նորմերը արտահայտվում են օրենքներում և պարտադիր են բոլորի համար: Եթե իրավական նորմերը հենվում են ուժի հեղինակության վրա, ապա բարոյական կանոնները՝ հեղինակության ուժի վրա:

Քննարկում

- *Ինչ եք կարծում, կոռուպցիան ավելի շատ դատապարտվում է բարոյական, թե՞ իրավական նորմերով:*
- *Մեկնաբանե՛ք ասույթը. «Կաշառքը ձանապարհ է բացում հանցավոր գործունեության համար»:*

Գործնական աշխատանք

Տետրում լրացրե՛ք աղյուսակը:

Կոռուպցիայի դրսևորման մեկ օրինակ	Կոռուպցիայի մեկ պատճառ	Կոռուպցիայի դրական մեկ կողմ	Կոռուպցիայի մեկ հետևանք	Կոռուպցիայի կանխարգելման մեկ միջոց

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է կոռուպցիան:
2. Որո՞նք են, ձեր կարծիքով, կոռուպցիայի առաջացման պատճառները:
3. Կարելի՞ է արդյոք նշել կոռուպցիայի գոյության համար մեղավորների ինչ-որ շրջանակ:

ԹՐԱՖԻՔԻՆԳ

Մարդու կողմից մարդու շահագործումը բավական հին երևույթ է: Դրա հնագույն տարատեսակը ստրկությունն է: Հին Հունաստանում կամ Հռոմում, օրինակ՝ ստրուկներին շահագործելն ու որպես ապրանք վաճառելը համարվել է բնականոն երևույթ: Ստրուկները չեն ունեցել անձնական կյանքի և ունեցվածքի իրավունք, ավելին՝ իրենք են եղել ուրիշի ունեցվածքի մի մասը: Մարդկությունը հետագայում հրաժարվել է ստրկությունից, քանի որ անձնական շահագրգռություն չունեցող ստրուկի աշխատանքն աստիճանաբար դարձել է ոչ շահավետ՝ տերերին ստիպելով գտնել նրան շահագրգռելու եղանակներ: Այդ նպատակով աստիճանաբար ազատություն են շնորհել ստրուկներին՝ նրանց մղելով արդյունավետ աշխատանքի: Ցավոք, քաղաքակրթության զարգացման որևէ փուլում չի կարելի խոսել ստրկությունից զերծ աշխարհի մասին, քանի որ ստրկության այս կամ այն տարատեսակը միշտ առկա է եղել: Արևելյան երկրներում տարածված է եղել սեռական շահագործումը. հարեմներում պահվող կանանց մեծ մասն, ըստ էության, ստրկացված է եղել:

Այնուամենայնիվ, կա մի սկզբունքային տարբերություն դասական ստրկության ու մարդու ժամանակակից շահագործման միջև: Եթե դասական ստրկությունը ժամանակի երկրների իրավունքի համակարգերում այս կամ այն կերպ օրինականացվել է, այդ պատճառով երբեմն անվանվում է օրինական ստրկություն, ապա թրաֆիքինգն օրենքից դուրս է ամեն դեպքում. դա անօրինական ստրկություն է: Եթե անցյալի ստրկատերերը բացեիբաց ցույց էին տալիս իրենց ստրուկներին, հպարտանում նրանց քանակով և կարողություններով, ապա նորօրյա «ստրկատերերը» թրաֆիքինգի ապօրինի լինելու պատճառով ամեն կերպ ձգտում են թաքցնելու նրանց այդպիսին լինելը: Նրանք, որպես կանոն, թրաֆիքինգի զոհերին պահում են, օրինակ՝ նկուղներում, անտառներում կազմակերպված «աշխատանքային ճամբարներում» կամ էլ, եթե զոհը, օրինակ՝

տնային ծառայող է, պարզապես քողարկում են այն փաստը, որ ծառայողն ըստ էության ստրուկ է, քանի որ չի վարձատրվում աշխատանքի դիմաց, չունի հանգստյան օրեր, ենթարկվում է ծեծի ու սպառնալիքների և այլն: *Թրաֆիքինգ* երևույթը երբեմն էլ գոյատևում է իշխանության պատասխանատու ներկայացուցիչների «աչք փակելու» հետևանքով: Վերջիններս, կաշառվելով մարդկանց շահագործողների կողմից, այլևս չեն նկատում, թե ինչ է կատարվում, օրինակ՝ այս կամ այն հյուրանոցում կամ շինարարական տեղամասում, սահմանային անցագրային հսկումների ժամանակ կարծես չեն տեսնում ակնհայտ կեղծ փաստաթղթերը և այլն:

Թրաֆիքինգը համարվում է 21–րդ դարի ստրկություն. դա հաճախ անվանում են «սպիտակ ստրկություն»: Ի թիվս այլ հիմնախնդիրների՝ մեր ժամանակներում ահազնացող է դառնում թրաֆիքինգի երևույթը:

Գործնական աշխատանք

Փորձենք աղյուսակի միջոցով ներկայացնել թրաֆիքինգ իրականացնողների գործողությունները, իրականացման եղանակները և նպատակները:

Թրաֆիքինգ իրականացնողների գործողությունները	Թրաֆիքինգի իրականացման եղանակները	Թրաֆիքինգ իրականացնելու նպատակները
• հավաքագրում • տեղափոխում • փոխանցում • պահում • ընդունում • թաքցնում • ստացում	• սպառնալիքի գործադրում • ուժի կիրառում • հարկադրանքի այլ միջոցների կիրառում (փաստաթղթերի կեղծում կամ առգրավում) • առևանգում • խարդախություն • խաբեություն • պաշտոնական դիրքի չարաշահում • զոհի վիճակի խոցելիության չարաշահում • գումարների տրամադրում • կաշառում • անձի նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի ձեռքբերում	• մարմնավաճառառության նպատակներով այլ անձանց շահագործում • սեռական շահագործման այլ ձևեր • հարկադիր աշխատանք կամ ծառայություն • ստրկություն կամ ստրկությանը հավասարազոր վիճակ • տաժանակիր աշխատանք • օրգանների կորզում

Շահագործման նպատակով մարդու՝

- **հավաքագրումը** դրսևորվում է տուժողին տարբեր եղանակներով (բռնությամբ, դրա գործադրման սպառնալիքով, խաբեությամբ և այլն) մարդկանց առևտրի մեջ ներգրավված անձանց կազմում ընդգրկելով (օրինակ՝ իրր աշխատանքի նպատակով արտասահման մեկնողների ցուցակում մտցնելով, կեղծ աշխատանքային պայմանագիր կնքելով և այլն).
- **փոխադրումը** տուժողին շահագործելու նպատակով մի վայրից մեկ այլ վայր տեղափոխելն է.
- **հանձնումը** դրսևորվում է տուժողին համապատասխան անձանց (ընդունողների) տրամադրության տակ թողնելով.
- **թաքցնումը** տուժողին մեկուսացնելն է, նրա գտնվելու վայրը գաղտնի պահելը.
- **ստացումը** դրսևորվում է տուժողին այլ անձանցից ընդունելով, սեփական տրամադրության տակ թողնելով:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

- *Կարդացեք լրացուցիչ նյութը (հատված «Անահիտ» հեքիաթից) և փորձեք պատասխանել ստորև բերված հարցերին:*

Ղազարոս Աղայան, «Անահիտ» (հատված հեքիաթից)

...Վաղինակը գնաց, էլ ետ չեկավ: ...

Վաղինակի այդպես անհետ կորչիլը մեծ ցավ պատճառեց թագավորին: Նա ցավում էր ոչ միայն նրա համար, որ նրան որդու պես էր սիրում, այլև նրա համար, որ իր երկրի մեջ մի այդպիսի անսովոր բան էր պատահում, և ինքը չէր կարողանում հետքը գտնել:

Այս դեպքից հետո շատ չանցած՝ թագավորն ու թագուհին վախճանվեցան՝ խորին ծերության հասած:

Վաչագանը, իր նախնյաց գահը բարձրանալով, ուզեց իր երկիրը այնպես բարեկարգել, որ էլ ոչ մի հոգի ոչ մի բանից դժգոհ չլինի, ամենքն էլ ուրախ լինին, ամենքն էլ բախտավոր: Իր ամենամոտիկ խորհրդակիցը Անահիտն էր: Նախ նրա հետ էր խորհրդակցում միշտ և հետո ժո-

ղովրդից խելացի մարդկանց հրավիրում խորհրդի և նրանց հայտնում իր միտքը: Բայց Անահիտը այսքանը բավական չհամարեց և մեկ օր նրա հետ սկսեց այսպես խոսիլ.

— Տեր իմ թագավոր, ես տեսնում եմ, որ դու քո երկրիդ մասին մանրամասն ու ստույգ տեղեկություններ չունես: Քո հրավիրած մարդիկ ամեն բան ուղիղը չեն ասում: Նրանք քեզ միամտացնելու և ուրախացնելու համար ասում են՝ ամեն բան լավ է ու կարգին, ամենքն էլ գոհ են իրենց վիճակից:

... Վաչագան թագավորը, հասարակ շինականի հագուստով ծպտված, ճանապարհ ընկավ դեպի իր երկրի հեռավոր կողմերը: Շատ բան տեսավ, շատ բան լսեց, բայց ամենից հետաքրքիրն այն էր, ինչ որ նա տեսավ իր վերադարձին Պերոժ քաղաքում:

Քաղաքի կենտրոնում կար մի շատ ընդարձակ հրապարակ, որ քաղաքի շուկան էր, նրա չորս կողմն էին բոլոր արհեստավորների և վաճառականների խանութները:

Մի օր այդ հրապարակում նստած էր Վաչագանը, մեկ էլ տեսավ՝ ահա մի խումբ մարդիկ են գալիս ու բերում են իրենց հետ մի փառավոր և սպիտակ մորուքով ծերունի՝ աջ ու ձախ բազուկները բարձրացրած: Ծերունին շատ ծանր էր գալիս, նրա առջև սրբում էին ճանապարհը և աղյուսներ դնում ոտների տակին: Վաչագանը մոտեցավ մի մարդու և հարցրեց, թե ով է այդ ծերունին: Մարդը պատասխանեց.

— Սա մեր մեծ քրմապետն է, մի՞թե չես ճանաչում: Տես՝ որքան սուրբ է, որ ոտը գետնին չի դնում, որ չլինի թե մի որևիցե միջատ ընկնի ոտքի տակը և սպանվի:

Հրապարակի ծայրում մի կարպետ փռեցին, և քրմապետը չոքեց նրա վրա, որ հանգստանա: Վաչագանը գնաց նրա դիմացը կանգնեց, որ տեսնի՝ ինչ է խոսում այդ մարդը կամ ինչ է անում: Քրմապետը շատ սրատես էր. նա էլ Վաչագանին նայեց և նկատելով նրա օտարական լինելը՝ ձեռով արավ, որ մոտենա իրեն: Վաչագանը մոտեցավ:

— Դու ո՞վ ես, ի՞նչ գործի ես,— հարցրեց քրմապետը:

— Ես մի օտար բանվոր եմ,— պատասխանեց Վաչագանը.— եկել եմ այս քաղաքը՝ մշակության:

— Շատ լավ, կգաս ինձ հետ. ես քեզ գործ կտամ և լավ կվարձատրեմ:

Վաչագանը գլուխ տալով համաձայնեց և գնաց կանգնեց նրա հետ եկած մարդկանց մոտ:

Քրմապետն իր մոտ եկած քուրմերին մի քանի խոսք փսփսաց, և նրանք ցրվեցան այս ու այն կողմ, ապա մի քանի րոպեից վերադարձան այլևայլ պաշարներով՝ մշակների շալակը տված:

Երբ որ բոլոր քուրմերը եկան, քրմապետը վեր կացավ և միևնույն հանդիսավորությամբ ճանապարհ ընկավ դեպի իր բնակարանը: Վաչագանն էլ լուռ ու մունջ հետևեց նրան՝ հետաքրքրությունից շարժված, որ տեսնի՝ ինչով են զբաղված այդ քուրմերը, կամ ինչ մարդ է քրմապետը, ինչ բարեգործություններ ունի, որ այդպես սուրբի պես պաշտվում է: Այսպես գնացին մինչև քաղաքի ծայրը:

Այդտեղ քրմապետը օրհնելով ետ դարձրեց ճանապարհ դնող ջերմեռանդ կռապաշտներին. մնացին միայն իր քուրմերը և բեռնակիր մշակներն ու Վաչագանը: Նրանք շարունակեցին իրենց ճանապարհը և հեռանալով քաղաքից մոտ երկու վերստ՝ հասան մի պարսպապատ շենքի և կանգ առան նրա երկաթե դռան մոտ: Քրմապետն իր գրպանից հանեց մի ահագին բանալի, բաց արավ դուռը և ամենին ներս անելով՝ կրկին կողպեց: Այստեղ Վաչագանը մի անսովոր սարսուռ զգաց՝ տեսնելով, որ այստեղից իր կամքով դուրս գնալու

հնար չի ունենալու: Վաչագանի հետ եկած մշակներն էլ առաջին անգամ էին մտնում այս շենքի մեջ: Նրանք ամենքն էլ, իրար երեսի նայելով, սկսեցին փսփսալ, թե՝ ո՞ւր բերին մեզ այս մարդիկ:

Վերջապես պարսպի կամարակապ ճանապարհն անցնելուց հետո նրանց առջև բացվեց մի ընդարձակ հրապարակ, որի մեջտեղը կար մի գմբեթահարկ մեհյան՝ մանր խուցերով շրջապատված: Մշակների բեռները ցած դնել տվին այդ խուցերի մոտ, և նրանց Վաչագանի հետ միասին քրմապետը տարավ մեհյանի մյուս կողմը, այնտեղ բաց արավ մի նոր երկաթի դուռ և ասաց.

— Գնացեք ներս, այդտեղ ձեզ գործ կտան:

Նրանք մոլորվածի պես լուռ ու մունջ ներս մտան, և քրմապետն այդ դուռն էլ փակեց նրանց հետևից: Այստեղ մեր օտարականները նոր ուշքի եկան, նոր աչք բաց արին և տեսան, որ մի ստորերկրյա ճանապարհի վրա են կանգնած:

— Տղե՛րք, ի՞նչ տեղ ենք մենք, չգիտե՞ք,— հարցրեց Վաչագանը:

— Ես գիտեմ, որ մենք թակարդի մեջ ենք ընկել, էլ այստեղից չենք ազատվի,— ասաց մեկը:

— Բայց չէ՞ որ այս մարդը սուրբ է, մի՞թե այդպես բան կանի, - ասաց մի ուրիշը:

— Ինչո՞ւ չի անիլ, երևի այս սուրբ մարդը գիտե, որ մենք մեղավոր ենք, սրա համար մեզ բերեց գցեց քավարանը, որ մեղքերս ապաշխարենք:

— Տղե՛րք, կատակի ժամանակ չէ,— ասաց Վաչագանը:— Ես կարծում եմ, որ այդ դաժան ծերունին սուրբի անուն առած մի զարհուրելի դև է, և մենք կանգնած ենք այժմ նրա դժոխքի ճանապարհի վրա:

... Այդ ճանապարհով բավականին առաջ գնացին, և հանկարծ նրանց աչքին մի ճրագի աղոտ լույս երևաց: Գնացին դեպի ճրագը, և նրանց առջև բացվեց մի լայն քարահատակ, որի չորս կողմից լսվում էին խառնաշփոթ աղաղակներ: Վեր նայեցին և տեսան, որ մի արհեստական քարայրի մեջ են: Դա շինված էր ցորենի հորի պես. վերևից սկսել էին փորել ժայռը և որքան ցած էին իջել, այնքան լայնացրել էին, և այս կերպով միապաղաղ քարի մեջ շինել էին մի ստորերկրյա գմբեթաձև ընդարձակ սրահ:

Մեր կալանավորները մի կողմից՝ ապշած զննում էին անելանելի բանտը, մյուս կողմից՝ խլշած ականջ էին դնում, որ տեսնեն՝ որտեղից էին գալիս խառնաշփոթ ձայները: Հենց այս միջոցին նրանց դիմացը երևաց մի ստվեր, որ հետզհետե մոտենալով ու թանձրանալով՝ մարդու նմանություն առավ....:

Հարցեր լրացուցիչ նյութի վերաբերյալ

1. **Ովքե՞ր էին մարդկանց շահագործման զոհերը:**
2. **Ի՞նչ գործողություններ էին կիրառվում նրանց հանդեպ:**
3. **Ո՞րն էր շահագործման նպատակը:**
4. **Որո՞նք էին շահագործման հետևանքները:**
5. **Ինչպե՞ս կշարունակեիք Վաչագանի պատմությունը, եթե դուք լինեիք հեքիաթի հեղինակը: Փորձե՛ք ձեր հորինած պատմությունը համեմատել հեքիաթի բնագրում նկարագրվածի հետ:**

Իշխանության ներկայացուցչի գործունեության գնահատում

• *Դասի ընթացքում կուսումնասիրեք և կգնահատեք իշխանության որևէ ներկայացուցչի գործունեությունը:*

Մեր առօրյա կյանքի վրա իր անմիջական ազդեցությունն ունի իշխանության տարբեր մարմինների ներկայացուցիչների գործունեությունը: Պաշտոն զբաղեցնելը նրանց լիազորում է կարգավորելու մեր կյանքին առնչվող հարցեր: Հետևաբար նրանց կատարած աշխատանքի որակից է կախված, թե մեր կյանքը կդառնա հեշտ ու հետաքրքիր, թե՞ դժվար և տհաճ:

- Փորձենք ուսումնասիրել իշխանության մարմնի (ներկայացուցչի) գործունեությունը՝ դիտարկելով տվյալ պաշտոնին առնչվող պարտականությունները և այդ պարտականությունների կատարման համար անհրաժեշտ որակավորումների շրջանակը:
- Ընտրենք իշխանության որևէ մարմնի ներկայացուցչի և ուսումնասիրենք նրա գործունեությունը՝ ելնելով աղյուսակում բերված չափանիշներից:
- Տվյալ պաշտոնյայի կատարած աշխատանքն ուսումնասիրելիս կարելի է տեղեկություններ ձեռք բերել անձամբ իրենից, այլ գործընկերներից, համայնքի ներկայացուցիչներից, ուսուցիչներից, տպագիր, էլեկտրոնային և այլ աղբյուրներից: